



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

4764-  
4766

282

9-19

1868

2010


சாஸ்திர சுவாமிநாதர்

1.

1097  
p 150

ԻՐԱԽԱԿՈՆ





ՈՒՂԵՐՁ

ԱՌ ԲԱՐՁՐ ՍՐԲԱ ՁԱՆ

Տ. Տ. ԱՆԳԻՒՄ

ԱՐԲ ԵՊԻՍՈՊՈՍ

ՏԱՄԱՆ Գ ԱՂԱԿԵԱՆՅ

Ե Ի

ԱՌ ԱԶՆՈՒԱԿԱՆ

ՅԱՐՈՒԹԻՒՆ


ՄԵՆԱՌԻՆ ԱԶԳԱՍԻ ԻՇԽԱՆ

Գ ԱՂԱԿԵԱՆ

ՅԱՏՈՒԿ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՅՅ

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԳՐՈՑՍ

ՀՈՒՄԱՆԻՏԱՐԻ



282  
2-19 ✓

150

# ՀՈՒՆՆԵՐ

ԻՆՏԵՆՍԻՎ ՄԱՐԿԵՏԻՆԳ ԵՒ  
ԲԵՆԵՄԱՆՆԵՐ ԴԱՏԱՆՈՒԹԵԱՆՑ ՄԱԿԵՏԻՆԳ  
ԳՐԻՆ ԳՐԱՑ ԳՆՆՈՒԹԻՒՆ



ԿՐԻՆՆԵՐ

ՅԱՆՆԵՐԻ ՊՐԻՆՏԻՆԳ Ս. ԿՐԻՆՆԵՐ

ՏԵՐՈՑԵՆՑ

ՀՆՏՈՒ Լ.

2001

ՏՊԵՍՆԻ ԻՆՏԵՆՍԻՎ ՄԱՐԿԵՏԻՆԳ

Ի ՏՊԵՍՆԻ Ց. ՏԵՐՈՑԵՆՑ

1868

Printed in Turkey

10977

ՀԱՒԱՆՈՒԹԵԱՄԲ

Տ. Տ. ԳԼՈՒԿՆԻ Բ.

ՍՐԲԱԶԱՆ ՎԵՆԵՓԱՌ ԳՆԹՈՒՂԻ ԳՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ե Ի

Ի ՊԱՏՐԻԱՐԻՆԻ ԳԵՅՆ ՍՐՈՑ ԵՐՈՒՍԱԼԵՄԻ

Տ. Տ. ԼԱՄՆԵԱՑ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐԻ ԵՊԵՄԿՐՈՍԻ

Ե Ի

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՊՈՒՆՈՒ Բ.

ՍՐԲԱԶԱՆ ԱՐԻ ԵՊԵՄԿՐՈՍԻ ԱՄԵՆԱՊԱՏԻ

ՊԱՏՐԻԱՐԻ ԳՆԹՈՒՂԻ ԳՈՍ



965  
39

Printed in Turkey

ԱԶԴ

Հիմնական տարբերութեան գրքին հրատա-  
րակուած ժամանակէն, 1865 էն, հարկ սեպեցինք  
անոր վրայ պէտք եղած դիտողութիւնները գրի  
առնելու: Աշխատութիւննիս լրանալէն ետքը  
Սրբազան Ահհափառ Աթաբեկիտը ամբողջ  
կարգալով իւր հաճութիւնը շնորհեց: Յե-  
տոյ՝ Տ. Տ. Սարգիս Սրբազան Եպիսկոպոսն  
Հասան Զալալեանց, որ փք բազմազատիկ հրա-  
տութեանց փորձը իր թէ տպեալ եւ թէ տակա-  
ւին ձեռագիր մատենադրութիւններոյը ցուցու-



	Յառաջաբան .	1
Գլուխ Ա .	Յու՛նաց հայոց դէմ ունեցած հակառակութեան ծագումը .	17
Բ .	Հայոց եւ յունաց մէջ ճիսակասն վե՛ճ .	24
Գ .	Յունաց զբարատութիւններուն լատիւներուն մէջ ըստե ազդեցութիւնը .	42
Դ .	Ունիդորներուն ծագումը եւ գործերնին .	54
Ե .	Ներսէս Պաղօն եւ Սիմէոն Պէ՛հեպիսկոպոստունք . Հայոց վրայ ձգուած մտրութեանց ցանկը .	66
Զ .	Եփեղեցիոյ հաւատքը ո՞ր տեղացի հասկըցուի .	102
Է .	Վրօնական ազգային ծէսեր .	120

ցած է, հաւանութիւն տալէն զատ՝ տպագրութեան յաջողուելուն ջանքն ալ, ինքն յանձնառու ըլլալով թմեօզոսիայի հռչակաւոր դպրոցին հիմնադիր (Նարութիւն Պալիպեան ազնուական ազգասեր իշխանը յորդորեց տպագրութեան ծախուց ձեռնտու ըլլալու, որոյ փոխարէն եւ մեր մեր նուաստութեան մասնաւոր շնորհակալութիւնը ստորին բան մը սեպելով բոլոր ընթերցողաց ծանուցանելը, եւ միանգամայն « զերախտիս երախտսւորաց մի՛ մոռանայք », հռչակելախօսքը յիշեցընելը հարկ սեպեցինք :

# ՅԱՌԱԶԱՐԱՆ

Հարանց վարքին մէջ գրուած է որ քանի մի  
Հոգի օր մը Ագաթուն ճգնաւորը իր երեսին ծանր  
խօսքերով նախատելէն ետքը երբ Հերձուածող  
ալ ըսին, երանելին՝ որ ուրիշ խօսքերուն ամե-  
նուն ալ այո՛ կըսէր, երբ այս վերջին բառը լը-  
սեց՝ ըսաւ. ես ո՛չ եմ Հերձուածող. Հարցուցին  
թէ ինչո՞ւ ուրիշ խօսքերուն յանձնատու եղաւ  
եւ ասիկայ՝ մերժեց. ըսաւ. երբ ես իմ վրաս  
նայիմ եւ քննեմ՝ Հոգիս օրուս կը քաղէ, բայց  
Հերձուածողութիւնը Աստուծմէ զատուիլ է. եւ  
եւ Աստուծմէ զատուիլ չեմ ուզեր (Հատ. Բ.  
Էր. 109. ադ. 11 էնէտ.) :

Սուրբ Գրիգոր Արեւիկացի երանելի վար-  
դապետին ալ աղօթից գիրքը կարդալով կը գըտ-  
նեմ որ ամէն մեղք եւ յանցանք եւ պակասու-  
թիւն թէ եւ չունի՛ իր վրան կառնու. բայց  
Հայհոյութեան մեղքը՝ որ է Հերետիկոսութիւնը՝  
բացէ՛ի բաց կը Հերքէ : Տեղ մը կըսէ. « ո՛չ որ  
» մեղաւ որ իբրեւ զիտ. ո՛չ որ անօրէն. ո՛չ որ  
» ամբարիշտ. ո՛չ որ անիրաւ . . . եւ միայն եմ

„ եւ այլ ոչ որ . եւ ամենայն , եւ յիս ամենե-  
 ,, ցուն ,, ( Կարեկ . շԻ . 2 ) : Բայց ուրիշ տեղ  
 մը կհիմացընէ որ առանց բացառութեան ամէն  
 մեղք վրան չընդունիր . մէջերնէն մէկ հասարկը  
 զառէ եւ իր վրայէն կընեաէ . « Թէ եւ գտցին  
 ,, յիս՝ կըսէ , անօրէնութիւնք բաղմօրինակք ,  
 ,, այլ ոչ հայհոյութիւնք ,, ( Կ . 5 ) :

Բնդհանուր ազգիս համար նոյնը կըսեմք ,  
 Թէ այսպիսի զգացմունք մը իրեն բնականի  
 պէս բան մ'է . Թէ որ գէշ սովորութիւն մ'ու-  
 նի նէ՝ նոյնը խոստովանելու համար ուրիշնե-  
 րէն ամբաստանուելու ալ չըստպասեր . ինքնին կը  
 գրուցէ . մեր ազգը այսպէս է կամ այնպէս է  
 կըսէ . բայց երբ հաւատքին վրայ բան մը լսե-  
 լաւ ըլլայ նէ կը զայրանայ , եւ նոյնն ըսողը  
 իրեն թշնամի կը սեպէ :

Ըստր համար է որ երբ Աշխատեալ Այլանոս լա-  
 տին կրօնաւորը քանի մի աննշան հայ վարդա-  
 պետներու գրքերուն մէջ մտորական բաներ  
 գտնելով անոնց գէմ իր փոքանս-իքան եկեղեցոյն  
 շայտ ընդ մեծի եկեղեցոյն շոտմայ գիրքը ապեց  
 նէ՝ Թէ եւ շայտց եկեղեցին չէր անոր ամբաս-  
 տանածը , մասնաւոր մարդիկ էին , ազգին թըշ-  
 նամի սեպուեցաւ\* . նոյնպէս սեպուեցան նման

\* Այլանոսը՝ որ հայերը եւ ըրողացւոց առաջն աղ-  
 առաւելու եւ գոնէ հերեւակոսութեան հակամեա  
 ցուցընեղու ընթացք մը բռնած է , չեմք ուզեք  
 եւ չեմք կրնար արդարացընել : Գիրքը երկնզու .

պատճառի համար Յակոբ Ա ի յլեօդ , Յովէա  
 Պատրի եւ ուրիշները : շայք ամէն ասան ջա-  
 նացին գրով եւ բանիւ՝ շայտց եկեղեցին ամէն  
 մոլորութենէ ազատ ցուցընելու . եւ ամէն ա-  
 սան ալ յաջողեցաւ : Այլանոսէն ետքը լատին  
 մասնագիրները շայտց եկեղեցւոյ դաւանու-  
 թիւնն ուղղափառ դատն . միայն պակասութիւն  
 մը այն սեպեցին՝ որ շոտմայ աթոռէն անկախ  
 հրատարակած է զինքը :

Ըստնք այսպէս ըլլալէն ետքը ո՞վ կը յու-  
 սար եւ որո՞ւ միտք կուգար որ նոյն իսկ շայտց  
 ազգէն՝ շայաստանեայց եկեղեցւոյ դաւանու-  
 թեանը հմուտ , շայտց ազգին՝ իր հայրենաւանդ՝  
 հաւատոյն եւ կրօնական արարողութեանցը նա-  
 խանձանի գիր ըլլալուն տեղեակ , եւ աստուա-  
 ծաբանական եւ եկեղեցական գիտութեանց վարժ  
 մէկ անձ մը ելլէ յանդիման աշխարհի զշայտց  
 եկեղեցին իրեւ հերետիկոս ամբաստանէ : Այ-  
 սքն զի ինքն կրօնիւք հոռմէական , եւ շոտմ-  
 մայ եկեղեցւոյ դաւանութիւնը ըստ ամենայնի  
 ուղղափառ սեպելու պարտաւորեալ , երբ շա-  
 յաստանեայց եկեղեցւոյ դաւանութիւնը անկէց  
 տարբեր կը գտնէ նէ՝ շայտց եկեղեցին մոլոր-  
 եալ եւ հերետիկոս դատած կըլլայ :

Ըստն ալ ի՞նչպէս բաներու մէջ , Պատած տար-  
 բերութիւններէն ոմանք արարողութեանց կը

հայերէնը ուրիշ կը լատին լատիններէն ուրիշ . զոր  
 ր գոծոյս կարգով պիտի տեսնեմք :

վերաբերին . որոնք իւրաքանչիւր եկեղեցեաց ա-  
ղառ թողուած են . ոմանք բարոյական աստուա-  
ծաբանութեան այնպիսի կէտերուն՝ որոնք ա-  
կաւին լատին աստուածաբանից մէջ ալ վէճի  
տակ են եւ որոշում մը առած չեն . եւ շայոց  
ըսածին պէսն ալ՝ անոր հակառակն ալ ըսողներ  
կան . որոց եւ սչ մէկը հերետիկոս սեպուած է  
ձուով մայ առաջ . Ոմանք ալ ուղղակի հաւատալ-  
եաց կը վերաբերին . եւ հերետիկոսներէ ալ գոր-  
ծածեալ զրուցուածքներ են . բայց հերետիկոսաց  
այն զրուցուածքներուն տուած մուտք իմաստը  
շայոց եկեղեցին բնաւ երբէք ընդունած չէ՛  
եւ կը հերքէ ալ նէ՛ զրուցուածքը ողջամիտ վար-  
դապետութեամբ կը պահէ , որովհետեւ եկե-  
ղեցւոյ նախնի սուրբ եւ ուղղափառ հարք զայն  
գործածած են . կարծելով , չըլլայ որ անոնք բո-  
լորովին իրրեւ մոլորական եւ հերետիկոսական  
մերժէ նէ՛ նոյն սուրբ հարց վրայօք պարզամիտ-  
ներուն միտքը կասկած ձգած ըլլայ թէ անոնք  
ալ մոլորած են . եւ ոմանց ալ գայթակղութիւն  
պատճառէ : Բայց քանի որ պէտք եղած է , եւ  
օտարազգի քրիստոնեայք այն զրուցուածքնե-  
րուն համար զձայս հերետիկոս կարծած են նէ՛  
ձայք զիրենք կատարեալ արդարացուցած են :  
Շայոց եկեղեցւոյն դաւանութեանը մէջ ձու-  
մեական եկեղեցիէն հիմնական տարբերութիւն-  
ներ գտնողն ալ ասոնք զիտէ . եւ իր զիտցածը  
հաստատելու համար շայոց եկեղեցական եւ  
վարդապետական գրքերէն վկայութիւններ ալ

կը բերէ . բայց ասով ինքը հակասութեան մէջ  
կի յնայ տուանց խորհելու :

Կան յիրաւի ասոնց մէջ այնպիսի բաներ՝  
զորո շայոց եկեղեցին ձումեական եկեղեցւոյ  
գործածած բաւերովը չբացատրեր . սակայն երբ  
միտքը քիչ մը բնգարձակ խօսքով յայտնել պէտք  
ըլլայ՝ երկու եկեղեցեաց դաւանութիւնը նոյն  
կը գանեմք . տարբերութիւնը միայն բաւերու  
վրայ կը մնայ , որ տարբերութեանց ամենէն չըն-  
չինն է . եւ երբ այս բաւերուն ալ իւրաքանչիւր  
լեզուաց մէջ արմատական ստուգաբանութիւնը  
հետազօտելու ըլլանք՝ կը գանեմք որ ձայք իրենց  
լեզուով գործածած բաւերը ձգելով ուրիշ բաւ  
գործածեն նէ՛ խօսուածքնին մոլորութեան քիչ  
մ'աւելի կը մտնեայ . նոյնը իմացիք հոռուա-  
կանաց համար ալ՝ երբ իրենց զրուցուածքը փո-  
խեն , Ասոր օրինակները գործոյս մէջ ընթեր-  
ցողը կրնան գտնել . ետքէն ըսելիքնիս հոս կան-  
խելու հարկ չկայ : Վննութեան առած գրքեր-  
նուս հեղինակին գտած հիմնական տեղանամ տար-  
բերութիւնները ասանկ բաներ են . Ճշդիւ խօսեա-  
լով դաւանութեանց մէջ տարբերութիւն չկայ :

Այս վերապատուելի հեղինակը հայոց եկե-  
ղեցւոյն վրայ այսպիսի մոլորութիւններ ձգե-  
լու համար պինտ առաջ եկեղեցւոյն անունը  
փոխելու ձեռք կը զարնէ , եւ Լըյիւսնական Ս-  
կեղեցի կանուանէ . անուն մը՝ որ մինչեւ ասոր  
օրը նոր է եւ անծանօթ . ուստի եւ մենք ալ՝  
որ շայոց սուրբ եկեղեցին 'ի սուրբ Լուսա-

ուրէն աւանդեալ դաւանութեան եւ աւան-  
 դութեանց հաւատարիմ կը ճանչնամք, չեմք  
 կրննար ընդունիլ\* . առաջուց 'ի վեր գործած-  
 ուած անունը գիտեմք, որ է Լուսաւորչական .  
 զոր եւ Որուսերը՝ որոց իշխանութեան տակն ըլ-  
 լալով սուրբ Էջմիածին, հոռովեական շեղող  
 հայերը Էջմիածնական կոչելը քաղաքական նկատ-  
 մամբ իրենց բանին շատ աղէկ պիտի գար, միշտ  
 իրենց պաշտօնական գրուածոց մէջը Վրէժոյցեան  
 եկեղեցի եւ Վրէժոյցեան հայք կանուանեն, որ  
 դարձեալ Լուսաւորչական ըսել է : Ուրիշ մէկ կող-  
 մէն ալ մտածելով՝ այս Լուսաւորչական կամ Վրէ-  
 ցոյցեան բառն ալ աւելորդ կը սեպեմք . ըստ ո-  
 րում այս սուրբ եկեղեցւոյս անգամ շեղող հայ-  
 ազգիներն իրենց որոշիչ անունն ունին . կէսը  
 Լուսաւորչական եւ կէսը Վրէժոյցեան հայ անուանե-  
 լով . որով առանց որոշիչ անուան պարզապէս  
 Հայ ըսուելով ինքնին Լուսաւորչական սուրբ ե-  
 կեղեցիէն չզատուած հայերը կիմացունին : Ասոր  
 համար, ինչպէս կը ըսեմք, Որուսաստանի իմաս-  
 տուն եւ խոհեմ եկեղեցականք նոյն կառավարու-  
 թեան պաշտօնական գրուածոց մէջ գործած-

\* Սան քանի մի անձինք՝ որ ձեռքերնին գրիչ  
 բռնելու կարող գտնելով հեղինակ ալ եղած են .  
 եւ Հայաստանեայց Լուսաւորչական սուրբ եկեղեցին  
 որուն զիրենք անգամ կ'դաւանին, Էջմիածնական ա-  
 նուանելով կրցուցընեն որ ըսածնին չգիտցող ան-  
 միտներէն են 0

ուած Վրէժոյցեան բառը վերցընելով առանց ուրիշ  
 ածականի մը պարզապէս հայ ըսել տալիք ըստ հին  
 Արեւապատուելի հեղինակին հնարած Էջմի-  
 ածնական բառը մեզի ծաղրական ալ կերելի . իր  
 գրքին մէջ բռնած ընթացքին ալ չհամաձայնիր .  
 թէ որ Էջմիածնական ըսելով հոռովեական եւ քո-  
 ղոքական շեղող հայերը հասկընալ կուզէ նէ  
 ինչպէս որ է իր կամքը՝ այս կոչումը սուտ ըլ-  
 լալուն համար ծաղրելի է . որովհետեւ Հայաս-  
 տաննայց սուրբ եկեղեցւոյ ընդարձակութիւնը  
 կամիրփէ : Հայոց եկեղեցւոյն տեսանելի հո-  
 գեւորական գլուխը սուրբ Էջմիածին նստելուն  
 համար է անշուշտ՝ որ նոյն եկեղեցւոյն այս նո-  
 րահար անունը տուած է : Բայց անդին երկու  
 կաթուղիկոս ալ ունին հայք . մէկը Սիս եւ  
 միւսը Աղթամար . որոց թէպէտ հաւատքը եւ  
 դաւանութիւնը սուրբ Էջմիածնի կաթուղիկո-  
 սին հաւատոյն եւ դաւանութեանը հետ նոյն ,  
 բայց 'ի հոգեւորս անկէջ կախում մը չունենալ-  
 նուն համար Էջմիածնական եկեղեցի կոչման տա-  
 կը չեն կրնար պարունակիլ : Ասոնց հովուած  
 եկեղեցիներուն զատ զառ անուն դնել հարկ  
 կը լլայ . Սասնի եւ Աղթամարական : Աւելի աղէկ  
 չը լլար մի առ այժմ գոնէ Լուսաւորչական անու-  
 նով նշանակել . որուն տակը Սասնի եւ Աղ-  
 թամարական կոչուելիքներն ալ կ'պարունակին . ո-  
 ՞րովհետեւ այն երկու աթոռներուն կաթուղի-  
 կոսներն ալ զիրենք սրբոյն Վրիգորի Լուսաւոր-  
 չին օրինաւոր յաջորդ կը ճանաչեն :

Այս Իշխանական անուանս գիւտը իմաստուն  
 Տեղիականիս բունած ընթացքին մէջ ալ առանձին  
 անպատեհութիւն ունի: Թէ որ Իշխանական  
 կեղեցւոյ դաւանութեան հոովմէականէն տար-  
 բերութիւնը ցուցնել կուզէր նէ՛ պէտք էր իր  
 ընթացքին համեմատ՝ միայն սուրբ Իշխանին  
 տպուած կամ գոնէ նոյն սուրբ աթոռոյն կա-  
 թուղիկոսին եւ անոր ժողովոյն վաւերացուց-  
 մամբը հրատարակուած քրիստոնէականները  
 քննութեան առնուլ: Ասով իր աշխատութիւնը  
 կը թեմեանար. հարկ չէր ըլլար Առասանդու-  
 պոլիս եւ Օւիւրին եւ Գալկադա եւ ուրիշ տե-  
 ղեր տպուած քրիստոնէականները հետազօտե-  
 լու եւ մէջէն իր կարծեօքը հիմնական տարբե-  
 րութիւններ բնորոշելու: Այս թէ որ ասոնք ալ  
 քննել ուզէր նէ՛ կըրնար մէկ ուրիշ գիրք մը  
 շինել, եկեանական տարբերութիւն: Աստուանական  
 կամ հարկի — հայկական Իշխանացոյ անունով ու-  
 բով հետեւ այս քաղաքները տպուած քրիստոնէ-  
 ականները սուրբ Իշխանին Աթուղիկոսէն եւ  
 անոր ժողովէն հաւանութիւն առած չեն. ա-  
 նոր համար սուրբ աթոռոյն պատասխանատու-  
 թեան տակը չեն. ուստի ասոնց մէջ տեսնուած  
 տարբերութիւնները Իշխանական Եկեղեցոյ տար-  
 բերութիւնն է չեն կըրնար ըսուիլ:

Այս Իշխանական անուանած եկեղեցւոյն  
 հոովմէականէն տարբերութիւնները գտնելու  
 համար քրիստոնէականներն ընտրելը պատշաճա-  
 ռոր բան մը չէ: Ասոնք մանր տղոց ձեռքը տըր-

ուելու սահմանուած ըլլալով՝ հաւատալի ճըր-  
 մարտութիւնը թէպէտ ամբողջ կը պարունակեն՝  
 բայց ընդարձակ կերպով բացատրուած չեն,  
 ինչպէս որ ըլլալ պէտք է աստուածաբանական  
 եւ վարդապետական գրոց մէջ. եւ համառո-  
 տութեան համար երբեմն մէկին մէջ մութ զը-  
 րուցուածք մը կը ըլլայ, զոր միւսոյն թէպէտ նոյն-  
 պէս համառոտ՝ բայց ուրիշ կերպով զրուցածը  
 կը բացատրէ: Այս համառոտութեան պատճա-  
 րած մէկին մթութիւնը եւ միւսոյն բացատրու-  
 թիւնը իրարու հակառակ սեպելով Իշխանական  
 եկեղեցւոյ մէջ Տեղաւորած մը ենթադրելը թէ-  
 պէտ անտեղի՛ բայց բունած կերպին բնական  
 Տեղաւորութիւնն էր: Ամաստուն Տեղիականը այս-  
 պէս ընելէն ադէկ կը սեպէ Իշխանական ըսած  
 եկեղեցին հակասութեան մէջ ինկած ցուցնել:  
 Հակասութիւն ըսելը՝ միեւ նոյն բանին վրայ  
 այ՛ եւ ո՛ւր մէկէն ըսելն է: Ասոնց մէկը հար-  
 կաւ ճշմարիտ՝ եւ միւսը հարկաւ սուտ պիտի  
 ըլլայ. բայց այդպիսի հակասական խօսք մը ը-  
 սողին համար ճշդիւ եւ վճռաբար չկըրնար ըս-  
 ուիլ թէ այս ինչ կամ այն ինչ զրուցուածքէն  
 հիմնապէս տարբեր է. վասն զի մէկ ըսածովն  
 անկէց տարբեր է նէ՛ միւս ըսածովը կը նոյնա-  
 նայ. եւ տարբերութիւնը կը մնայ մի եւ նոյն  
 խօսողին այլ եւ այլ խօսուածքներուն մէջ:

Այս տեսութեամբ իմաստուն Տեղիականին  
 գտած տարբերութիւնը Հայաստանեայց եկեղե-  
 ցին Առասանդական կոչելուն տեղը Իշխանա-

հան կոչելովը, եւ ամէն տեղ տպուած քրիստոնէականներուն նոյնը պատասխանատու ընելովը՝ բոլորովին յօդս կը ցընդին. եւ հիմապան Կաթողիկոսին գիրքը հիմնական անպիտանութիւն մը կուեննայ. ասոր համար էր որ ազգային կրօնական ժողովն այս գիրքս պատասխանուոյ անարժան սեպելը լրագրոց միջոցաւ հրատարակեց: Սակայն մէջը պարունակած խօսքերուն որովհետեւ ծանր կերպարանք մը արուած էք՝ Առովմայ եկեղեցւոյն թարգմանն է կարծուելով, մեր այս աշխատութիւնը այս նկատմամբ անօգուտ չըլլալը՝ գիրքս կարգացողներն ինքնին կը հասկընան:

Հիմապան Կաթողիկոսին իմաստուն հեղինակը՝ Այաստանեայց սուրբ եկեղեցւոյ հաւատարմ ճիշդ հասկընալու համար պէտք էր եկեղեցական գրքերը եւ նոյն եկեղեցւոյ ընդունած եւ մինչեւ այս օրս իրրեւ ուղղափառութեան վարդապետ եւ սուրբ յարգած եւ տօնած անձանց մատենագրութիւնները հետազօտել. երբեմն ալ՝ եկեղեցական արարողութիւնները բուն իսկ կատարուած տեղը տեսնելու հետաքրքրութեամբ լուսաւորչականաց եկեղեցին ալ երթալ՝ եւ բընտրուած տարբերութիւններէն անոնց մէջ որքան բան գտնէր նէ՝ միայն անոնք նշանակել: Ասանկ ընելու ըլլաք նէ՝ ձեռքը անգիր եւ մաքուր թուղթ կը մնար. վրան սեւելու բան չէր կրնար գտնել: Այսպէս չընելուն, եւ այն անտեղութեամբ լի խեղաթիւր ե-

ղանակը բռնելուն պատճառը չեմք կըրնար գուշակել. բայց արդիւնքը ակն յայանի տեսնուելու բան մ'է:

Մայրաքաղաքս եւ ուրիշ երկիրներ հռովմէական հայոց մէջ գիտութիւնը յառաջադէմ ըլլալու ձամբան մտած է. եւ որովհետեւ ամէն ազգաց մէջ կարգաւորեալ գիտութիւնը իր մայրենի լեզուին մշակութեանէն կըսկըսի, ասոնց մէջ ալ հայերէն լեզուն սորվելու սէր մը մտաւ. եւ այն տուներուն մէջ՝ որ ասկէց քառասուն յիսուն տարի առաջ հայերէն լեզուն հերձուհի եւ հերձուհիսի լեզու անուանելով խօսելու չէին զիջաներ, հիմայ մաքուր հայերէն խօսողներ կը գտնուին. վասն զի հասկըցան որ լեզուին հերեակիցսը եւ հերձուածողը չըլլար:

Ասոնցմէ ոմանք գրարար լեզուն ալ հասկընալով եւ Այաստանեայց եկեղեցական գրքերը եւ սուրբ հարց մատենագրութիւնները կարդալով՝ Այսոց համար իրենց մտքին մէջ դրած մտլորութիւննին չգտան. ուրիշները որ գրաբար չէին հասկընար, Այաստանեայց եկեղեցւոյ դաւանութիւնն ըստ պատշաճի բացատրող աշխարհաբար գրքերու հանդիպելով նոյնը գտան. որով իրենց՝ Այաստանեայց եկեղեցիէն զատուիլը եւ հռոմէական եկեղեցւոյ հետ միանալը առանց պատճառի մի եւ նոյն ազգի անգամներուն իրարմէ զատուիլ մ'երեւցաւ: Ասոր բընական հետեւութիւնն էր դէպ'ի միութիւն միտում մը. եւ ինչո՞ւ համար ալ չըլլար՝ երբ Ա-

յաստանեայց եկեղեցւոյ հաւաքը՝ իրենց ընդունած Հոռոմայ եկեղեցւոյն հաւաքին հետ մէկ դասն . եւ եկեղեցւոյ միութիւնն ալ՝ հաւատոյ եւ դաւանութեան միութեանը վրայ է :

Սակայն օմանց՝ որ Հայաստանեայց եկեղեցւոյն համար Հոռոմայ հասկըցուցած էին որ հերետիկոսութեան մէջ ինկած է . որպէս զի մէկը հոռոմեական ընեն նէ եկեղեցւոյ բարեացապարտ եւ հոգւոց փրկութեան նստանձախընդիր ըլլալով յարգերնին շատնայ . այս միտումը աղէկ չիրեցաւ . ուստի առաջին բաժանումը տածելու՝ եւ զայս միտումն ունեցողները Հայոց եկեղեցիէն պաղնցընելու համար պատշաճ դատեցին Հայոց եւ Հոռոմայ եկեղեցեաց դաւանութեանցը մէջ Գորբերոս-Քիւնէր ցուցընել, եւ ասոնք ալ աւելի ծանրացընելու համար՝ հիմնական անուն դնել : Թէ այս ըլլայ պատճառը ( որ մեղի հաւանական կերևի ), եւ թէ այլ ինչ, հիմնական Գորբերոս-Քիւնէր գրքին անվրէպ արգիւնքն է մի եւ նոյն ազգի անդամոց մէջ քանի մի ասրիէն ՚ի վեր տաքնալու սկսած սէրը վերստին պաղնցընել : Տակաւին մտոցուած չէ՞ Տօն Աստուրոի կարծուած Միջնորեանն Ալեքսիոյ մակագրեալ գրքին՝ եւ Մխիթարեանց կողմէն տըրուած պատասխաններուն պատճառաւ ասկէց տասըն եւ վեց տարի առաջ պատճառած գծտութիւնը, որուն վրայ երկու կողմէն՝ նոյն գծտութիւնը առաւել եւս թունաւորելու շատ մը դրուածներ ելան . մինչեւ Հոռոմ Տօն Աստ-

ուրոին գիրքն ու Ալեքսիոկի Մխիթարեանց անար դէմ հրատարակած գիրքը միապէս դատապարտեց իրեւ զրպարտիչ . առաջինը 1852 դեկ. 6, եւ երկրորդը 1853 սեպտ. 5 թուականով հանած վճիռներովը ( Տարեգիրք Գորբերոս, Իմաստ. հոբ. Խոյ, եր. 400 ) : Այն ասենէն ետքը քիչ մը սիրտերն որ հանդարտեցան՝ նորէն գըծումընութիւն պատճառող այս հիմնական Գորբերոս-Քիւնէր գիրքը ելաւ . որ թէպէտ վերայիշեալներուն չափ կծու խօսքեր չունի, բայց զրպարտութեան կողմանէ անոնցմէ վար չմնար . մանաւանդ անոնցմէ ալ աւելի գերադանց է կըրնանք ըսել . որովհետեւ ասն Աստուրոին կարծուած անանուն գիրքը մէկ մասնաւոր ընկերութեան մը միայն մէկ ծիւղը, Մխիթարեանց Ալեքսիոկու սուրբ Ղազարու վանականները կը զրպարտէր, նոյն միաբանութեան Ալեքսիոյ վանականներուն համար ըսելիք չունենալով . իսկ հիմնական Գորբերոս-Քիւնէր գիրքը ամբողջ մէկ Ալեքեղեցի մը կը զրպարտէ . Հայաստանեայց սուրբ Ալեքեղեցին զոր ինքը Ալեքսիոկու կանուանէ :

Այս սուրբ Ալեքեղեցիս ո՛չ միայն Հոռոմեական Հայոց, այլ եւ Հոռոմայ ալ այնպէս պիտի ցուցընէ, որպէս թէ հաւատալի ճըշմարտութեանց մէկ մասին ուրացութեամբը հերետիկոս եղած է բողոքականներու նման . ուստի տեղ տեղ ալ՝ Հոռոմեական աստուածաբաններուն բողոքականաց հետ խօսած ոճովը կը խօսի հիմնական Գորբերոս-Քիւնէր հեղինակը՝ Հայոց հետ .



Մենք խորհեցանք իբրև մէկ իբրևստե՛ս մը  
 մէջ մտնել, եւ վերագտուելի հեղինակին իբրև  
 զինչպէս մէջ բերած պարբերականները մէկիկ մէ-  
 կիկ քննել. ցուցնել թէ անոր ամբաստանած  
 հաստատմանն ի՞նչ իմաստ ունին. այն հաս-  
 տատմանն հեղինակները Հայաստանեայց Ա-  
 կեղեցւոյ դաւանութիւնը աղէկ եւ ճշմար-  
 տութեամբ բացատրած են մի. ամբաստանողին  
 ամէն մէջ բերածները դաւանութիւն են մի.  
 եւ հաւատարեաց կը վերաբերին արդեօք:

Գորիս նպատակը՝ այս բաներս միայն Առ-  
 ստորջական սուրբ Ակեղեցւոյ հարազատ զա-  
 ւակներուն հասկըցընել չէ. ապա թէ ո՛չ ի-  
 բրատեմանիս չէր ըլլար ըրածնիս. քան զհա-  
 մար երկու կողման ալ խօսիլ հարկ է եւ առա-  
 ւելապէս՝ ամբաստանողին կողման իմացընել  
 թէ իրական տարրերութիւն մը չկայ 'ի հաւա-  
 տրս, եւ նշանակուած տարրերութիւններն երե-  
 ւակայական են: Ասոր համար գործոյս ընթա-  
 ցից մէջ առաւելապէս անոր նայեցանք որ վե-  
 րագտուելի իմաստուն հեղինակը ի՞նչ ամբաս-  
 տանութիւններ կընէ՝ նոյնքը Հոգիմական  
 Ակեղեցւոյ հայրապետներուն եւ անոնց ընդու-  
 նելի եղած երեւելի աստուածաբաններուն խօս-  
 քերով արդարացընեմք: Ասոնք կարգացողը մէկ  
 քանի մի համար պիտի զարմանայ. եւ դուցէ մեր  
 գրածներուն ալ չհաւատայ: Եւ այս է՝ որ շատ  
 բաներու մէջ՝ Հոգիմայ թարգման կարծուած  
 հեղինակը նոյն իսկ Հոգիմայ հայրապետաց եւ

հաշակաւոր աստուածաբանից խօսածներուն հա-  
 կառակն ըսած կը գտնուի: Մենք մեր գրա-  
 ծին ստուգութիւնը ամէն ընթացողաց ապա-  
 հովցընելու համար՝ վկայութիւն առած տեղեր-  
 նիս ճշտութեամբ նշանակեցինք:

Եւ որպէս զի մեր ներկայ գործոյս կարգա-  
 ւորեալ ընթացք մը. եւ մի եւ նոյն ուղղութեամբ  
 Ակեղեցւոյ երկու մասերուն մէջ տիրող անհիմն  
 եւ սնտի տարաձայնութեանց վրայ բաւական  
 տեղեկութիւն մը տանք, զոր հաւաքուած եւ  
 ամիսի մէկ ուրիշ տեղ մը գտնելը դժուար  
 պիտի ըլլայ, գիրքս երեք մասն էր բաժնեմք:  
 Առաջնոյն մէջ՝ Հոգիմայ եւ Հայաստանեայց  
 Ակեղեցւոյն տարաձայնութեանը ծագմանը  
 եւ պատճառին վրայ, եւ երկրորդին մէջ՝  
 նոյն տարաձայնութիւնը զայրացնող եւ զը-  
 գրող զրքին պարունակածներուն մէջէն մէ-  
 խնդիր ըսածներուն վրայ. եւ երրորդին  
 մէջ էստէ ինչիւր ըսածներուն վրայ կը խօ-  
 սիմք. որով առաջին մասը կըլլայ պարտաւան,  
 եւ երկրորդն ու երրորդը քննողական:

# ԻՐԱԽԱՆՈՅ



ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

**ՈՒՍՏԱԿԱՆ**

965  
9

ԳԼՈՒԽ Ա.

Յունաց՝ Հայոց գեմ ունեցա՛ն հակառակութեան  
ծագումը ։



ՎԵՐՄԵՆՆԵՐԻ՛ է մեր ազգին բաղդը .  
մեկ կողմէն ծնչիլ եւ հարստահարիլ , միւս կող-  
մէն ալ յոյն իռկ հարստահարողէն զրպարաիլ ,  
Լաֆոնդէն առակախօսին գառնուկին նման , զոր  
գայլը ուտել ուզելով անյարմար զրպարաու-  
թիւններ կընէր վրան . մեկը սուտ ելլէր Պէ  
ուրիշ մը կը հնարէր , Յունաց հին հակառակու-  
թիւնը այնպէս կը ցուցնէր , որպէս թէ քա-  
ղաքական նպատակ մը ունենար . այս որ չեղաւ  
նէ՛ բանը կրօնականի դարձուցին ։

Վաղաքական մասին , չորրորդ դարուն վեր-  
ջերը՝ երբ տակաւին կրօնական վէճի պատճառանք

մը չկայ, Յոյները Հայոց Թագաւորութիւնը տկար գտնելով Պարսից Տեսակէկ եղան երկիրն իրենց մէջ բաժնելու. սոոր Տես ազգային բաժանում մ'ալ կը յար բնայէս. Պարսից կողման Հայերը Պարսկանայ եւ Յունաց կողմնները Հասնահայ կամ Հայհոսո՞ կը շմամբ: Ըստ վերջինս ետրերը կրօնական բաժանմանէ ելած մէկ կողման մը յատկացաւ. եւ կրօնական բաժանումը չկրած քաղաքական բաժանումը կար այնէ՛ բաժանեալները տարբեր անունով նշանակել չկար: Ըստպիտի տարբեր անունը՝ բաժանումը մշտնջենաւորելու ասի՞մ մ'ըլլալը ամէն աստն փորձիւ ստուգուած է:

Բաժանումը ամէն աստն լոկ քաղաքական սահմանի տակ չմնաց, Յունաց եւ Պարսից սերը կեդակարծ եւ սակաւատեւ էր. իրար տկարացնելու, ուստի եւ երկուքն ալ ամբողջ Հայ ազգը իրենց կողմը քաշելու կը նայէին: Ըստակապէս Պարսիկը կը ջանար Հայուն քրիստոնէութիւնը ձգել տալու, որպէս զի յոյներէն բոլորովին դատուի: Հայուն կրօնասիրութիւնը ամէն ուրիշ կիրքեր եւ երկիւղ եւ ակնածութիւն կը յաղթէ. այս պատճառ եղաւ որ Պարսիկն զՀայ ազգը բոլորովին ձեռքէ կը հանէր՝ Յունաց երկիրը դաղթելու ասի՞մ տալով: Աստակայ մէջ մտնելովն այս խորհուրդը չքայլելով՝ Արդաանանց պատերազմն եղաւ, որ զՊարսիկ կրակապաշտութիւնը արեան ծովով մը հայերէն հեռացուց. մեր արինախարարաց շատը մեռան:

բայց Պարսիկը յաղթուեցաւ. եւ տարին երով աշխատելով եւ իր ջանիցն ապարդիւն մնալուն համոզուելով վերջապէս կրօնից աղատութիւն տուաւ:

Յոյնը ասիկայ տեսնելով համոզուելու էր որ Հայը երբէք քրիստոնէութեան սկզբանց դէմ չվարուիր, եւ ամէն քրիստոնեայ՝ իրեն եղբայր կը ճանաչէ: Սակայն ինքն այս խորհուրդէն հեռու կը պըտըտէր. եւ հայերը կուղէր չէ՛ թէ միայն հաւատով քրիստոնեայ՝ այլ եւ ըստ ամենայն հանգամանաց եւ բնաւորութեանց Յոյն ընել: Հայր սուաջ յունական գրով կը վարէին. սուրբն Սեպրոպ հայոց ազգին համար գիր կը գտնէ հրաշխք. յոյները իրենց բաժնին հայոց թող չեն տար անոր գործածութիւնը. չըլլայ որ Հայ ըլլալին մտքերնուն մէջ հաստատ մնայ՝ եւ Յոյն դառնալին դժուար ըլլայ: Ըստ աստեղը ազգային կրօնական ծէսերը փոխել տալու խօսք չկար. մանաւանդ թէ խարութիւն ալ չկար. մեր երանելի հայրերը աստուածային պաշտամանց դրքերը յոյներէն աստի կամ յունականին վրայ յօրինեցին. սուրբ Եւսուարէն այնպէս սորված էին:

Աշտիքէսի նորածայն մոլորութեան դէմ Վաղկեղոնի ժողովքը վրայ եկաւ: Ըստ աղանդապետս՝ մինչեւ իր աստեղը ուղղափառ մտք գործածուած չէին. ի՞նչ Բրիտանոս զրուցուածքը՝ որ մեր ազգին ալ ընտանեցած էր իրրեւ մի Վրիստոս կամ մի անձն Վրիստոսի ըսելու մտքով, յատկապէս ի Վրիստոս երկու անձն

դաւանող 'Ա,եստորի մոլորութենէն խորշելու համար, իր հերետիկոսութեանը հաստատութիւն կը բըռնէր, հարկ սեպեց ժողովն ըսել թէ 'ի Վրիստոս երկու են բնութիւնները, բայց զատուած չեն. Քրիստոսի մէկ անձին վրայ միաւորեալ են. Ասիկայ նոյն իսկ նախնեաց դաւանութիւնն էր՝ Աւտիքէսի մոլորութիւնը հերքելու համար պարզաբանուած. բայց Հայք ոչ Վերտիքէս ճանչցան. եւ ոչ անոր մոլորութենէն խորշելու համար իրենց առաջուց 'ի վեր սորված ասութեան կերպերնին փոխելու հարկ մը իմացան. օր քննութիւն ըսելը կը շարունակէին. բայց այն մտքով՝ ինչ մտքով որ ուրիշ Վրիստոսեայ ազգերը կիմանային Վաղկեգոնի ժողովին երկու քննութիւն ըսելովը: Ժողովին վերայ ալ ճիշդ տեղեկութիւն մը չկար. Աւրդանանց ոչաւորեցմին պատճառովը մեր ազգէն հոն մարդ գտնուած չէր:

Անկէց քսան տարի առաջ Եփեսոսի տիեզերական ժողովքէն եւ 435ին Եշտիշտոսի ժողովքէն դատապարտուած 'Ա,եստորի՝ 'ի Վրիստոս երկու անձն դաւանիլն ալ ծանօթ էր. եւ Հայերէնին մէջ քննութիւն բառը քսան բառէն ծագելով՝ եւ անձն բառին նշանակութիւնը խիստ մօտիկ տեսնուելով՝ կը վախճային, չլլայ թէ երկու քննութիւն ըսելուն տակէն երկու անձն՝ որով եւ 'Ա,եստորի մոլորութիւն ելլէ. ռուսի օր քննութիւն ըսելուն վրայ հաստատ մնացին: Բայց քանի որ Յոյները ասոր վրայ խնդիր կը յարուցա-

նէին՝ Հայք կը պատասխանէին թէ ուղղափառութեան կողմանէ մէջերնին տարբերութիւն չկայ: Վաղկեգոնի ժողովոյն հայրապետներուն մէկն էր Աբուսաղէմի Յորենաղ հայրապետը. եւ հայերէն ձեռագրոց մէջ տրամախօսութիւն մը կայ այս հայրապետի՝ եւ մեր երանելի Մովսէս քերթողին եւ 'Կաւիթ անյաղթ փիլիսոփային մէջ եղած, որ այս ըսածս կը հաստատէ. Եւսպիսի գրուածոց մէջ երբ կը կարգամք թէ երկու վիճաբանող կողմանց մէկն անպատասխանի մնաց, այնպէս չկարծեմք թէ մոլորեալ ըլլալուն համոզուեցաւ. այլ իմացաւ որ միայն զրուցուածքի կերպով իրարմէ կը տարբերին եղեր. եւ երբ ընդարձակ բացատրութեամբ խօսին՝ երկուքին ըսածը մէկ մտքի կուգայ:

Բայց այն կը սաստկացընէր վէճը՝ որ մէկ կողմէն նեստորականները՝ ժողովոյն երկու քննութիւն ըսելը ձեռք առնելով պարզամիտները խաբել կուզէին. որպէս թէ Վաղկեգոնի ժողովականք քննութիւն ըսելով այն իմացած եւ 'Ա,եստորի մոլորութիւնն ընդունած ըլլան: Մէկ կողմէն ալ եւտիքականները իրենց նոյն ժողովքէն հերքուելուն վրէժն առնելու համար կը չարախօսէին որ ժողովքը 'Ա,եստորի մոլորութեան

\* Տրամախօսութեան հարազատութեանը վրայ երկբայողներ կան: Երկբայութիւնն արդարացընելու պարագայ մը չկայ. դուրսէ օտարազգի հեղինակ մը ասիկայ յիշած ըլլաք նէ՝ երկբայութիւն չէր մնար:

Տեսեւեցաւ • Լոռվմայ Լէոն հայրապետն ալ նոյն ազանդոյն մէջն ինկաւ առ Փլարիանոս Աստանդնուպօլսի պատրիարք գրած վարդապետական նամակով՝ որ Տաճար բնելով կը ծանչցուի: Երկու հակառակ կողման միարան վկայութիւնը շատ հաւանելի կընէր անոնց ըսածը: Ասոնց վրայ եկաւ Լէոնի համարին Յունարէնէ Լայերէնի թարգմանութիւնը • զոր գուցէ Լայերէն լեզուի յատկութեանցը անհմետ, գուցէ ալ քիչ մը եւտիքական խմորէ պլըշուած Լայ կամ Ասորի թարգմանը, ( ով ըլլալը չեմք գիտեր ), այնպէս թարգմաններէր որ նեստորականութեան հոս կը բուրբեր մէջէն մանաւանդ ընտելութեանց տարբերութիւնը հասցերէնին մէջ սովորաբար անծի համար գործածուած ո՞նք բառով բացատրելով:

Ի՞նչ խորհէին հայերը երբ այն ալ լըսէին որ նոյն իսկ Վաղկեզոնի ժողովոյն պաշտպան յոյները երկար ժամանակ իրարու հետ հակառակեցան անոր ուղղափառ կամ շարափառ, ընդունելի կամ անընդունելի ըլլալուն վրայ: մինչեւ անգամ Օննոն կայսրը՝ որ ժողովքէն 40 ասորի մը չափ նտքը կայսր եղաւ, Բեթանուֆիան — Էնօրիօն — անունով հրովարտակ մը հանելով պատուիրեց որ Վաղկեզոնի ժողովոյն պատճառովը կուսելէն դադարին, եւ ոչ աղէկ ոչ գէշ՝ մէկ մըն ալ անոր խօսքը չընեն: Ասկէց անանկ կիմացուէր որ Վաղկեզոնի ժողովքին վարդապետութիւնը բացարձակապէս հերետիկոսական

չէ ալ նէ՛ կասկածելի եւ անարդարանալի բաներունի. եւ Լայք իրենց հաւատոյ առաջնորդ ունենալով զուրբն Քրիզոստոմոսը եւ անոր յաջորդները մինչեւ սուրբն Սահակ Պարթեւ, ուղղափառութեան կողմէ անոնցմէ երաշխաւորուած երեք սուրբ ժողովներէն զատ, որ են Վիկիոյ, Աստանդնուպօլսի եւ Ելիեսոսի, օրիշ ժողով չճանչցան, թէպէտ Եւտիքէսի մոլորութիւնն ալ չընդունելով՝ եւ պէտք եղած ատենն անոր հակառակ ճամբիտ վարդապետութիւնը բացատրելով եւ պաշտպանելով՝ Վաղկեզոնի ժողովքին եւ Լէոնի տուժարին համաձայն կը գտնուէին:

Օրոյները պէս պէս առիթներու մէջ հայոց դաւանութիւնն ուղղափառական ըլլալը հասկընալէն ետքն ալ կը պնդէին որ Վաղկեզոնի ժողովն ընդունին. եւ այս պահանջնին՝ երբ իրենց մէջ ալ տակաւին ընդհանրապէս ընդունուած չէր ժողովը, կասկած կուտար թէ կուսակցութեան բաժնուած են Յոյնք. եւ Վաղկեզոնի կողմն եղողները հայերը իրենց կողմն առնելով հակառակորդներնուն վրայ զօրանալ կուզեն: Իրոհմութիւնը թող տալ կը պահանջէր որ վէճն որոց մէջ ծագեցաւ նէ անոնց մէջ լըմնայ, գուրսէն մարդ չխառնուի. հայերն ալ անանկ ըրին. գէշն այն եղաւ՝ որ յունաց թախանձանքն անոնց չուզած արդիւնքն ունեցաւ. աղգային մէկ երկու ժողով՝ Վաղկեզոնի ժողովոյն թշնամիներուն խօսքին ըրնուեցան. եւ անտարբեր մնալնին մոռցան:

Հայոց եւ Յունաց մէջ ծիսական վեճ :

Յոյները Հայոց վրայ յայտնի հերետիկոսութիւն մը չէին տեսներ . եւ Վաղկեդոնի ժողովքը չընդունելը՝ նախընթաց գլխոյն մէջ նըշանակուած պարագայներուն մէջ հերետիկոսութիւն մը չէր . ուստի թշնամութիւնը տեւական եւ հաստատուն ընելու համար ուրիշ ճամբայ բըռնեցին :

Յայտնի է որ Հայք եկեղեցական արարողութիւնները եւ ծէսերը սուրբ Լուսաւորիչէն սորված էին . եւ Սրբոյս յիշատակը մինչեւ ցայսօր այնքան սիրելի է ազգին՝ որ անկեց աւանդութեամբ հասածներուն մէկ նշանախեցն անգամ փոխելու յանձնառու չեն ըլլար . Ըսն ալ պատմութիւնը կը հաւաստէ՝ որ սուրբ Լուսաւորիչը տղայութիւնը Աեսարիա յունաց մէջ անցուցած՝ եւ Վրիստոնէական հաւատքն ու արարողութիւններն անոնցմէ սորված էր . եւ երբ Հայոց ազգը Լուսաւորեց եւ նուիրապետութեամբ եւ կանոնով եւ Ըստուածային պաշտամամբ եւ բարեկարգութեամբ Եկեղեցի հաստատեց՝ եկեղեցական արարողութեանց մասին անոնցմէ ինչ որ սորված էր նէ նոյնը դրաւ . կամ այն բանն որ Յունաց Եկեղեցեաց մէջ այլ եւ այլ տեղ տարբեր կերպով կը կատարուէր՝ իրեն պատշաճագոյն երեւցածն առաւ :

Ըստ վերջին ըսածնուս օրինակ մը կրնամք առնուլ բազարջ կամ անխմար հացով պատարագելը : Սուրբ հայրն մեր Աեսարիա գըտնուած եւ վարժուած ատենը յոյները երբեմն բաղարջ կընէին , երբեմն ժողովրդեան նուէրք բերած խմորեալ հացը կը սրբազործէին . ցորենի հաց ըլլալը միայն հերիք կը սեպէին . եւ այս կերպով ժողովրդեան փափաքն ալ կը լեցընէին : Հայաստանեայց Եկեղեցւոյ կարգադիր սուրբ Լուսաւորիչն եկեղեցական արարողութիւնները աւանդած ժամանակը այսպէս սովորութիւն դեռ մտած չէր հայոց մէջ . սուրբ պատարագի նիւթն աժէն տեղ մի օրինակ ըլլալուն արգելք մը չկար . եւ որովհետեւ Տեառն մերոյ վերջին ընթրիքն ալ՝ որ է սուրբ պատարագին սահմանադրութիւնը՝ բաղարջով ըրած ըլլալն անարկուսելի է , սուրբ Լուսաւորիչն ալ բաղարջով ընել հաստատութեամբ պատուիրեց . գինին ալ անջուր գործածել աւանդեց . ուրիշ արարողութիւններն ալ անոր պէս . Ծնունդն ու Մկրտութիւնը մի եւ նոյն օր՝ յունուաչի ճին ընել սորվեցուց . անոր կցօրդ ուրիշ տօներն ալ անոր համեմատ . ինչպէս որ յոյներն այն ատենը կընէին :

Յոյները ետքը այս արարողութիւններս փոխեցին . եւ Ծննդեան եւ Մկրտութեան տօները զատ զատ օր կատարելու ետքէն սկսած ըլլալնին պատմական անտարակուսելի ստուգութեանց կարգն անցած է . եւ այս փոփոխութիւնս՝ ու-

քիշներն ալ փոխած ըլլալնին շատ հաւանելի  
կընէ : Հայր հին աւանդութիւնները անփոփոխ  
պահելով յոյներէն կը տարբերէին . եւ յոյնք  
այս տարբերութիւնս ալ՝ որ ինքնին անվնաս էր՝  
խելքերնին յոգնեցողցին հերետիկոսութեան  
կարգ դնելու : Բազարջով եւ անջուր գինիով  
պատարագելը 'ի Վրիստոս մի բնութիւն հաս-  
կըցընելու համար է կըսէին . Ծնունդն ու  
Մկրտութիւնը մէկ օր տօնելնին՝ Վրիստոսի  
անձին վրայ երկու բնութիւններն իրարու հետ  
խառնուելով մէկ բնութիւն գաւանելու նշան  
ցուցընել կուզէին . նմանազէս երկուց եկեղեց-  
եաց 'ի մասին արարողութեանց իրարմէ զանա-  
զանուած սերիշ կէտերն ալ : Աստի մի կամ եր-  
կու բնութեանց վրայ Հայոց համար ունեցած  
ծուռ կարծիքնին միշտ այս ձեւերուն պատճա-  
ռովն ալ աւելի աւաջ կը տանէին . բայց բուն  
դիտարութիւննին՝ Հայերը յունացընել էր :

Հայք ասիկայ կիմանային . ուստի քանի  
անգամ որ յունաց հետ միաբանելու ժողովք  
ըրին՝ հաւատոյ վրայ երբէք տարբերութիւն չու-  
նենալնին կը յայտնուէր . իսկ երբ արարողու-  
թեան կուգար բանը՝ Հայք իրենց ձեան ամուր  
կըլանէին , եւ ասով բանն անկատար կ'մնար :  
Եւ պսպէս ըլլալն ալ բնական էր . 'ի հաւա-  
տըս միութիւն . 'ի ձէսս զանազանութիւն . եւ  
յամենայնի սէր պէտք էր . բայց յոյնք այս գե-  
ղնցիկ սկզբունքը չէին գիտեր . վասն զի իրենց  
պէս ըստ ամենայնի յունացընելու սկզբուն-

քին հետ չէր համաձայներ : Եւ այս արարողու-  
թեանց զանազանութեան չհաճելնին եղաւ նա-  
րանոր ատելութեանց եւ զրպարտութեանց ջա-  
ռաջածող եւ տաժող :

Տեսնելով որ Հայք իրենց նմանելու յանձ-  
նառու չեն ըլլար՝ սկսան ուրիշ ազգաց առաջ  
ալ զանոնք զրպարտելու . գրեր կը գրէին եւ այլ  
եւ այլ տեղեր կըխրկէին . պատմութիւններ-  
նուն մէջ ալ կանցընէին թէ Հայերը հերետի-  
կոս են : Յունաց Փոս պատրիարքը երբ Հուով-  
մէն զատուեցաւ՝ հզօր կուսակցութեան կարօտ  
էր . իր կողմն ունեցած յոյն պատրիարքներն  
ու եպիսկոպոսները հերիք չսեպելով Հայերն  
ալ համոզել ուզեց . նամակ խրկեց Չաբաբիա  
Հայոց կաթողիկոսին եւ Աշոտ իշխանին . որ-  
պէս զի 'ի Վրիստոս երկու բնութիւն ըսեն ,  
եւ Վաղկեդոնի ժողովն ընդունին , եւ Ծնուն-  
դըն ու Մկրտութիւնը զատ զատ օր ընեն եւ  
այլն : Արքայան կաթողիկոսը ժողովք ըլաւ 'ի  
Ը իրակուան՝ 862 թուին . ուր Տեսուն մերոյ  
Ըստուածութեան եւ մարդկութեան վրայ ու-  
ղիղ դաւանութիւնը հաստատեցին . Վաղկեդո-  
նի ժողովքին համար ալ՝ որ բոլոր կասկածները  
փարատելու չափ տեղեկութիւն առնուած չէր ,  
հերիք սեպեցին ըսելը թէ յիշեալ ժողովք թէ  
որ նախնի երեք սուրբ ժողովներուն ուղղափառ  
դաւանութիւնն ընդունեց՝ եւ հաստատեց նէ՝  
ընդունելի է մէկալ ժողովքներուն նման . իսկ  
թէ որ անոնցմէ տարբեր բան մը հնարեց եւ

քարոզեց նէ Հայք երբէք զանիկայ չեն կըրնաք  
ընդունիլ : Եւ այսպէս են ժողովոյն չորհրտա-  
սաներորդ եւ հնգեաասաներորդ կանոնները :

ԺԴ . « Եթէ որ զՔաղկեդոնի ժողովն եւ  
1) զհետեւոցս նորա հակառակ կամ դիմամարտ  
2) գիտիցէ առաքելական կամ մարգարէական սահ-  
3) մանեալ տուչութեանն . կամ երից սուրբ ժո-  
4) ղովոցն աւանդութեան . եւ վասն մարդահա-  
5) ճութեան եւ կամ վասն ընչասիրութեան ո՛չ  
6) նզովիցէ՝ նզովեալ եղիցի :

« ԺԵ . Եթէ որ զՔաղկեդոնի սուրբ ժո-  
1) ղովն կամ զհետեւոցսն նորա զհինգերորդ ժո-  
2) ղովն եւ զվեցերորդն եւ զեօթներորդն՝ հետե-  
3)ւող եւ համախոհ գիտիցէ առաքելական եւ  
4) մարգարէական տուչութեան եւ երից սուրբ  
5) ժողովոցն , եւ յանդգնն նզովել , կամ զըր-  
6) պարտել իբրեւ զպըղծոյն՝ Եեստորի համա-  
7) ձայնեալ , այնպիսին զինքն նզովէ . զի գրեալ  
8) է . եթէ որ զոչ արժանին նզովիցէ՝ նզովէ  
9) զանձն իւր . եւ ՚ի գլուխն իւր նզովքն եղից-  
10) ցի . եւ եղիցի նզովեալ » : ( Համաչեան . Պատմ .  
հայ . Էր . Գ . 2 ) :

Փոտ իմաստուն էր՝ նախապաշարմանէ հե-  
ռու . բայց սաստիկ փառասէր , և իր այս տի-  
րոջ կիրքը յագեցրնելու հանձարեղ : Հայոց  
դաւանութեան ուղղափառութիւնը՝ անկէց ա-  
ռաջ արածուած զրգարութեանց հետ մէկ տեղ  
բերելով , որոց զրգարութիւն ըլլալն ծանու-  
ցանելն իր հաշուին՝ չէր գար , ասկէց իրեն պար-

ծանք մը հանել խորհեցաւ . ցուցրնելով թէ  
նքն Քրիստոնէական Եկեղեցւոյ մէջ արգիւ-  
աւոր անձ մ'է . եւ Հոովմայ իրաւաբանու-  
եան բաժնուիլն արգարացընելու նեցուկ մը  
ննեց ասիկայ : Երեւելեան պատրիարքներուն եւ  
գիսկոպոսներուն խորհած շրջաբերականին մէջ  
կը պարծէր , որպէս թէ Հայերն Եւտիքէսի եւ  
անոր հետեւողներուն մոլորութեանէն զատեր եւ  
ուղղափառ ըրեր է\* : Բայց սրատես աչքերը շու-  
տով կըրնային ասոր ստուծիւնը տեսնել : Հա-  
ւատք եւ դաւանութիւն փոխելը՝ արարողութիւն  
եւ ծէս՝ եւ մանաւանդ տօնի օր փոխելէն շատ  
դժուար է . առաջնոյն յանձնառու եղողը՝ երկ-  
տորդին վրայ չհակառակիր : Սակայն՝ Աիկիոյ  
Յովհաննէս կամ Ահասն Հայազգի յունա-  
կրօն եպիսկոպոսը՝ որ փոսէն պատգամաւոր խըր-  
կուած էր Հայաստան , չկըրցաւ ՚յննդեան տօ-  
նը Մկրտութեանէն զատելու համոզել Պաբա-  
րիա կաթողիկոսը . ուրիշ արարողութեանց մա-  
տին ալ փոփոխութիւն ընել տալու չյաջողեցաւ :

Յոյները՝ որ այս տօնից միութիւնը եւտի-  
քականութեան նշան սեպած էին , իրենց առա-  
ջին կարծիքէն չզատուեցան . միշտ Հայերը իր-  
քնէ հերեակիոս կհամբաւէին : Եւ ասիկայ ա-  
ւելի հաստատելու համար խարդախ ճամբանե-

\* Բարոնիոս Եիւլեյմյան Գաբիէլի . Յմն , 863 : Փո-  
տայ խօսքն ամբողջ Թարգմանած եմք Զօհմէն մէջ .  
( 1856 . Յն . 15 . Եր . 470 . ծանօթ ) :



բու ալ ձեռք զարկին : ( ) ասարագգի եւ շահա-  
 դեա թշնամեոյն վկայութիւն ընդունելի չէր .  
 պէտք էր որ Հայերը մոլորեալ են ըստզր Հա-  
 յոց դաւանութեանը եւ արարողութեանցը եւ  
 ազգային ոգւոյն ալ հմուտ ըլլայ՝ որ ըսած ո-  
 թանուի . այսինքն ազգաւ Հայ ըլլայ : Բսանկ  
 մարդ չէին կըրնաւ գտնել . բայց կըրնային հը-  
 նարել : Եւ ասանկ երկու գրուած հնարեցին .  
 մէկը Հայոց Սահակ կաթուղիկոսի մը , եւ մի-  
 սը հայազգի Արիստ Պոնապի ծգնաւորի մը ա-  
 նունով : Բայ վերջինս կըրնար իրական մէկ  
 անձ մը ըլլայ եւ ոչ կեղծեալ . միայն թէ Հայ  
 չէր . եւ Հայերուն վրայ ուրիշ յոյներէն ա-  
 ւելի տեղեկութիւն մը չունէր . միայն՝ անոնց  
 մինչեւ ասոր օրը Հայոց վրայ չձգած մոլորու-  
 թիւններ երեւակայիւր էր՝ յունաց ազգին մտա-  
 ցը յարմար . որով մարդահաճութիւն մ' ըրած  
 կըլլար , ամուղջ ուղղափառ ազգ մը զուպարու-  
 լով՝ որ Քրիստոնէական սիրոյ հակառակ է :  
 Տոյներն ասիկայ իրեւ սուրբ կընդունին եւ  
 կը տօնեն . Դասիններն ալ անոնցմէ սորված են :  
 Բայց մենք սուրբ առաքելոյն ըսածը գիտնա-  
 լով , որ առանց սերունենալու իր ըստը ինչ-  
 քը աղքատներուն՝ եւ իր անձը կրակի տալն  
 անդամ ոչինչ է , ասոր համար հրաշք ալ ըրած  
 պատմուի նէ՝ որ այնպէս բան մը պատմուած ալ  
 չկայ , սուրբ ըլլալուն չեմք համոզուիր . անոնց  
 կարգը կը գնեմք որ վերջին ահաւոր օրը Քրիս-  
 տոսի դատողական ասանին առաջը պիտի ըսեն .

ով տէր . չէ՞ մի օր մենք քու անուամբ մար-  
 գարեացանք եւ քարոզութիւններ ըրինք . քու  
 անունովդ գեւեր հանեցինք . քու անունովդ  
 շատ հրաշքներ ըլինք . եւ Տերն մեր անոնց պա-  
 տասխան պիտի տայ . ո՞չ գիտեմ դձեզ . Ի բաց  
 , կացէր յինէն ամենայն մշակքդ անիրաւու-  
 թիւնն : ( ) Գր . Եր . 27 . կըրնայ ըլլալ  
 որ Արիստ յիրաւի սուրբ անձ մ' ըլլայ . այն ա-  
 տենք անոր անունը կրող գործն անհարազատ  
 կըլլայ . եւ յոյները անոր Հայաստանի քանի  
 մի տեղերն երթալով ասպաշխարութիւն քարո-  
 ղելը հաւատք քարոզելու հետ շիտթելով՝ մնա-  
 ցածն ալ իրենց երեւակայութեամբը հնարած  
 կըլլան :

Եւ արգարեւ հզօր երեւակայութիւն ունե-  
 ին յոյները . որ նոր մարդ մ' ալ հնարեցին ա-  
 նանկ յատկութիւն եւ հանգամանք տալով՝ որ  
 անոր Հայ ըլլալն անտարակուսելի կընէր . մի-  
 այն թէ իրօք այդպէս անձ մը գտնուէր . եւ այս  
 էր Սահակ կաթուղիկոս մը . որուն անունովը  
 գրութիւն մը հրատարակեցին Հայոց ունին կար-  
 ծուած մոլորութիւններուն դէմ : Այդո՞ւնաց մէ-  
 ջը անտեղութիւն մը կար , որ բանին սաու-  
 թիւնը ինքնին յայտնելու բաւական էր , թէ  
 որ դատողութիւնն անաչառ եւ առանց նախա-  
 պաշարման ըլլար : Հայոց կաթուղիկոս մը՝ իր  
 ազգը լուսաւորելու եւ մոլորութիւններէ ազա-  
 տելու համար ի՞նչ հարկէ կըստիպուէր յու-  
 նարէն գրելու եւ գրածը յունաց մէջ աարա-

ծելու : Հայերէն գրէր նէ աւելի արգիւնաւոր  
 չէր ըլլար արգեօք : Գոնէ յունարէն գրելէն  
 հասկըցուելու էր որ իր ազգը օտարներուն ա-  
 ոաջը բամբասել եւ անուանարկ ընել կուզէ ,  
 իւր ազգին թշնամի է . ուստի եւ ըսածն ալ  
 թշնամույ վկայութիւն ըլլալով անընդունելի է :

Ասոնք չմտածելով գրութիւնը հարազատ  
 սեպողներուն նա եւ եւրոպացի հմուտ մատե-  
 նագիրներուն մէջ ալ բանը կը մնար գիտնալ  
 թէ որ ժամանակի մարդ էր ասիկայ : Գրութիւ-  
 նըն անանկ կը ցուցընէր որ առան եւ մէկերորդ  
 դարուն մէջն եղած ըլլայ . բայց այն ժամանակը  
 եւ անկէջ շատ տարիներ առաջ՝ Սահակ անունով  
 կաթուղիկոս նստած չէր սուրբ Լուսաւորչի ա-  
 թուր : Ս'եծն Սահակ Պարթեւ՝ Վարդկեզոնի  
 ժողովքէն առաջ վախճանած էր . երկրորդ Սա-  
 հակը 515 թուին , եւ երրորդ Սահակը 693 ին  
 իրենց կենաց արգիւնաւոր ընթացքը վճարած  
 էին . եւ ասոնցմէ ետքը չկայ Սահակ կաթու-  
 ղիկոս մը մինչեւ չորրորդ Սահակը որ 1624 ին ,  
 այսինքն՝ այն սուտանուն Սահակին կեղծուած  
 ժամանակէն 5 կամ 600 տարի ետքը կաթուղիկոս  
 եղաւ : Լըքիէն գաղղիացի մատենագիրն իրեն  
 Վրէտարասարասն արեւել մակադրեալ գրքին մէջ  
 ( ասոր Լ . էջ 1356 ) , կը կարծէ թէ Սահակ  
 երրորդն է այս : Բայց ետքը աւելի նըբագին  
 մարդիկ Հայոց պատմութեան ժամանակագրու-  
 թենէն հասկըցան որ այս չէր կրնար ըլլալ , եւ  
 վերջապէս վճռեցին որ յունական հակասուեա-

սէր ուղեղէ ծնած անգոյ Սահակ մ'է . եւ գըր-  
 ուածոյն յարպն եւրոպացի իմաստնոց տաջը  
 կարեցաւ : Արվեստը անուն նոր հեղինակ մը՝  
 Ալեքեյուլին ժարենտրոց Բարսեղին մէջ այս Սահ-  
 կը չէ թէ կաթուղիկոս՝ այլ մէկ իր ազգէն բանագ-  
 րանօր մերժուած եպիսկոպոս մը կընէ . եւ ժա-  
 մանակ ալ կը յատկացընէ գրածները հրատարա-  
 կելուն . առջին ճառը 1130 ին գրած կըսէ .  
 Չմը գիտեթ թէ եպիսկոպոս ըսելն որկէց ա-  
 ուեր է՝ որ յոյները Հայոց կաթուղիկոս է ըսին .  
 եւ Լըքիէն ալ անոնց ըսածին հաւատալով՝ ժա-  
 մանակը բընտըռելու ելաւ . եւ Սահակ երրորդ  
 կաթուղիկոսինն է կարծեց՝ որ եթներորդ դա-  
 րուն մէջն էր : Կերեւի որ յոյնք կամ եւրոպացիք  
 տեսնելով որ ասանկ գրութիւն մը հանելու  
 յարմար Սահակ անունով կաթուղիկոս մը չը-  
 գըտնուիր , բայց հրատարակուած պարսաւագիրն  
 ալ Սահակ անունով բարձրաստիճան եկեղեցա-  
 կանի մը գործ ըլլալուն հաւատալով՝ Սահակը  
 եպիսկոպոս ըլլալ ենթադրեցին . եւ Արվեստը  
 իր ըսածն անոնցմէ առած կըլլայ : Բայց բանն  
 ասանկ ըլլալով՝ թէ որ յիշուի գիրքը հայու  
 գործ կը կարծէին նէ՝ աչքերնուն առաջը յարգը  
 բոլորովին կորսընցընելու էր : Իր ազգին եպիս-  
 կոպոսներէն մերժուած , կամ զանոնք չընդու-  
 նող եւ մերժող եպիսկոպոս մը՝ ի հարկէ անոնց  
 հետ թշնամանալու պատճառ մը ունեցած կըլ-  
 լայ . բաժնուելէն ետքը անոնց թշնամի կըլլայ .  
 եւ իր բաժնուիլն արգարացընելու համար ա-

նոնց վրայ գէշ կը խօսի եւ զրգարտութիւն կը  
 նէ . որով ըսածնեքն ալ հաւատարմութեան ար-  
 ժանի չեն բլլար : Սակայն եպիսկոպոս մ'էր ը-  
 սելով ալ այս Սահակիս իրական գոյութիւնը չըս-  
 տու գուիր : Եպիսկոպոս մը՝ կրօնական տարբե-  
 բութեանց պատճառաւ իր աղգին միւս եպիսկո-  
 պոսներուն հաղորդակցութենէն զատուիլն ե-  
 րեւելի բան մ'է . զոր հարկաւ ժամանակին  
 պատմիչները յիշելու էին . ինչպէս որ Սիմէոն  
 Յիւզեկ եւ Ներսէս Պաղատն եպիսկոպոսները մեր  
 պատմութեանց մէջ յիշատակուած են : Եւսպիսի  
 Սահակ եպիսկոպոսի մը մեր պատմութեանց մէջ  
 յիշատակը բնաւ չկենալուն համար կըսենք թէ  
 ինքն ալ իրական գոյութիւն չունի . միայն ա-  
 տելութեան ոգւով տարցած յունական երեւա-  
 կայութեան բերք մ'է :

Հայոց վրայ Յոյներն ինչ մոլորութիւններ  
 կը ձգէին՝ գիտնալու համար այս տեղս այս ի-  
 սահակ եպիսկոպոսի անունով հրատարակեալ  
 գրուածոյն իմաստը՝ վերոյիշեալ Վրլէտոգրէն  
 տունելով նշանակելը՝ գործոյս ընթացից մէջ  
 խօսուելիք քանի մի նիւթոց պարզաբանութեանը  
 օգուտ ընելուն համար հոս դնելը պատշաճ կը  
 սեպիմք : Վրլիաւոր ամբաստանութիւնը այն է  
 որ կըսէ թէ Հայք անպակասբասան ըսուած հե-  
 բետիկոսներուն մոլորութեանը կը հետեւին .  
 այսինքն՝ կը կարծեն թէ Վրլիչին մերոյ աւած  
 մարմինը մերինին ըման չէր . այլ իր բնութեամ-  
 քն անչարչարելի եւ անմահ եւ անստեղծ եւ

անսեռանելի մարմին մ'առած էր , որ մարդե-  
 դութեամբն Աստուածային բնութեան փոխուած՝  
 եւ որպէս թէ նոյն բնութեան մէջ ընկրդմած  
 էր . ինչպէս որ ծովու մէջ կաթիլ մը մեղր կա-  
 թեցընես նէ ջրոյն հետ անանկ կը խառնուի որ  
 ներկայութեանը բոլորովին նշան մը չցուցընէր :  
 Վճ կըրնայ նէ թող երեւակայէ թէ իր բնու-  
 թեամբն անստեղծ եւ անմահ մարմին ինչ բնել է :  
 Եւ յոյնք՝ Հայոց սուրբ Եսայիոսի երգը խղե-  
 ցարով ըսելու համար դանտեր Աստուածային  
 հեբետիկոսներուն կարգը դասելէն ետքը ինչ-  
 պէս իմանամք ըսելին թէ Հայք Վրլիաւոր  
 մարմինն անչարչարելի կը հաւատան : Եւս եր-  
 կու մոլորութեանցս իրարու հակառակ ըլլալը  
 չհասկըցան արդեօք . որոց մէկը անչարչարելի  
 մարմին կերպէ , եւ միւսը զնոյն ինքն անմար-  
 մին եւ աննիւթական աստուածութիւնն չարչա-  
 րելի կը բաջաղէ : Բայց կը գտնուին անանկ  
 դերահաւան խնկեր՝ որ ասոնց երկուքին մէ-  
 կէն մի եւ նոյն մարդու մտքին մէջ իբրեւ հա-  
 ւատք գտնուելուն կը հաւատան : Սահակայ  
 անուամբ հրատարակեալ գրուածոյն հաւատա-  
 ցողներն ալ այսպիսինքն էին :

Կոյն գրուածը կըսէր որ Հայք յիշեալ մո-  
 լորական սկզբանց հետեւութեամբ չէին ուզեր  
 սուրբ Հաղորդութեան խորհուրդը Յիսուսի  
 Վրլիաւոր մարմնոյ պատարագ ձանչեալ . այլ  
 Աստուածութեան կամ Աստուածային բնութեան  
 մէկ խորհրդական գենու մնէ կըսէին : Եւս ան-

Ճոռնի մուրուսութիւնները Հայոց վրայ կեղծե-  
լէն ետքը՝ սրբոյն ամանասայ եւ սրբոյն Աիւր-  
դի ազիբասնդրացւոյ վկայութիւններով այս մու-  
րուսութիւնները կը հերքէ :

Ետքը եկեղեցական բարեկարգութեանց դէմ  
ունեցած սովորութիւններն, կամ ունենալ կար-  
ծուածները մէջ կը բերէ իրրեւ մէկ մէկ հե-  
րետիկոսութիւն : Ըստնց կարգը կըսէ որ Հայք  
պատճառելով որ սուրբ Ըստուածածնի Ըւե-  
տումը մարտի մէջ եղած չէ (ինչպէս որ յոյնք  
եւ արեւմտեայք կըսեն թէ մարտի 25ին է) ,  
մնաւ Ըւեռեաց տօն չեն կատարեր : Ըստ պարա-  
գայիս համար է որ վերն ըսինք թէ այս գըր-  
ուածս փրկչի թուականութեան տասն եւ մէկ-  
երորդ դարէն առաջ շինուած ըլլալու է : վասն  
զի սուրբ Պրիգոր վկայաւերն այս դարուն մէջ  
էր որ յառկապէս Ըւետման տօնին օրն երգուե-  
լու համար շարական յօրինեց : Սահակ կը պըն-  
դէ թէ ա. ետումը մարտի 25ին եղած է . եւ  
ի հաստատութիւն՝ իշտերեայ եւ սրբոյն Ըթա-  
նասի եւ սուրբ Ոսկերեբանի անունով խօսքեր  
մէջ կը բերէ . բայց Արվեսդը կըսէ թէ այս խօս-  
քերն ամենն ալ ստութեամբ յիշեալ հայրապե-  
տաց կարծուած անհարազատ գրքերէ ժողվուած  
են :

Հանցանք մ'ալ այն կը դնէ՝ որ Հայք սուրբ  
պատարագը բազարջ հացով կընեն . եւ կը պըն-  
դէ որ Քրիստոս Տէրն մեր խմորուն հացով ը-  
րած էր . եւ բազարջով ըրած ըլլար ալ նէ՝ ա-

նոր հետեւիլ պէտք չէր կըսէ . եւ պատճառ  
կուսայ որ սուրբ խորհրդոյ տրարողութեանց  
մէջ շատ բաներ կան որ Տեառն մերոյ ըրածին  
չեն համեմատիր . եւ բառին հաստատութիւն՝  
քանի մի օրինակներ ալ կը բերէ :

Արսէ որ Հայերը սուրբ Խաչին արժանա-  
ւոր յարգութիւն չեն տար՝ եւ երեք Խաչ մե-  
կէն կը դնեն սեղանին վրայ եւ կերկրպագեն  
իրրեւ սուրբ Երրորդութեան : Արվեսդը այս  
ամբաստանութիւնը կամ զրպարտութիւնն իրա-  
ւամբ ըրած կը կարծէ . որպէս թէ Հայք յի-  
րաւի սուրբ Խաչին արժանաւոր յարգութիւն  
չեն մատուցաներ . եւ գուրբ Երրորդութիւնն  
խաչեալ դաւանելինն ցուցընելու համար է  
սեղանին վրայ երեք Խաչ դնելնին : Ըստ իրա-  
ւունքը ինչի վրայ հիմնած ըլլալը Հայտաներ  
որ գիտնայինք թէ ինքն ինչ իրաւամբ այս գըր-  
ուածոյս զրպարտութեանցն իրաւունք կուտայ :  
Ըսոր հակառակ մուրուսութիւն մը կերպով Հայոց  
վրայ՝ Ահիկիօրոս Ալիստոս յոյն պատմիչը  
(Պատմ. Ահի. մ. 54) . որպէս թէ Հայք  
մնաւ սուրբ պատկերաց յարգութիւն չտալով  
միայն սուրբ Խաչը կը յարգեն եղեր . եւ այս  
կարծեցեալ հերետիկոսութիւնս մէկ բառով  
դիւրաւ հասկըցընելու համար կոչելնդարեան բա-  
ռը կը հնարէ , որ Հայերէն Խաչին ծառայի բա-  
ռին աղաւազութիւնն է : Սահակայ անուամբ  
Տրատարակեալ գրուածոյն հաւատացողներուն  
մէջ անանկներ ալ կը գտնուին որ Ահիկիօրո-

սի ըսածին ալ կը հաւատան . այս երկու իրա-  
րու հակառակ զրպարտութեանց մէկէն հաւա-  
տան ինչպէս կընեն՝ չեմք գիտեր . թէ որ ո-  
մանք այսպէս եւ ոմանք այնպէս կը հաւատային  
ըսեն նէ՝ երկուքն ալ Հայոց ազգին ընդհա-  
նուրին մոլորութիւնը չըլլար . եւ մասնաւորաց  
մոլորութիւններն ըլլալուն համար բանի տեղ  
դնել չարժեր :

Կարծեցեալ Սահակը Հայոց վրայ հերե-  
տիկոսութիւն եւ մոլորութիւն մ'ալ կը սեպէ  
առաջաւորաց պահքը բըռնելին . եւ այս սո-  
վորութիւնը սնապաշտութիւն կանուանէ . եւ  
այս պահոց ծագումը ցուցընելու համար Հա-  
յոց բերած փաստերը հերքելէն ետքը Հայերը  
կը յորդորէ որ այս մոլորութիւնները ձգեն .  
եւ ժողովքներուն եւ Հոովմայ եպիսկոպոսնե-  
րուն բերնովը եկեղեցւոյ ընդունած հաւատ-  
քին եւ կանոնացը հակառակ բաներէն հրաժա-  
րին : Հոովմայ եկեղեցւոյ հաւատքը եւ կանոն-  
ները ցուցընելէն ալ կը հասկըցուի որ գրուա-  
ծոյս հեղինակը յունայ Հոովմէն որոշ եւ  
վերջնական բաժանումէն առաջ է . եւ այս բա-  
ժանումը՝ 1053ին եղաւ Միքայել Կերուլա-  
րիոս յունաց պատրիարքին օրը :

Մինչեւ հոս նշանակածնիս՝ Սահակայ կար-  
ծուած գրուածոյս առաջին մասին համառօտու-  
թիւնն էր : Երկրորդ մաս մ'ալ ունի որ ա-  
ռաջինէն կարճ է . եւ ասոր մէջ Հայոց վրայ  
քան եւ ինն տեւակ հերետիկոսական մոլորու-

թիւն կը ձգէ եւ մէկիկ մէկիկ կը հերքէ . բայց  
Սովետոր կըսէ թէ ասոնք աւելի ընդդէմ ե-  
կեղեցական կարգաց զեղծումներ են , բան թէ  
վարդապետական մոլորութիւններ . եւ ասոնց  
մէջէն մասնաւորապէս հետեւեալները կը յիշէ :  
Արսէ եղեր որ Հայերը սուրբ Միւռոնը ամէն  
ազգաց մէջ սովորութիւն եղածին պէս ձիթոյ  
եղէն շինելուն տեղը շողգամի հունտով կը շի-  
նեն եղեր . եւ նոր մկրտուածները չեն օծեր  
եղեր . եւ սուրբ պատարագը իրենց ամէն օր-  
ուան հագած սովորական լաթերովը կը մատու-  
ցանեն եղեր . եւ սուրբ պատարագի ժամանակ  
գլուխնին չեն բանար եղեր . եւ հրեաներուն  
նման՝ զատկին օրը զառ մը կը մորթեն եւ ա-  
րիւնը իրենց տանը դրանը վրայ կը քսեն , եւ  
աւելցածը օրհնութեանց ծառայելու կը պահեն  
եղեր : Ընչա՛ս ասոնք են Սահակայ անունով յու-  
նասնար զրպարտիչ գրքին պարունակածներուն  
համառօտութիւնը , եւ ասիկայ համառօտողը ա-  
նոր կը ցաւի որ հեղինակը Հայոց մոլորութիւն-  
ները հերքած ատենը ինքն ալ մոլորական բա-  
նէր կը խօսի : Ըսել է որ այս Սահակը զոր եր-  
բեմն կաթողիկոս կը կարծէին եւ ետքը եպիս-  
կոպոսութեան իջեցուցին , հերետիկոսութիւն  
ալ ունի եղեր , այսինքն՝ այս գրուածս հնարող  
յոյնը հերետիկոս մ'է եղեր :

Ըստ երկու զրպարտիչ յոյն գրութեանց հե-  
ղինակներուն , որ Կիկոնի եւ Սահակ կաթու-  
ղիկոսի անունով իրենց գրածը յարգի ընել ու-

զեցին՝ ուրիշ ձայնակիցներ ալ դռնու եցան՝ որ  
 բնիկ իրենց անունովն երեւան ելլելովնին գոնէ  
 անկեղծութեան արդիւնքն ու աղէկութիւնն ու-  
 նին . եւ ասոնք են՝ Վիլիփորոս Վարխտոս պատ-  
 միչը եւ Եւտիմիոս Օլիգովէնոս աստուածարա-  
 նը՝ բայց առաջին երկուքը չ'ոյ կարծուելիուն  
 համար այնքան մեծ հեղինակութիւն ունեցան  
 որ իմաստուն կարգացողներուն անգամ դատո-  
 դական զօրութիւնը բթացուցին . ինչպէս որ  
 տեսանք եւ պիտի տեսնենք :

Տոյներն զայս այսքան մոլորութեանց  
 մէջ ինկած անսելով ասոնց վկայութեամբը ,  
 անոնց ճշմարիտ քրիստոնեայ ըլլալէն ալ կաս-  
 կածելու սկսան . եւ չ'այ մը թէ որ յունաց  
 եկեղեցին մտնել ուղեր նէ կմկրտէին , որպէս  
 թէ քրիստոնէութեան դարձող հեթանոս մ'ը -  
 լար՝ չ'այք ալ ասեն մը՝ իրր անոր փոխարէն ,  
 բայց պարսաւելի մտածութեամբ , ձեռքերնին  
 անցած յոյները կմկրտէին\* . բայց ասիկայ չ'ա-  
 յոց մէջ շատ չտեսեց . որ այդպէս ընդդէմ  
 քրիստոնէութեան բան մը չեն կրնար երկար  
 ատեն մէջերնին պահել , թէ եւ մտնելը կա-  
 թուղիկոսի թոյլտուութեամբ եղած ըլլայ :  
 Չ'այերն ստուգիւ եւտիրական ըլլային ալ նէ՝  
 որովհետեւ եւտիրականներուն սուրբ Երրոր-

դութեան վրայ ունեցած հաւատքնին մոլորա-  
 կան էր բողջ չ'այ . եւ յանուն սուրբ Երրոր-  
 դութեան եղած մկրտութիւնն անկրկնելի է :  
 Եւտիրականները կրկին մկրտել չէր ըլլար . ուս-  
 տի փրկչի 1672 թուին Վեթլէհէմ գումար-  
 ուած յունաց եկեղեցական ժողովքը՝ յանուն  
 ամենասուրբ Երրորդութեան մկրտականքը նո-  
 րէն մկրտողներուն նպովը կուտայ . եւ ուսաց  
 յունադաւան եկեղեցւոյն սուրբ սինոդը Աստ-  
 անդունուպօլսի յունաց պատրիարքին գիր գրեց  
 որ չ'այերը մկրտելը վերջացընէ՝ ինչպէս որ  
 Առաստատանի մէջ վերջացած էր . բայց պատրի-  
 արքը անոնց խնդիրը կատարելը իր իրաւաբա-  
 նութեան եղծում մը համարելով՝ բացէ ՚ի բաց  
 մերժեց . Ետքերը քանի մի անգամ Աստան-  
 դունուպօլսի չ'այոց պատրիարքները նոյնն ընել  
 առաջարկեցին . յունաց պատրիարքը խոտոացաւ  
 որ քահանայներուն պատուիրէ որ յոյն եղող  
 հայերը չ'մկրտեն , եւ մտիկ չ'ընողը պատժէ .  
 բայց տակաւին նոյն կրկին մկրտութեան սովո-  
 րութիւնը կը շարունակէ . եւ մկրտող յոյն քա-  
 հանայի մը պատիժ կրելը լսուած չէ :

\*Տէս ինչ որ այս նիւթոյս վրայ գրած էմք Ե-  
 րեւանի մէջ . յատկապէս 1858 ասուոյն նոյն . 1  
 եւ 10 եւ դեկտ. 1 թիւերուն մէջ :

Գ Լ ՈՒ Խ Գ .

Յունաց զբարտաթիւններուն՝ Լատիններուն  
մէջ ըսած ազդեցութիւնը :

Հռովմայ եկեղեցին առաջուց 'ի վեր Հայոց  
եկեղեցւոյն հետ անմիջական յարաբերութիւն  
մը չունէր . մէկ թղթակցութիւն մը չկար մեր  
կաթողիկոսներուն հետ . վասն զի սուրբ Լու-  
սաւորչի օրէն Հայաստանեայց անկախութիւնը  
եւ ինքնօրինութիւնը Հռովմ ճանչցած էր :  
Շիրաւի կրօնական դաւանութեան մէջ Էնթուր-  
նաթիւն ըսելը հերետիկասութիւն ըսել ըլլալով  
անոր աչք գոցել չէր ըլլար . ո՛ր եւ իցէ եկեղե-  
ցւոյ հովիւ մը իրաւունք ունէր դատախազելու .  
եւ Հռովմ ալ Հայոց համար յունաց ըսած-  
ները կըլսէր՝ բայց չէր հաւատար . որովհետեւ  
լոկ բերնով զրուցուած էին . գրով ալ կար նէ՛  
անանկ բաներու մէջ էին որ Հռովմայ եկեղեց-  
ւոյն ալ կգպչէր :

Հռովմ սկիզբէն 'ի վեր Քաղկեդոնի ժողով-  
քը լըման չէր ընդունած՝ յունաց Աոստանդ-  
նուպօլսոյ եպիսկոպոսին պատրիարքութիւն՝ եւ  
Բղէքսանդրիոյ եւ Ընտիրոյ պատրիարքներէն  
վեր եւ միայն Հռովմայ հայրապետէն վար գե-  
րագահութիւն տալուն համար՝ զոր իրեն իրա-  
ւունք կը ծանչնար տալը : Հայերուն համար ալ  
լսելով որ նոյն ժողովը չեն ընդունիր , յունաց

մէջ ալ ծանր հակառակութիւններու տակ ինկած  
ըլլալը գիտնալով , Հայոց չընդունելուն չէ՛  
թէ Եւտալիքէսն ընդունիրը , այլ ուրիշ պատճառ-  
ներ տալն աւելի հաւանական էր : 692 թուին  
Աոստանդնուպօլիս կայսերական պալատը գումար-  
ուած եւ Տրուդեան ըսուած ժողովն զՀայը կը  
դատապարտէր . բայց Հռովմայ դէմ ալ կանոն-  
ներ գրած ըլլալով Հռովմ նոյն ժողովը չըն-  
դունեց . թէ՛ եւ նոյն ժողովը գումարելու հը-  
րաման տուող Յուստինիանոս Բ . կայսրը շատ  
ստիպեց Սերգիոս Ե . Հռովմայ հայրապետը , որ  
ժողովոյն վճռոյն ստորագրէ . բայց ստորագրել  
տալն անհնար եղաւ : Եւսու ամենայնիւ մեզի  
դէմ խօսող հռովմէականները երբեմն այս ժո-  
ղովոյս վճիռը մեզի դէմ կը հանեն : Եսոր վը-  
րայ գործոյս քննողական մասին մէջ քիչ մ'ըն-  
դարձակ խօսելու կարգը կուգայ :

Ետքի ատենները երբ յունաց ընդդէմ Հա-  
յոց գրքերը տարածեցան , եւ ծանապարհորդնե-  
րըն ալ Իտալիա յաճախեցին , հնարած չարախօ-  
սութիւննին լսելի եղաւ . բայց այն ժամանակն  
ալ հաւատալի չէր ըլլար . թէ որ ազգատեաց  
եւ մոլորեալ Հայ մը իւր բնիկ ազգն իւրեւ  
մոլորեալ չցուցընէր : Մակար անուն հայազգի  
մը մոլորութիւններ քարոզելուն՝ եւ բոլոր Հայք  
այսպէս կը հաւատան ըսելով իւր եկեղեցին զըր-  
պարտելուն համար Հայաստանէն վըրնտուելով  
Իտալիա անցեր եւ Պէնէվէնտ քաղաքը պատըս-  
պարուեր էր : Գուցէ այս Մակարը թոնդրակե-

ցիներէն էր՝ որ այն ժամանակները Հայոց իշխաններէն կը վրոքընտուէին . եւ մեր Գրիգոր Մագիստրոս բարեպաշտ իշխանը ձեռքը անցածներուն ձակատը հրացեալ երկաթով աղուէսի պատկեր դրոշմելով Հայաստանէն կաքորէր : Պատմութիւնը կըսէ որ Սիւննադայի Հայոց արքեպիսկոպոսը\* կասկածելով , չըլլայ որ այդ իւր մոլորութիւնը իտալիա ալ տարածէ , եւ Հայոց ուղղափառութեանը վրայ ծուռ գաղափար մը տայ , իւր եկեղեցւոյն Գովհաննէս քահանային ձեռքը առ Գրիգոր Է . Հոռովմայ Հայրապետ

\* Սիւննադա՝ հին Փոխիգիայի առողջարար ըսուած մասին մայրաքաղաքն էր . որուն տեղը հիմակուէն քիւրդացիներ քաղաքին մօտ՝ Աւլաք գիւղաքաղաքին հարսուային կողմերը պիտի խնայ . ինչպէս որ կը նշանակէ Տիւրքուր՝ Էլեղեցիական պարսկական աշխարհադրոշմին մէջ : Մեզի հաւանելի չեք եւ իր որ ԺԱ դարուն մէջ այն կողմերը եպիսկոպոսարան մը ունենալու չափ Հայոց բազմութիւն գտնուած ըլլայ . եւ եպիսկոպոսնէն ալ արքեպիսկոպոս ըսուի . որ բնութարձակ վիճակ ունենցողն մը յատուկ է : Ուստի կը կարծեմք թէ Հոռովմայ Հայրապետին նամակին սկզբնադրին մէջ գրուած սիւնիտէ — synidae — բառը , որ է՝ Սիւնիտայ , օրինակողին անձանթ ըլլալով կարծեմք է թէ synadae գրուելու էր , որ է Սիւննադայի , եւ ըստ այսմ , սրբաբերուէ դիտաւորութեամբ բնազիրն աւերեր է , եւ ըստ այսմ , մոլորեալ Մալտարին համար Քրիզոստէ . պատկն դիր գրագառ ոչ թէ Փոխիգիայի Սիւննադա քաղաքին , ալ մեծին Հայոց Սիւնեաց գաւառին արքեպիսկոպոսը կըլլայ :

ազդարար նամակ մը տալով Հոռովմ խրկեց : Պատկն այս դիրս առնելով՝ Պէնէվէնդի արքեպիսկոպոսին գիր գրեց որ քանի մի եպիսկոպոսներ՝ եւ Պատինեան լերան վանքին վանահայրը քովը կանչելով ժողով մ'ընէ . եւ Մակարին մոլորութիւններն ստուգելով անոր ձակատը հրացեալ երկաթով դրոշմէ եւ իւր երկիրներէն դուրս տքորէ : Եսիկայ ասիթ ըրնելով պատշաճ դատեց Հայոց եկեղեցւոյն հաստոցը վրայ յիշեալ արքեպիսկոպոսէն տեղեկութիւն ուզել . եւ [1080 յունիսի 6 թուականով գիր մը գրեց , որ իր նամակներուն կարգը հրատարակուած է ( Կր . Է . նամակ . 28 ) , բայց Հայոց արքեպիսկոպոսին առ պատն խըրկած պատասխանը չկայ :

Եսիկեց առջ ալ՝ կարելի է որ ուրիշ թոնդրակեցիք Հոռովմ կամ իտալիայի ուրիշ երկիրները փախչելով , եւ ըստ իւրեանց սովորութեան մոլորութիւննին ծածկելով Հայերն իրբեւ մոլորեալ ցուցուցին . եւ ուղղափառութիւնը Հայաստանէն բոլորովին մոռցուածի պէս Հոռովմ սորվիլ կուզէին : Պատմութիւնը մեզի կը սորվեցընէ որ այն աղանդաւորաց մէջ եպիսկոպոսներ ալ կային . իտալիա փախչողներուն մէջ ալ կըրնան ըլլալ . եւ մէկ եկեղեցւոյ մը եպիսկոպոսները ուղղափառ հաստորը չգիտնալին եւ սորվելու համար մինչեւ իտալիա եւ մինչեւ Հոռովմ ելթալնին կըրնար յիշեալ Հայրապետին իրաւունք տալ՝ 1074 թուին առ Հենրիկոս Գ թագաւոր Գերմանիոյ զրած նամակին մէջ ըսն



լու թէ Հայերը գրէ թէ ամէն ալ ուղղափառ  
 Հաւատքէ մոլորած են ( Գր. Ք. Նամակ . 31 ) .  
 Բայց Մակարայ՝ որ Հայոց եկեղեցին մոլորեալ  
 կըցուցընէր , իր մոլորութիւնները իմացուելով  
 Սիւննաբայի արքեպիսկոպոսին գրովը , Հայրա-  
 պետը Հայոց համար ուրիշներէ լսածներուն ճըշ-  
 մարտութեանը վրայ կասկածիլ սկսաւ . եւ նոյն  
 արքեպիսկոպոսին գրելը բաւական չսեպելով՝  
 մեր Ղրիգոր վկայասէր երանելի կաթուղիկոսէն  
 անմիջապէս ստուգել ուզեց՝ 1080 թուին ա-  
 նօր ալ յատուկ գիր գրելով , որ նոյն պապին  
 նամակաց հաւաքմանը մէջ կը գտնուի ( Գր. Ը .  
 Նամակ 1 ) . անոր սրբազան կաթուղիկոսը պա-  
 տասխանեց թէ Հռոմ երթալու ուխտ ըրած էր .  
 եւ ուխտին կատարման ժամանակը ասոր վրայ ալ  
 բերան առ բերան կը խօսին : Երանելի վկայա-  
 սէրին իրօք Հռովմ գացած ըլլալուն կը վկա-  
 յէ սուրբն Նէրսէս Շնորհալին՝ ոտանաւոր Է-  
 պասնախնայնը մէջ , եւ Վիրակոյ գանձակեցի իր  
 պատմութեանը մէջ ( Եր . 54 . Գր . Մոսկոսա .  
 1858 ) . բայց երկու մեծ Հայրապետները իրա-  
 րու հետ Հայոց դաւանութեան վրայ ինչ խօ-  
 սելին գրուած չէ ալ նէ՝ իրաւունք ունիմք  
 ըսելու թէ Հռովմայ Հայրապետը Հայոց ուղ-  
 ղափառութեանը համոզուեցաւ , եւ յունաց եւ  
 աղանդաւոր Հայոց տարածած համբաւը՝ որուն  
 հաւատացեր էր՝ սուտ ըլլալը իմացաւ . վասն  
 զի անկէց ետքը մինչեւ Յովհաննէս ԻԲ . Հը-  
 ոովմայ Հայրապետին օրը՝ թէպէտ խաչակիրնե-

Էրուն արեւելք անցնելուն պատճառովը Հռով-  
 մայ Հայրապետները Հայոց կաթուղիկոսներուն  
 եւ թագաւորներուն գիր կը գրէին , բայց Հա-  
 յոց եկեղեցւոյ հաւատքին ուղղափառութեանը  
 վրայ կասկած մը չէին ցուցընէր եւ միշտ ուղ-  
 ղափառ կը սեպէին :

Երանելի վկայասէրէն ետքը՝ Ողորտ Ֆրի-  
 սինկացին մէկ պատգամաւորութիւն մը եղած  
 կը պատմէ , որպէս թէ Հայոց կաթուղիկոսը  
 իր կողմէն եպիսկոպոսներ խրկած ըլլայ Հռով-  
 մայ Լւգինէոս Բ . պապին , որ 1143 թուին  
 նստաւ ( Ողորտ Ֆրիսինկ . Ժամանակագր . Գր .  
 Լյ . Գլ . 32 ) : Հայերը յունաց հետ վէճ ու-  
 նէին ամէն առանձին եկեղեցւոյ ծիսից վրայ . այս  
 վէճիս նիւթ եղած բաներուն համար Հռովմայ  
 եկեղեցւոյ սովորութիւնը հասկընալ կուզեն ե-  
 ղեր . եւ նոյ . 18 ին , Հռովմայ սուրբ Պետրո-  
 սի տաճարին նաւակատեաց տարեդարձին օրը  
 Պապը պատարագած ատենը գլուխը աղաւնի մը  
 մէկ երկու անգամ նստիլ ելլելը տեսնելով  
 հրաշք է ըսեր են . եւ ասոր վրայ սուրբ աթո-  
 ոոյն հնազանդութիւն խօստացեր են : Պատմու-  
 թիւնս ընողը Հայոց վրայ ծուռ գաղափար ու-  
 նենալով իր կարծիքը այս եպիսկոպոսներուն  
 բերանը կը դնէ : Ըստք որպէս թէ ըսած ըլ-  
 լան որ սուրբ պատարագին հացը յունաց պէս  
 խմորուն կընեն եղեր . բայց գինին ջուր չեն  
 խառներ եղեր : Ըստ պարագայս բաւական էր  
 նոյն իսկ պատմութիւնը բոլորովին սուտ չէ

ալ նէ՛ արժաւեր եւ կասկածելի ընելու : Ասոր ըսած ժամանակը հայոց կաթուղիկոս էր սուրբն Ներսէս Շնորհալոյն մեծ եղբայրը սուրբն Գրիգոր Պահլաւունին : Որուն համար այս բանիս նկատմամբ գիտցածնիս այս է՝ որ այս սուրբ հայրապետս 1141 կամ 43 թուին , կամ աւելի կանուխ՝ 1136 ին , սուրբ Երուստղէմ գրանուելով մէկ ժողովքի մէջ զոր լատիններն ըրած էին՝ մեր եկեղեցական ծիսից վրայ խօսք բացուեցաւ , լատինները կը յորդորէին որ Հայերն անոնք փոխեն եւ շիակնն . սուրբ հայրապետը շիակելու վրայ խօսք տուաւ՝ թէ որ շիակելու բան կարնէ : Ետքը սուրբը որ տեսնող լատինները անոր համար մեծամեծ գովութիւններ գրեցին Հռովմայ հայրապետին . այն ալ մեր կաթուղիկոսին սիրոյ գիր եւ դաւայան եւ կաթողիկոսական քող ընծայ խրկեց : Բսիկայ կը պատմէ երանելին Ներսէս Լամբրոսացի , որ ժամանակակից էր ( Ներսէս Ներսէս Երուստղէմ ) : Բսիկայ՝ Աղգոն Գրիգորիկացիին պատմածէն առաջ կըլլայ . եւ այս ըսածներս Խննովկենտիո Վ . Հռովմայ հայրապետը խըրկած կըլլայ . եւ որովհետեւ մինչեւ այն ատենը սուրբ Գրիգոր կաթուղիկոսին Հռովմայ հետ յարաբերութիւնը չյիշուիր , իր կողմէն հնազանդութիւն խոստանալը Հռովմ եպիսկոպոսներ խրկելուն շինծու պատճառ մը կըլլայ . բուն պատճառն այն կըլլայ որ յոյները ծիսից տարբերութիւնն առիթ բռնելով հաւատքին վրայ

ալ զրպարտութիւններ հնարեն եւ հրատարակեն նէ Հաւատացուի : Ըսածներուս մէկ ապացոյցն ալ , եւ ըստ իս՝ գորաւորագոյնն այն է , որ ոչ սուրբ Գրիգոր Պահլաւունիին՝ եւ ոչ անոր եղբորը սուրբ Ներսէսի Շնորհալոյ օրը՝ Հռովմայ հետ միաբանելու ժողովք մը չեղաւ , որ ըլլալու էր՝ թէ որ Գրիգորիկացիին պատմածն ըստ ամենայնի ստոյգ ըլլար : Լատինք այն ատենէն հայոց հետ աւելի մօտանց յարաբերութիւն ունենալով՝ յունաց սիտած չարախօսութեանցը բոլորովին զրպարտութիւն ըլլալուն աղէկ համոզուեցան :

Գուցէ այս էր պատճառը որ յոյնք այն ատենը դարձեալ փորձ մ՝ ըրին Հայոց հետ միաբանելու . վասն զի հասկըցան որ անոնց համար ըրած չարախօսութիւննին Լատիններուն ազանջը չէր մտներ . յարգը կորսուած էր . միաբանութիւնը յաջողէր նէ՛ իրենց դիւրին կըլլար ըսելը թէ Հայոց համար մեր գրքերուն մէջ գրուածները ցնշանախեցս անդամ շիտակ են . եւ հիմայ որ մէջերնին այնպիսի մոլորութիւն չըլլաւ իր նէ՛՝ մեզի հետ միաբանելունն արդիւնքն է որ մոլար հաւատքնին շիտկուեցաւ : Ասոր համար եղաւ կը կարծեմք , յունաց Մանուէլ կայսեր եւ անոր փեսայ Լեւքս իշխանին եւ Միքայէլ պատրիարքին առ սուրբն Ներսէս Շնորհալի եւ առ եղբորորդի նորա Գրիգոր Տղայ նամակներ խրկելնին եւ պատասխաններ առնելնին . Թէ՛օրիւնէ փիլիսոփայ աստուածա-

րանին առ սուրբն Արքայն Շնորհալի երկուի-  
 ւել. որպէս թէ Հայերն փ մուրորութենէ 'ի  
 ճշմարտութիւն դարձնելու համար: Յունաց  
 այնպէս պորձանքի մը ակնկալութեամբ եւ ի-  
 րենց հին զրպարտիչ հեղինակնին սուտ չձգե-  
 լու համար Հայոց հետ միաբանելու զնոսն կար-  
 ծիրն ընելնու առիթ կուտայ թէ՛ որիանէ. որ  
 Առաջանդնու պոլիս դառնալէն կարք սուրբ Շ-  
 նորհալի հայրապետին հետ ըրած խօսակցու-  
 թիւնը յունական սգուով գունազեղելով կը  
 պատէ: Գրեւեւ թէ՛ որիանէի ժամանակը շատ  
 անդամ ստուգուած էր թէ խօսքով եւ թէ գրով  
 որ Քրիստոսի Տեառն մերոյ մի կամ երկու բը-  
 նութեան վրայ Հայոց հաւատքը անարատ է:  
 Թէ՛ որիանէի պատճառն նայելով ասանկ չէ ե-  
 դեր: Եւ սուրբ Արքայն Շնորհալին հաւատալ-  
 եաց այս յոգուածոյս վրայ մինչեւ այն ատենը  
 մուրորութեան մէջ ըլլալուն թէ՛ որիանէին խօս-  
 քովը համոզուեր է. մինչեւ այնքան որ՝ ասոր  
 հետ վերջին տեսութեան ժամանակը սուրբ  
 հայրապետին աչքը արցունքով լեցուելով թէ՛ որ-  
 իանէի ըսեր է. մեր բարեպաշտ կայսրը կաղա-  
 շեմ, որ երբ մեր եպիսկոպոսները Առաջանդնու-  
 պոլիս գան եւ մեր ըսած հաստատութիւնն ըն-  
 դուենն նէ՛ հրաման քնէ որ պատրիարքը սուրբ  
 պատարագի ժամանակ իր անձոսին վրայ նստած՝  
 իր հայրապետական զգեստը հագած եւ կենաց  
 փայտը ձեռքը բռնած ըլլալով բոլոր եկեղեցա-  
 կացոց եւ ժողովրդեան աւազը Հայոց ազգը

որհէ, եւ վախճանեալ հայոց համար ազօթը  
 ընէ որ անբխաւիւմ մեղանքն էին\*: Ահաւասիկ  
 Հայոց սուրբ հայրապետը՝ որ իր բոլոր ազգին,  
 այսինքն Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյն հա-  
 մար կը վկայէ եղեր, որ մեղաց մէջ էին մինչեւ  
 իւր ատենը. մեզքը ինչ ըլլալը յայտնի է.  
 Թէ՛ որիանէի հետ խօսակցութիւններնուս նիւթ  
 եղած բանին վրայ եղած կըլլայ: Հորկ էր որ  
 Շնորհալի սուրբ հայրապետը թէ որ յիրաւի  
 յոյն ինքնապարձ փիլիսոփային առաջն այս խօս-  
 տովանութիւնս ըրաւ նէ՛ անկեց ետքը առ Մի-  
 քայէլ պատրիարք Առաջանդնու պոլիս եւ առ  
 Մանուէլ կայսր գրած նամակներուն մէջ Քրիս-  
 տոսի Տեառն մերոյ մարդեղութեան խորհրդոյն  
 վրայ առաջին խօսքերուն կերպը փոխեր. բայց  
 մենք կը տեսնեմք որ՝ թէ՛ որիանէն տեսնելէն  
 շատ առաջ առ Ալէքս գրած թղթոյն դաւանու-  
 թիւնը ինչ էր նէ՛ ետքէն առ պատրիարքն եւ  
 առ կայսրն գրած դաւանութիւնն ալ նոյնն է:  
 Թէ՛ որիանէի անհիմն պարձանքին նպատակն ինչ  
 կըրնար ըլլալ. եթէ ո՛չ իրեն ժամանակի Հա-  
 յոց ուղղափառութիւնը հաստատելուն հետ  
 մէկ տեղ՝ հին Հայոց համար յունաց հնարած  
 սուտերն ալ իբրեւ ճշմարիտ բանել տալով ա-

\* Թէ՛ որիանէի տրամախօսութիւնը կը գտնուի Ան-  
 շէլօ Մայի կարգինալին կն Տալեմաքոս նոր հաստատ  
 գրքին վեցերորդ հատորին մէջ, եւ Մանուէլ յոյն-  
 աց Գրքանքեան մէջ. Կրք. Կր. եր. 38—420

նանկ ցուցընելու որ այն ատենուան Հայոց ուղղափառութիւնը յոյն փիլիսոփայներուն եւ սաստաճարաններուն արդիւնքն է :

Ինչ որ է նէ՛ թէ՛ որիանէի տրամաստու-  
թեան՝ եւ սուրբ Արքայէս Հնորձալին յու-  
նաց հետ թղթակցութեան ճշմարիտ արդիւնքն  
այն եղաւ որ յոյնք զՀայս ուղղափառ ձանձցան .  
իրենք ուղղափառ ըրին կամ առաջուց այնպէս  
էին . հոգ չէ . բաւական է որ այն ժամանակի  
դաւանութիւննին ուղղափառ էր . այս դաւանու-  
թեանս ասկէց առաջ տրուած դաւանութիւննե-  
րուն հետ համաձայն գտնուելը՝ միւս խնդիրն  
ալ կորոշէ եւ յունաց պարծանքը կը ջրէ : Իսկ  
վէճի նիւթ եղած ծէսերուն եւ արարողութիւն-  
ներուն եւ ս՛չ մէկ կէտին փոփոխութիւն մը չե-  
ղաւ . թէպէտ յունաց կողմէն առ սուրբ Հայ-  
րապետն եկած նամակներուն մէջ ասոնց վրայ  
ալ խօսք կար . 'ի հարկէ թէ՛ որիանէ ալ որ այս  
բաներուս համար խրկուեցաւ՝ երկուց ազգաց  
մէջ տարբերութիւնները վերնալու նպատակաւ՝  
սուրբ Հայրապետին հետ բան մը խօսած է . թէ-  
պէտ որ՝ ամենայնպէս մէջ այդպէս բան մը չկայ .  
վասն զի ճարտար փիլիսոփայն կուզէր այնպէս  
ցուցընել որ իր խօսքերովը դիմացինը յաղթա-  
հարեց . դաւանութեան վրայ ասիկայ կը լինցը-  
նելը դիւրին էր . արարողութեանցը վրայօք  
այդպէս բան մը խօսէր . նէ սուտը շուտով ե-  
րեւան կնլէր . գուցէ խօսեցաւ եւ փոփոխու-  
թիւնն անպատեհ եւ անհնար ըլլալուն ինքն

համոզուեցաւ . անոր համար խօսակցութիւններ-  
ունն այս մասը գրի առնելը վանց ըրաւ :

Սեղեղեցական անձի մը փաստաբուծիւն՝  
Հայոց Հոգևոր հետ ունեցած սիրալիր բարե-  
կամութիւնը քիչ մը աւերեց : Բայց այս աւերու-  
լըս ալ մինչեւ Հոգևոր հայրապետին չհասաւ .  
Խաչակիրներն Անտիոքայ տիրելէն ետքը այն  
տեղի Ասորի պատրիարքը չկըրցաւ իր աթոռոյն  
վրայ մնալ . Ասորի պատրիարք գրուեցաւ , որ  
մինչեւ Անտիոք Փռանկներուն ձեռքէն ելաւ  
եւ դարձեալ Խաչիֆէներուն ձեռքն անցաւ նէ՛  
քանի մի Ասորի պատրիարք իրարու յաջորդեցին .  
Ասոնց մէկը՝ Ալպերտ , ժամանակով Անտիոքայ  
պատրիարքութեան տակ ինկած աթոռներուն  
հետ Հայոց կաթողիկոսն ալ առնելով՝ որ այն  
ատենը Սիս կը նստէր , երբ տեսաւ որ անիկայ  
անկախութիւն մը մէջ կը բերէ եւ իր իրաւա-  
բանութեան տակը մըտնել չուզեր , Հոգևոր  
Հայրապետին գրեց . որ էր Գրիգոր թէ : Ասի-  
կայ առիթ տուաւ նոյն Հայրապետին՝ բանը  
Հայոց կաթողիկոսէն հետադատելու եւ անոր  
անկախութեան սկիզբը սրբոյն Սեղեղեստրոսի օ-  
րէն դանկով եւ ստուգելով ինքն ալ հաստա-  
տեց , եւ Անտիոքայ պատրիարքին իմացուց որ  
Հայոց կաթողիկոսին վրայ իշխանութիւն չը-  
կըրնար ունենալ . Ասիկայ կը պատմէ Ռայնայաի՝  
Բարանիոսի եկեղեցական գործերոց շարունակու-  
նը մէջ , ( յուն . 1239 ) . եւ Գրիգոր պապին  
առ Հիթուս Հայոց թագաւոր գրած նամակն

ալ մէջ կը բերէ . ուր սրբոյն Սեղբնատրոսի եւ ուրր Լուսաւորչին մէջ հաստատուն դաշինք եւ դած կը ցուցնէ : Նոյնը կընէ նա եւ ՃՄ դարուն մէջ Քննորդիկոսս ՃՄ կրորդ Հոռովմայ հայրապետը՝ Տարսուցան — ալ ԼՄ՛ի սուսնը — ասուով սկսած շրջաբերականին մէջ . որ արեւելեան երկիրները պարտող Հոռովմեական քարոզիչներուն ուղղուած : եւ հայերէնի ալ թարգմանուած եւ Հոռովմ տպուած է :

ԳԼՈՒԽ Գ.

Ունիդորներուն ճագումը եւ գործերնին :

Տան եւ չորսերորդ դարը՝ Խաչակիրներուն տկարացած եւ Ազգապատի իշխանութեան զորացած ժամանակն էր, որ եղաւ երբ Սէլահեատին Եւրոպացիները Պաղեստինէն եւ Մորոնց երկրէն բուն զօրութեամբ հանեց : Եւրոպացիներն իրենց այս կողմերը զօրաւոր գանուած ժամանակնին Հայոց Ռուբինեան թագաւորեալ տանը հետ խնամութիւն ալ ըրին . եւ երբ Ռուբինեանց արական ցեղը հատու, թագաւորութիւնը ժողովութեան օրինոք իգական ծիւղին անցաւ : որ էր Լուսինեան ըսուած անուանի Լատին ցեղը . եւ նոյն ցեղէն Հայոց թագաւորական տէրութեանը նստաւ Լեոն Ե . 1320ին :

Եւն ասենները՝ Ռարդուղիմէոս անուն Պատնիկեան կրօնաւոր մը քարոզչութեան պաշտօնով Հոռովմէն Պարսկաստան խրկուեցաւ : Մոր իրեն յանձնուած պաշտօնը կատարելու երկիրներուն սահմանէն դուրս էր Հայաստան . եւ Հոռովմ հայոց ազգին ուղղափառութեանը համոզուած ըլլալով՝ զանոնք իրմէն քարոզիչ ընդունելու կարօտ չէր ձանձնար : Ռարդուղիմէոս՝ Պարսից Մարաշա քաղաքի եպիսկոպոսութեան արտոգոսով, որ պարսից Եղէրպիճան գաւառին քաղաքներէն մէկն է, իր վիճակն երթալու համար հարկաւ Հայաստանի Մարաշա եւ Սիւնիք գաւառներէն պիտի անցնէր : Հոն հանդիպելով՝ հարեւանցի մը իւրեւ ճանապարհորդ լատին եպիսկոպոս մը ծանչցուեցաւ, եւ այն առաջին անգամին քանի մի սակաւաթիւ բարեկամ հազիւ թէ կրցաւ ստանալ . որովհետեւ երկար տան չէր կրնար հոն կենալ . հայոց լեզուն ալ դեռ սորված չէր . միայն պարսկերէն գիտէր : Իննաց Մարաշա իրեն յանձնուած վիճակը . եւ հոն հանդարտութեամբ իր գործին կը պարպէր . գուցէ հայոց հետ մինչեւ այն ասենն ունեցածէն աւելի յարաբերութիւն մ'ալ հաստատելու միտք չունէր : Եսայի Արեցի մեծաՏրուակ վարժապետ վարդապետին աշակերտներէն եւ Քրոնայ գիւղին իշխանական ցեղէն Յովհան վարդապետն իր մեծաւորին հրամանովը ստոր հետ տեսութեան գնաց . եւ անուշ լեզուէն եւ գիտութենէն որպէս թէ կախարդուելով

Հետը սիրով կապուեցաւ . լատիններէն սորվելու համար քովը կեցաւ . այս առիթով Քարգուղիմէոս եպիսկոպոսն Հայ լեզուին ուսմանը պարպեցաւ .

Ազգային ուսմանըը պահաս ձգելով օտար լեզուի պարապուներուն յատուկ եղած պակասութիւնը Հովհան Քաննեցիին ալ ունեցաւ . լատին լեզուին վրայ ձգած սէրը նոյն լեզուին ոճը Հայոց մէջ մտցունելու գրգռութեամբը չշատանալով՝ ազգային եկեղեցական արարողութիւններն ալ լատիններէն առնելով Հայոց մէջ խօթելու կը փափաքէր : Ըսոր Հետեւութիւնը կը լլար ազգը չէ՛ թէ միայն լեզուով եւ սովորութեամբ՝ այլ եւ եկեղեցական ծիսիւ ալ լատինացընել . ասոր ալ Հետեւութիւն կը լլար հայերուն լատիններու հետ մէկ գանկուած ըլլալը եւ Հայոց ազգութիւնը վերնալը : Յոյն մը երբ այսպէս փափաք մը ունենայ նէ՛ պատճառը կը հասկըցուի . յունաց բարգաւաճելուն համար հայ ազգը զոհելը անոր աչքին մեծ բան մը չերեւիր . բայց երբ ազգաւ բնիկ Հայ մը իւր ազգը լատինացընելու ելլէ , այն ալ՝ բնաւ օտար շարժառիթ մը չունենալով , ինչ կըրնայ ըլլալ այս , բայց եթէ պարսաւելի օտարասիրութիւն . եւ երբ օտարասիրութիւնը մինչեւ այս աստիճան հասնի՝ ազգատեցութիւնն անոր անբաժանելի ընկեր կը գըտնուի : Պատմութիւնը այս աստիճան հասած օտարասիրութեան հետ մէկ տեղ ազգատեցութեան պատկեր մը կը ներկայացընէ մեզի

Հովհան Քաննեցիին . ինչպէս որ ըսուելիքներէն կը հասկըցուի :

Միտքը դրաւ Քաննեցիին որ Հայոց եկեղեցւոյ ծէսերը եւ արարողութիւնները փոխէ եւ լատինականին հետ նոյնացընէ : Բայց գիտէր որ միայն լատին եպիսկոպոսի մը գործակցութիւն՝ ասանկ բան մը գլուխ հանելու բաւական չէր . ազգային ժողովով ըլլալու էր . բայց այսպիսի ժողովոյ մը համար պահանջուած պայմաններուն պէտք եղած տեղեկութիւնը չունենալ կերեւէր : Միայն այնքանը գիտէր որ առանձին ինքն ընդունի իւր ըստ այնմ վարուի նէ՛ ազգէն զատուիլ պիտի հետեւի՝ որ իրեն նախապէս էր : Իր գաղափարը Քարգուղիմէոս եպիսկոպոսին յայանեց . հետն առաւ Քրքնա տարաւ . քանի մի վարդապետ ժողովեց . որոց մէջ գոնէ մէկ հատ մ՝ ալ վիճակի տէր եպիսկոպոս չգտնուեցաւ . Հայոց եկեղեցւոյ ամէն արարողութիւնը մէկդի ձգելով լատին եկեղեցւոյ արարողութիւնը Հայոց եկեղեցւոյ մէջ մտցունել վճուեցին . եւ ըստ այնմ եկեղեցւոյ պաշտամանց յատկացեալ լատին գրքերը Հայերէնի դարձուցին : Քարգուղիմէոս եպիսկոպոսին անխոհմտութիւնն այն եղաւ , որ ուրիշ մտածութիւն չընէր ալ նէ՛ գոնէ Հայոց կաթողիկոսը կամ անկէց մէկ փոխանորդ մը եւ քանի մի եպիսկոպոսներ խորհուրդի կանչելը խորհելու էր : Ի՛նչ որ ասոնք գտնուէին նէ՛ գուցէ այն ժողովոյն պատճառելիք խոսվու թիւններուն առա-

ջըն առնուէր : Արքային յիշեցընել թէ Հայք  
 իրենց առաջին առաքելական եւ Առաւորչական  
 աւանդութենէն զատուելու երբէք յանձնառու  
 եղած չեն եւ չեն ըլլար . որովհետեւ գիտեն  
 որ նոյն աւանդութեամբ կը վարուէին Տին ա-  
 տենը բոլոր արեւելեան եկեղեցիք : Գիտէին որ  
 ժողով մը վաւերական եւ ընդունելի ընելու  
 համար ներկայ եպիսկոպոսաց բազմութեան հա-  
 ւանութիւնը , կամ ըստ սահմանադրական լեզ-  
 օւի խօսելով՝ քուէից աւաւելութիւնը բաւա-  
 կան չէ . մանաւանդ թէ ոչինչ է՝ երբ նախնա-  
 կան եկեղեցւոյ աւանդութեանցը հակառակ  
 կուգայ . եւ Սոյ եւ Ըստանայի Ժողովներուն  
 որոց երկրորդը նոյն Քարգուղիմէոս եպիսկոպո-  
 սին առաջին անգամ Հայաստան մտած տարին ,  
 1316ին եղաւ . մէջերմին կաթողիկոսներ եւ  
 եպիսկոպոսներ գտնուելով ալ՝ այս պատճառիս  
 համար անընդունելի եղան . որ Հայոց եկեղեց-  
 ւոյ Տին ծէսերուն մէկ քանին՝ ի սէր միաբա-  
 նութեան փոխել վճռած էին : Վրանցիին գու-  
 մարած եւ Քարգուղիմէոս եպիսկոպոսն ներկայ  
 գտնուած այս ժողովը՝ որ Հայոց եկեղեցւոյ  
 ժողովոց կարգն ատուն ալ չունի , Աւնիդորնե-  
 րուն առաջին սկզբնաւորութիւնը եւ ծագումն  
 եղաւ : Ըստից գործն ու արդիւնքը ուրիշ բան  
 չեղաւ , յայտնելով Հայոց մէջ հոյ հոյսմաներուն  
 նման լաբիւնայ բաժին մ'ալ հանել :

Ըստնք քշիկ քշիկ մտաւոր երկիրներն ի-  
 րենց վարդապետութիւնը տարածելով կուսա-

կիցներ ստացան ալ նէ՝ զորաւոր հակառակու-  
 թիւններ ալ կբեցին . այն կողմերը գտնուող  
 երեւելի վարդապետներ գրութեամբ եւ քարո-  
 զութեամբ ասոնց դէմ իբրեւ ամբարտակ մը  
 կանգնեցան . յանուանէ Յովհան Արտանցիին .  
 եւ անոր տշակերտ՝ յայց անկէց աւելի հռչա-  
 կաւոր Գրիգոր Տաթեւացիին . եւ ասոր բազմա-  
 թիւ աշակերտները . որոնք իմաստութենէ բու-  
 յորովին անմասն չէին . մէջերմին լատին վար-  
 դապետական գրոց հմուտներ ալ կային՝ որ նո-  
 րելուկ Աւնիդորներուն լատիներէնէ թարգմա-  
 նած գրքերը կը կարգային . ինչպէս են Ալպէր-  
 տի աստուածաբանութիւնը . Կնովմա ագոսինու-  
 ցիին յաղաքս խորհրոց եկեղեցւոյ գիրքը՝ զոր  
 Յովհան Արքայիցի իմաստուն վարդապետը  
 թարգմանեց , թէպէտ ինքն Աւնիդորներուն հետ  
 հաղորդակցութիւն չունէր . Պետրոս Արակո-  
 նացիին առաքինութեանց եւ մուրուսութեանց  
 գրքերը : Եւ երբ վիճարանութիւնները տարցան՝  
 թէ Աւնիդորներուն եւ թէ անոնց հակառակող-  
 ներուն գրչէն ծուռ ու մուռ խօսքնք ալ վի-  
 ժեցին . ինչպէս որ ամէն ատեն նման դէպքե-  
 րու մէջ կըլլայ :

Հայոց թագաւորը Լէոն Ե , Լուսինեան ,  
 թէպէտ ինք լատին եւ Հռովմէական ըլլալով  
 կուգէր որ իր հայրենի եկեղեցւոյն ծէսերը Հա-  
 յոց մէջ ալ մտնեն . եւ Հայք լատիններուն  
 հետ մէկ ազգի պէս ըլլան . ասիկայ մէկ կողմէն  
 իրեն պարծաւոր , եւ մէկ կողմէն ալ թա-

գաւորական աթոռոյն հաստատութիւն ըլլալ կերեւէր, բայց չէր ուզեր որ առանց կարգի կանոնի անվաւեր կերպով ըլլայ: Քըննայ ժողովը եւ նոյն ժողովականներուն գործերն ընդդէմ ազգային հոգեւոր իշխանութեան ասլուտամբութիւն մը երեւցաւ. շփոթն եւ երկպառակութիւնը եւ վէճը սաստկանալէն, եւ դուքե ազգային պատերազմի եւ արիւնհեղութեան ալ պատճառ ըլլալիքէն վախցաւ. դայրացեալ հոգիները հանդարտեցընելու համար նայաստան մարդ խորկեց, եւ Քըննեցիին ընկերներէն քանի մի հոգի բռնել եւ բանտարկել տուաւ: Միւս ընկերները նոսր ամբաստանութիւն գրեցին Յովհաննէս Վհայրապետին, որպէս թէ նայոց թագաւորն ուղղափառութեան նայոց մէջ տարածուելուն եւ ծաղկելուն եւ յառաջդիմութեանն արգելք կ'ըլլայ:

Նայրապետը նայերն ուղղափառ կը ճանչնար. ինչպէս որ իր նախորդներն ալ կը ճանչնային. եւ չէր կասկածեր թէ Պարսից համար խըրկած քարոզիչն իրեն յանձնուած գործը մոռնալով նայոց քարոզիչ եղած ըլլայ եւ այսպիսի խռովութիւններ հանէ: Եւն թագաւորին ալ ուղղափառութիւնը գիտէր. ուստի Քըննեցւոց գրածին կատարեալ հաւատք չընծայեց. բանը քննելու ելաւ, գիր մը նայոց հակոր կաթուղիկոսին, գիր մ'ալ իր կողմէն Միլիկիա գտնըւոյ դեպպաններուն եւ գործակատարներուն գրեց, հակոր կաթուղիկոսը ժողով ընելով եր-

կու շրջաբերական խորկեց նայաստան. մէկը այն կողմի նայ իշխաններուն՝ որ քըննեցիներուն պաշտպան կենան, եւ թող չտան որ մէկ կողմէ մը անոնց վնաս գայ. երկրորդը նոյն իսկ քըննեցիներուն որ հանդարտ կենան. եւ նայաստանեայց եկեղեցւոյ մէջ նորաձեւ բան մը տնցունելու զիտով խռովութեան պատճառ չըլլան:

Ինչպէս որ Քըննեցիին յորդորել որ հանգարտին եւ իւրեանց կաթուղիկոսին հնազանդին: Քըննեցիին միտքը դրած էն ետ չկեցաւ, բայց պաշտպան չունենալը տեսնելով լսեց. եւ քանի որ եպիսկոպոսը կենդանի էր չհամարձակեցաւ անոր կամացը հակառակ շարժելու: Խռովութեան առժամն հանդարտելուն մեծ օգուտ ըրաւ այս առիթով նոսր մայ հայրապետին եւ նայոց կաթուղիկոսին մէջ տեղի ունեցած թղթակցութիւնը, որով կաթուղիկոսին նոսր մայ հետ համաձիտ ըլլալը կ'իմացուէր: Եւս որ չըլլարնէ՛ թէ եպիսկոպոսը եւ թէ թագաւորն 'ի խղճէ կատարուէին Քըննեցւոց եւ Մենիգորացու ժ աալու:

Եպիսկոպոսը վախճանելէն ետքը Յովհաննէս քըննեցիին գարձալ առաջին ծամբան լընեց. ԻՐԱՆԻԱՆԸ 6



խոսովութիւնները դարձեալ սկսան . եւ այնքան  
 զայրացան՝ որ Հայաստան չկրցաւ կենալ . ելաւ  
 Հոովմ գնաց . զոր ոմանք ուսմունքը կատարե-  
 լադործելու գնաց ըսելովին՝ հոս պատմութեան  
 բուն տեղեակ չըլլալին կիմացընեն : Հոն դառ-  
 նացեալ սրտիւ գրիչը ձեռքն առաւ . խել մը  
 մոլորութիւններ դիպեց Հայերուն վրայ : որ-  
 պէս թէ ինքն այն մտացածին մոլորութիւնները  
 հերքելու ելլելուն համար հալածանք կրած ըլ-  
 լայ : Հայաստան դառնալ : բայց Հայոց կա-  
 թուղիկսէն ալ թաղաւորէն ալ անկաս ըլլալ  
 խորհելով Հոովմայ հայրապետէն հրաման ա-  
 ռաւ Գոմինիկեան կրօնաւորաց միաբանութիւն  
 մը հաստատելու Հայոց մէջ : որուն ինքը մե-  
 ծաւոր ըլլալով՝ Լատին եկեղեցւոյ ամէն կրթու-  
 նաւորական կարգերուն մեծաւորներուն պէս  
 միայն Հոովմայ հայրապետէն կախում կուեն-  
 նար : Եւսպիսի արտօնութիւններով ալ Հայաս-  
 տան դառնալով չկրցաւ հանգիստ դանել . բո-  
 տիպուեցաւ վանքին մէջ զոցուած մնալու . ինչ-  
 պէս որ իրեն մարդ չէր խառնուեր՝ ինքն ալ  
 մարդոց հետ հաղորդակցութիւն չէր կըրնար ը-  
 նել : Հոն՝ Հոովմ սկսած զբարբառեանց զէրէ  
 նոր յաւելուածով ձոխացընելու պարագեցաւ .  
 որուն մէջ իրրեւ ազգին մէջ ընդհանրապէս տա-  
 բածուած մոլորութիւն կըցոյցընէր պատաւա-  
 կան սնապաշտութիւնները . եւ այդիկէս անդի-  
 քէն սկանջը հասած խելից ու մենդ խօսքերը՝  
 որ կրօնքի հետ մօտէն կամ հեռուէն յարա-

բերութիւն մը ունենալ կերեւէին\* : Որ օտար  
 ազգի ասանկ մարդու մը վկայութիւնը կրնար  
 մերժել . որ ինքը բնիկ Հայոց ազգէն , Ասայի  
 նչէցիի պէս համբաւաւոր մարդու մը աշակերտ ,  
 եւ Լատին լեզուի եւ աստուածաբանական գը-  
 րոց հմուտ ճանչցուած էր : Թէ որ Հայք դէմ  
 չելլէին եւ չըսէին միաբան որ սուրբ Լուսա-  
 ւորչին եւ սրբոյն Եղբեստրոսի ժամանակն ինչ  
 հաւատք եւ արարողութիւն ունէին նէ հիմակ-  
 ուան ունեցածնին ալ նոյնն է , եւ յիշեալ  
 երկու սուրբ հայրապետաց դաշինքը կը յարգեն ,  
 եւ հաւատոյ դաւանութիւննին հիմնապէս Հը-  
 ոովմայ գաւանութենէն տարբեր չէ , ամէն օ-  
 տարազգի իրաւունք կուեննար ԅովհան քրո-  
 նեցիին եւ կուսակցացն ըսածներուն հաւատա-  
 լու :

Եսանկ ըսելով հայոց եկեղեցւոյ ջատաղով-  
 ներ եւ պաշտպաններ ելան՝ որ մաքան հայ ըս-  
 ուեցան . ինչպէս որ կը պատմէ ունիզօրներուն  
 պատմիչը Մխիթար Եպարանցի . եւ հետեւեալ  
 վկայութիւնը կուտայ , զոր մենք ալ հիմակուան  
 հոովմեական իմաստուն վարդապետներէն լսելու  
 կը փափաքէինք :

\* ԅովհան քրոնեցիին ըրած զօրարտութիւններն  
 ըստ մեծի մասին կաւնու եւ կը հեռքէ կըլմէս Կո-  
 լանոս իր դրքին վիճարանական հատորներուն մէջ .  
 բայց զանոնք չէ թէ Հայաստանեայց Եկեղեցւոյ այլ  
 մասնաւոր վարդապետաց կարծիք կանուանէ :

« Կոչէին հայտ մեքանս՝ կըսէ , որք եւ ամե-  
 « նայն իրօք կային ըստ նախնի Հայոց սովո-  
 « ռութեանցն , եւ անփոփոխ յաւանդութիւնսն .  
 « ըսայց 'ի բանն որ վերաբերի 'ի դաւանութիւն  
 « հաւատոց եւ 'ի փրկութիւն , համաձայն գը-  
 « տանէին ընդ սուրբ եկեղեցւոյն ( առ Հ . Սի-  
 « քայէլի Չամչեան . Պատմ . Հայ . Էր . Եր . ԳԼ . 40 ) :  
 « Եւ զհան քունեցիին բոլոր գրածներուն հեր-  
 « քում մ'էր այս համառօտ խօսքը՝ զոր անոր հե-  
 « տեւողներուն մէկն էր գրողը . եւ ասով կը-  
 « խոստովանէր որ այսբան վէճերը եւ Հայոց մէջ  
 « հերձիք հանելն օրինաւոր պատճառ մը չունէր :  
 « Հապա ի՞նչ պիտի ըսես երբ կարգաս որ այս բա-  
 « ներս գրողը՝ Սիւրբար ապարանցին՝ իր մեքան ան-  
 « ուանած Հայերէն Աւնիգոր ընկերութեան մըտ-  
 « նողը դարձեալ կը մկրտէր՝ հեթանոսութենէ  
 « քրիստոնեայ եղածի տեղ դնելու պէս : Ի՞նչ  
 « գէշութիւն կայ որ կիրքը չկընայ ընել տալ  
 « մարդոց : Թէ որ ուրիշները մկրտէին՝ եւ Սիւր-  
 « թար անոնք գովելու կամ պարտաւելու բան մը  
 « չխօսէր նէ՝ պատճառը կը հասկընայինք . իր կող-  
 « ման վրայ գէշ գաղափար մը տալէն զպուշացած  
 « կըլար . ըսայց նոյն իսկ ինքն է որ չամբնար ի-  
 « րէն ըրածը խոստովանելու . ինչպէս որ Չամչ-  
 « եան Հ . Սիքայէլ կը պատմէ ( 'ի յիշ . Խեղ . )  
 « Եւ պարանցին գրէ դանձնէ՝ թէ մկրտեցի եւ  
 « ես զոմանս 'ի յարիւրոց 'ի մեզ յազգէ մերմէ  
 « 'ի ծածուկ տեղիս եւ 'ի հնձանս այդեւտան-  
 « նայց : »

Եւ յիբաւի Աւնիգորներուն ըրածն անտե-  
 ղի եւ մեծ յանդրգնութիւն մ'էր : Երբ Հայր  
 յանուն ամենասուրբ Կրօնորդութեան կմկրտեն ,  
 դաւանութիւննին այ՛ փրկութեան հարկաւոր ե-  
 ղած բաներն այ սուրբ եկեղեցւոյ համեմատ ու-  
 նին ի՞նչ հարկ կայ մկրտելու : Է իբաւի Լատին  
 եկեղեցւոյ մկրտութիւնը քանի մի արարողական  
 բաներով Հայաստանեայց եկեղեցիէն կը տարբե-  
 րի՝ սակայն այս մանր եւ պատահական եւ յոկ  
 ազգային աւանդական տարբերութիւնները կր-  
 նան արդեօք մկրտութիւնը վաւեր կամ անվա-  
 յեր ընելու չափ գորութիւն ունենալ . երբ Լա-  
 տին աստուածաբանք , եւ նոյն իսկ Թովմա Լագ-  
 ուինացին՝ Աւնիգորներուն ընդունած Գոմի-  
 նիկեան կարգին եւ բոլոր Հոսովմեական եկե-  
 ղեցւոյ մեծ աստուածաբանը կըսէ թէ մկրտու-  
 թեան հարկաւոր եղածը միայն ընական ջուրն  
 է իրբեւ նիւթ . եւ յանուն ամենասուրբ Կր-  
 օնորդութեան մկրտելն է : Եւսոյցմէ զատ ի՞նչ որ  
 կան նէ՝ յոկ հանդիսի մասն են ( Բուսնար . աս-  
 րոսածաք . ման . Գ . Ինչէր . ԿՕ . յօր . Գ ) :  
 Եւսու ամենայնիւ իրենք կը մկրտէին . որով  
 Հայոց մէջ նոր մոլորութիւն մը մտած կարծել  
 տուին օտար ազգերուն . իրիւնսնս ազանդը .  
 որուն ազանդապետ սեպուեցաւ Աւնիգոր եպիս-  
 կոպոսներուն մէկը , Կերսէս Պաղոն . ինչպէս  
 որ յաջորդ գլխոյն մէջ պիտի տեսնեմք : Եւս  
 պարագայներս ամէն ատեն իբաւունք կուտան  
 մեզի՝ այն առաջին Աւնիգորները ամբարիշտ եւ

սրբապիղծ անուանելու : Հաւատոյ դաւանու-  
 թիւնն Երեսնական համար ըսելիք չէինք ունենար ,  
 թէ որ մկրտութիւնը մի եւ անկրկնելի ըլլալը  
 'ի հաւատոց չըլլար նէ . բայց որովհետեւ աս-  
 սիկայ 'ի հաւատոց ըլլալը՝ կրկնակնունքներն  
 ամէն ատեն հերետիկոս սեպուած ըլլալէն յայտ-  
 նի է , Աւնիգորներուն համար պարզ եւ յայտնի  
 խօսքով կըրնանք ըսել թէ հերետիկոս ալ էին :

ԳԼՈՒԽ Ե .

Ներսէս Պաղոն եւ Սիմէոն Պէկ եպիսկոպոսուք :  
 Հայոց վրայ ձգուած մարտութեանց ցանկը :

Աւնիգորներն այսպիսի շիտթներու պատճառ  
 կըլլային՝ երբ երկուք ալ եպիսկոպոս ասոնց յա-  
 րեցան . գուցէ նորէն մկրտուելու ալ չամբչցան  
 եւ խիղճ չըրին : Մէկն էր պարսկահայոց Ռո-  
 մի քաղաքին եպիսկոպոսը՝ Ներսէս Պաղոն կամ  
 պալեանց . եւ միւսը՝ Ասորոյ Սիմէոն եպիսկո-  
 պոսը , որուն Պէկ մականունը զինքն իշխանա-  
 զուն մէկը կարծել կուտայ : Վորէն մկրտուե-  
 լու յանձնառու ըլլալին , կամ իրենք չմկր-  
 տուեցան ալ նէ՝ մկրտողներէն չխորշելին եւ  
 անոնց հետ միանալին բաւական նշան մ'է թէ  
 կրօնական եւ եկեղեցական իրաց ի՛նչ աստիճանի  
 համուծիւն ունէին , եւ իրենց պատիւը որքան  
 կը պահէին :

Ասոնց այս միաբանութեան մէջ մտնելը  
 նոր յանդգնութիւն մը տուաւ Վրոնեցիին կու-  
 սակիցներուն , եւ նոր զայրոյթ , մտքան շայն-  
 րուն . ազգը խռովեալ ալիքներու պէս կ՛մտար .  
 մինչեւ կաթուղիկոսն ու թագաւորը չդիմանա-  
 լով խստութիւն ձեռք անելու ստիպուեցան .  
 շատ խռովարար Աւնիգոր ձեռք ձգեցին . մէկ  
 քանին բանտ դրին . միւսները արտօրով շայոց  
 երկրէն եւ ազգէն հեռացուցին : Ներսէս եւ  
 Սիմէոն եպիսկոպոսներն ալ բռնեցին եւ կա-  
 թուղիկոսին ատեանը բերին . ասոնք որպէս թէ  
 անկէց լսած յանդիմանութենէն զբաստանա-  
 լով զղջալ ձեւացուցին եւ ազատեցան . բայց գա-  
 ցած տեղերնին հանգարտ չկենալով հանգստու-  
 թիւննին ալ կորսընցուցին :

Կաթուղիկոսն իմանալով որ ասոնք իրենց  
 կըռնակ ունին Հոռովմայ հայրապետը , եւ արե-  
 ւելք գտնուող Լատին իշխանները , որ միշտ կը  
 յորդորէին ալ ազգը լատինացընելու , եւ պէտք  
 եղած ատենն ամէն տեսակ պաշտպանութիւն  
 կընէին , ասոնք հալածելն անօգուտ սեպեց .  
 որով գուցէ առաւել զօրանալնուն պատճառ ալ  
 կըլլար . ինչպէս որ ամէն կրօնական հալած-  
 մունքներն եղած են : Խոհեմութեամբ խորհե-  
 ցաւ Հոռովմայ Վրոնեղիկոսս յի՛ հայրապետին  
 դիր գրել որ ասոնց պատուէր խրկէ ազգը խոռ-  
 վելէն դադարելու : Վսիկայ զգացին Աւնիգոր-  
 ները եւ երկու եպիսկոպոսները , ուստի իրենք  
 ալ կաթուղիկոսին գրոյն ազդեցութիւնը լսա-

փանելու գրեթէ հրեցին . եւ ըստ որում ասոնք  
կրօնաւորական կարգ մը կըսողացընէին , եւ պա-  
պը ասոնց ըրածը մանրամասնաբար չէր գիտեր ,  
ասոնց գրածին աւելի հաւատաց , քան թէ կա-  
թոլիկոսին եւ թաղաւորին գրածներուն . ո-  
րոնք ապարդիւն մնացին :

Յակոբ կաթոլիկոսին յաջորդեց Միսիթար  
Քոննեցին՝ որ հեղահոգի մարդ մ'էր . Յովհան  
Քոննեցին հայրենակից եւ գուցէ ծանօթ ալ  
ըլլալը քաջալերութիւն տուաւ Վերսէս եպիս-  
կոպոսին , որ զնոր կաթոլիկոսը իրեն համա-  
միտ կարծելով կը յուսար թէ ինչ որ ընէ նէ  
աչք կը գոցէ . եւ 'ի ծածուկ հաւանութիւն ալ  
կուտայ , եւ անոր համեմատ ընթացք մը ըրու-  
նեց : Իսոյց Միսիթար կաթոլիկոսն ատոր կարծա-  
ծին պէս չելաւ . ընթացքները ճշդիւ քննելէն  
ետքը հրապարակաւ բանադրեց եւ եկեղեցւոյ  
հաղորդութենէն մերժեց : Վերսէս սաստիկ  
գայրացած՝ ելաւ Բենեդիկտոս հայրապետին քո-  
վը գնաց Ղւինտոն . եւ հոն իրմէ առաջ փախըս-  
տական հասած քանի մի Ռեիդորներ՝ եւ քանի  
մի լատիններ գտաւ , որ մէկ քանի օր կամ շա-  
բաթ Հայոց մէջ կենալով եւ քանի մի հոգի  
ձանձնալով զիրենք Հայոց վերաբերեալ ամէն  
բանին քաջամուտ կարծել կուտային :

Մտնը ամենը մէկ գալով եւ խորհրդակցե-  
լով Հայոց դէմ ամբաստանութեան գրքոյն մը  
գրեցին . մէջը հարիւր տասն եւ եօթն տեսակ  
մոլորութիւն շարելով . որոնց շատը աւելի խեն-

դութիւն ըսուիլ կարժեն՝ քան թէ մոլորու-  
թիւն . եւ պապին ներկայացուցին : Ինչ որ Հա-  
յոց դէմ այս ամբաստանութիւններս ընողնե-  
րըն օտարազգի ըլլային նէ արհամարհանօր նեա-  
ուելու արժանի էին . բայց երբ նոյն իսկ Հա-  
յերն էին ամբաստանողները , որոց մէջ երկուք  
ալ եպիսկոպոս , եւ հայազգի Ղամբրիկեան կը-  
րօնաւորաց ամբողջ միաբանութիւն մը կար ,  
պապն ինչ ընելու էր . եւ ո՞վ կը մեղադրէր ա-  
նիկոյ՝ երբ ընդհանրական կոնգակներով համօ-  
րէն աշխարհի հռչակէր թէ Հայերը ոչ միայն  
ամբարիշտ՝ այլ եւ խաղբ ու խայտառակ մոլորու-  
թեանց մէջ ինկեր են : Երեսուցի պարագայնե-  
րով պատմուած բանի մը ո՞վ որ ըլլար կհաւա-  
տար , բայց Բենեդիկտոս ԺԱ՝ , որ ասկէց ա-  
ռաջ Ռեիդորներուն գրածին հաւատալով Հա-  
յոց Յակոբ կաթոլիկոսին գիրը ապարդիւն  
ձգեց , այս անգամ նոյն իսկ ամբաստանութեանց  
անձոնիութենէն շարժեալ՝ բանն իմանալ ուղե-  
լով յատուկ գրով մը այն ամբաստանութեանց  
գրքոյնը Միսիթար կաթոլիկոսին խրկեց եւ պա-  
տասխան ուղեց :

Կաթոլիկոսն եպիսկոպոսաց բազմութեամբ  
ժողով ըրաւ Սիս , Վրիտանոսի 18<sup>1</sup>/<sub>2</sub> թուին ,  
եւ իր կաթոլիկոսութեան երկրորդ տարին . ամ-  
բաստանութիւնները մէկիկ մէկիկ քննութեան  
առնուեցան . եւ Ղամբիէլ անուն իմաստուն վար-  
դապետի մը յանձնուեցաւ հայրապետական գրոյն  
պտտասխան՝ եւ այն մտացածին մոլորութեանց

հերքում գրելը : Գիրք Բննեղիկոսու հայրապետին յաջորդ Աղեմէս Օ. ին ձեռքը հասաւ որ կարող . եւ հայոց ուղղափառութեանը համոզուելով շատ ուրախացաւ : Ըսոր վրայ Աերսէս եպիսկոպոսն իր պատիւը կորսընցուց . եւ ոմանք անոր կեղծ ու պատիր ձեւերուն խարուելով զինքը տակաւին կը յարգէին ալ նէ՛ մեծապատիւ եւ յարգոյ անձանց առաջը վարկում չուէր .

յետնոց մէջ ալ անարգեցու . եւ Աերէն անուն գազդիացի նոր մատենագիր մը ասիկայ աղանդապետ կանուանէ՛ կրկին մկրտութիւն ընող ունիգորներուն եպիսկոպոսն ըլլալուն համար : Աերսէս եպիսկոպոսն արեւմուտք անցնելէն ետքը Աիմէոն եպիսկոպոսն ալ հանգիստ չգտնելով չայոց մէջ՝ Ապրոս կղզին անյաւ . երկուքին ալ կենացն ինչգէս վերջանալը՝ պատմիչները մեղի իմացուցած չեն . այսքանս շատ աղէկ գիտեմք , որ իրենց ազգը զրպարտելով եւ անկէց բաժնուելով՝ ազգին ասելի է անոնց յիշատակը . եւ այս գէշութիւնը՝ Հոռովայ հայրապետներուն եւ եկեղեցւոյն ծառայութեանը համար ընելով անկէց փառք եւ պատիւ կը յուսային նէ՛ անոնց ալ երեսէն ինկան եւ անարգուեցան : Իր ազգը զրպարտող մարդոց արժանացած պատիժն է այս . որ թէպէտ չյիտցողներուն քով ժամանակ մը յարգ կուենեան իրրեւ ճըշմարտութեան անաչտու պաշտպան , բայց ասիկայ տոժամանակեայ միայն կրնայ ըլլալ . բանին ըստոյզը ուշ կամ կանուխ , թէ եւ քննութիւնն

ընելն որի անկ է նէ անիկայ չի քննէ ալ նէ՛ կիմացուի , նախապաշտման մշուշը կը վերնայ , եւ եւթարդ շարեաները կիյնան , եւ իրենց պատիւը կը կորսընցընեն նա եւ անոնց առաջը՝ որոց փառացը համար աշխատող կը ցուցընէին ցիրենք :

Ըստ ունիգորներուն գրի առած Ռ՛ժԻԶ գըլուխ ամբաստանութիւններն ինչ եղան , որոց գրի առնուած եւ լատիներէնի թարգմանուած հերքումը հրատարակուած էր Հոռով : Գանիէլ վարդապետն անոնց ամէնն ալ սուտ հաներ էր . բայց ետքը ունիգորներուն յաջորդները նորէն ձեռք առին . ամէնը չայոց վրայ չհաստատեցին ալ նէ , որովհետեւ չէին կրնար ալ հաստատել , բայց հայերը մոլորեալ եւ հերետիկոս են ըսելը իրենց սովորական գրուցուածք ըրած ըլլալուն համար հայոց մոլորութիւնն ինչ ըլլալը հարցընող ըլլար նէ՛ առ ձեռն պատրաստ պատասխան մը տալու համար այս գրքին կը գիմէին . եւ որ բանն որ վայելցունէին նէ՛ անիկայ կը ցուցընէին , թէ եւ ետքը նոյն մոլորութեան չայոց մէջ գտնուիլն ուրանալ պէտք ըլլար նէ՛ անկէց ալ չէին փախչեր : Ըսոր մէկ օրինակը՝ հիմախոս Գրքերու խնամք գրքին մէջ տեսանք : Ըսիկայ չայոց Ժ քննիչն է՝ Վերսիոս ըսելը այս տարբերութիւններուս առաջինը կը գնէ . բայց ուրիշ տեղ մի կըսէ նոյն գրքին մէջ թէ չայոց այս մոլորութիւնս ունենալը՝ եւ սուրբ բաժակը անջուր գիւնիով մատուցանելու ?

ասոր նշան ըլլալը ոչ կըրնայ եւ ոչ ալ կու-  
զէ հաստատել: Առաջին ըսածը Հայոց կարծեց-  
եալ մոլորութեանց համբանքը շատցնելու կը  
ծառայէ: երկրորդը՝ ճշմարիտը խօսելով խըզ-  
մըտանքը թեթեւցընելու:

Հայոց մէջ լատին եկեղեցւոյ ճեւերուն հետ՝  
հաւատոյ դաւանութեան արտայայտութիւնն ալ  
լատիններուն ըսածին պէս ըսել մացուցին Աւ-  
նիիօրներուն հետեւողները, չնայելով որ նոյն  
իսկ հին ունիորք դաւանութեան տարբերու-  
թիւն չէին գտած Հռովմայ եւ Հայոց եկեղեց-  
եաց մէջ: Ինչպէս որ Միսիթար ապարանցիին ը-  
սածը նախորդ գլխոյն մէջ տեսանք: Ասանկնե-  
րըն այն ալ չէին նայեր՝ որ մի եւ նոյն բանը  
լատին լեզուով խօսելով մոլորական իմաստ մը  
չտարալնէ՝ Հայոց լեզուին մէջ նոյն իմաստը  
բացատրող բառին արմատական նշանակութիւնը  
ուղղափառական իմաստին հետ մէկ տեղ մոլոր-  
ական իմաստ ալ վերցընելուն համար անխախթ  
գործածութիւնը գայթակղութիւն կուտայ: ( )-  
րենակի համար ըսեմք. Հոգւոյն սրբոյ քիչն  
համար լատին լեզուն քրօնաբէր բայը եւ քրօ-  
նաբէր անունը գործ կածէ. որ ստուգաբանական  
նշանակութեամբ՝ յառաջ խաղալ եւ յառաջ խաղա-  
ցառն ըսել է: Մեր մատենագրութեանց մէջ  
Հոգւոյն սրբոյ ընդ որդւոյն Աստուծոյ յարաբե-  
րութիւնը այս բառովս բացատրուած կը գտնու-  
ուի. հին ժամանակները Հոգւոյն սրբոյ գա-  
լըստեան օրը զրուցուելու համար շինուած գան-

ձի մը մէջ ըսուած է. «Հոգին բղխեալ ՚ի Հո-  
րէ անձառ, ելեալ Արդւոյ յառաջ խաղացմամբ»: Ս-  
եր մէջ քրիստոնէ ջուրին բուն ակէն ելլելը  
կընշանակէ. գետին կամ աղբիւրին քրօնելու ու-  
րիշ է՝ վագելը կամ յառաջ խաղալն ուրիշ է: Աւ-  
այս բղխումը նշանակելու համար լատին լեզուն  
ուրի յատկապէս ստորաբերէ բայը: Ի սուրբ  
Երրորդութեան՝ ներքին գործողութեանց այդ-  
պէս տարբերութիւն մը չեմք կըրնար գնել՝ ալ  
նէ՝ երբ Հայոց Աստուած Արրորդութեան ա-  
ռաջին պարծառ կամ սկիզբն ըսելու՝ նախնի սուրբ  
հարց հետ կը համաձայնիմք, բղխումն բառն ա-  
նոր կը յատկացընեմք: Այս գորութիւնս ՚ի Հո-  
րէ Աստուծոյ Արդւոյն միածնի ալ հաղորդեալ  
է. եւ Հոգւոյն սրբոյ ելումը՝ Արդւոյն մի-  
ածնի նկատմամբ՝ բղխումն ըսելու չներեր մեր  
լեզուին յատկութիւնը. լատին լեզուն կը նե-  
րէ եղեր, նոյն լեզուն գործածողները թող ը-  
սեն. բայց Հայոց լեզուին յատուկ եղած բա-  
ռի մը նշանակութիւնը բունարարել՝ ամէն ժա-  
մանակ անընդունելի եղած է\*: Ասանկ բանե-  
րու համար՝ լատիններու հետեւող Հայերը ի-  
րենց հետ չ՚իաբանող հայերն սկսան բամբասել,  
կամ ձիշտ ըսելով՝ զրպարտել իրրեւ հերետիկոս.  
եւ այս բանիս՝ աւելի յոյներուն նմանիլ ուղեցին:

\* Հոս խօսածնիս՝ նախընթաց խօսքին բացատ-  
րութեանը համար օրինակ մ'է: Գործոյս ընթաց-  
քով ընդարձակ բացատրութիւն ալ կը տրուի:

Հայոց հերետիկոս եւ մոլորեալ ըլլալուն սուտ համաւը որ այս վերջին ժամանակներս ալ հռչակողներ պահաս չեն, Եւրոպայի իմաստուններուն հետաքրքրութիւնն արթնեցուց՝ որ ուղեցին մոլորեալ կարծուած եւ հռչակուած հասկերուն մոլորութեանցը վրայ մանրամասն տեսնելու թիւններ ունենալ, եւ ասոր հիմ մը ունենալ ալ պէտք ըլլալով՝ Կերսէս կալստիոսին պարսաւագիրքը ձեռք առին, եւ այն հարիւր տասն եւ եօթմ մոլորութենէն իրօք քանի հասու Հայոց մէջ դանուելը հետազօտեցին:

Եւսպիսի քննութեան ելլողներն ամէնն ալ կրօնաւոր քահանայ՝ եւ աստուածաբանութեան եւ եկեղեցական դիտութեանց հմուտ մարդիկ էին. ոմանք սա պահասութիւնս միայն ունէին, որ հայերէն լեզուն չգիտէին, եւ քննութեան առարկայ ըրած բաներնուն սոցոքը որկէց կըրնալ իմանալնին աղէկ դատումով չորոշեցին: Եւստ ասեակ քննութեանց մէջ լեզու գիտնալուն հարկաւորութիւնն անուրանալի է. լեզու չգիտցողը՝ առանց քննութեան բաւականութիւն ունենալու՝ լեզու գիտցողի մը ըօածը շտապ կամ ծուռ ըլլալը չգիտնալով անոր հետեւելու ստիպուած կըլլայ. ուստի ըօածը չէ թէ քննութիւն այլ հետեւողութիւն կըլլայ: Լեզու չգիտնալով՝ քննիչ ըլլալ ուղղին հարկ է քըննելի առարկային վրայօք քննելի տնձին կողմէն վաւերական գրութեան հարապատ թարգմանութիւնը գանել, եւ այնպէս քննել: Եստիք չը-

նելով քննութեան ելլողը հարկաւ կը սխալի: Եւստ տեղ ըսածնու համաձայն կը խօսի Ռընուոս. որ քաղդէացիներուն պատարագամատուցին Հոովմայ ապագրութեան մէջ եղած փոփոխութիւնները եւ անհոգութիւնները յիշելէն ետքը կըսէ. « այս մէկ օրինակէս բաւական կը » հասկըցուի թէ որքան վտանգ ունի արեւելեան լեզուներ սորվելու անհոգանալը. մասնաւոր շուրջ, ուր կաթուղիկէ միութեան եկող արեւելեան քրիստոնէից օրէնք կը տըրուին այն անձանց խոջհրդով՝ որ ոչ լեզուներնուն եւ ժչ եկեղեցական կարգաւորութեանցն բաւական հմուտ ըլլալով, մտղուկները քամելով եւ ուղեաբը կըլլելով, դասապարտելիները կընդունին եւ անվնասները կը դատապարտեն, հանդերձ վնասու նախնական եկեղեցւոյ, եւ ՚ի դայթակղութիւն աստեւելեան քրիստոնէից՝ ( Հասարակութեան պատարագամատուցաց. հոր. Ի. եր. 48 ) : Եստ համոզուած ըլլալով այժմեան Հոովմայ հայրապետը, Պիոս Թ, արեւելեան լեզուաց հմուտ անձանցմէ բաղկացեալ մասնաժողով մը յարեց Տրօբականայի ժողովոյն. բայց առաջուց մտքերնուն մէջ տիրող նախապաշարումը միայն լեզու գիտնալով չբժշկուելը՝ հայազգի լեզուագէտ հոովմէական վարդապետներուն ընթացքովը կը տեսնմք. որ նախապաշարեալ ըլլալով՝ Ունիդօրնիքն եւ արեւելք պլտլտող լատին միսիօնարներէն խարուածներուն պէս կը

խօսին : ( ) րինակը՝ չհռուեն ընծառել պէտք չէ .  
 հիմնական արբերութեանց գրքին վերապատուելի  
 հեղինակը պատրաստ է : Սենք այստեղ՝ Հայոց  
 վրայ ձգուած մոլորութիւնները քննողներուն  
 երեւելիները՝ եւ ըրած քննութիւններուն ար-  
 դիւնքը նշանակեմք :

Աղեմէս Ալանոս, Աարօլի տէրութեան  
 Սօրէնդօ քաղաքը ծնած, եւ կրօնաւորական  
 Ռէտադին կարգէն քահանայ . ժամանակ մը Աոս-  
 տանդնուպօլիս գտնուեցաւ . եւ այն ատենը  
 հռովմէական Հայոց դէմ իբրեւ բարձրագոյն  
 գրան կողմէն Հայ ազգին գլուխ դրուած պատ-  
 րիարքին անհնազանդ՝ հալածանք ըլլալուն հա-  
 մար իր քահանայութիւնը ծածկեց . եւ իբրեւ  
 բժիշկ վարուելով Հայոց շատերուն հետ ըն-  
 տանեցաւ՝ եւ Հայոց գրաբար լեզուն ալ սոր-  
 վեցաւ . բայց ազգին վարդապետական գրքերուն  
 կատարեալ տեղեկութիւն ստանալու համար՝ իր  
 պանդխտութիւնը բաւական ժամանակ չէր տար :  
 Ըստ ժամանակին՝ հռովմէականաց դէմ գըր-  
 ուած քանի մի վիճարանական գրքեր հազիւ  
 ձեռքն անցաւ . սրբոյն Աերսէսի Շնորհալուոյ  
 եւ սրբոյն Աերսէսի Ամբրոնացւոյ քանի մի գըր-  
 ուածներն ալ ձեռք բերաւ : Հոսմ դարձած  
 ատենը Աերսէսեպիսկոպօսին յօրինած ամբաս-  
 տանութեան գրքէն զատ Վառնեցիին գրածներն  
 ալ տեսաւ եւ կարգաց . եւ ասոնց մէջ գտած-  
 ները իր անձնական տեղեկութիւններուն հետ  
 համեմատելով յիշյն երեսուն մոլորութիւն կը

գտնէ . անոնք ալ չէ թէ Հայաստանեայց ե-  
 կեղեցւոյն՝ այլ քանի մի սուտանուն վարդա-  
 պետներու վրայ ձգելով կը հերքէ : Ասան զի  
 իր մեծ գրքին երկրորդ հատորին երկրորդ մասին՝  
 զոր յառաջաբանութեան մէջ յիշեցինք, սկիզ-  
 բը սա խօսքերս կը կարգաժք . « ոչ եմք անտեղ-  
 » եակք, զի վարդապետք ոմանք ՚ի նոցանէ, թէ-  
 » պէտ եւ իմաստուն համարեալք, յոյժ մոլորե-  
 » ցան . եւ գրովք իւրեանց ուսուցին զսխալան-  
 » սըն որք ՚ի վերոյ : Բայց գիտեմք եւս հաւաս-  
 » տեաւ, զի այլ վարդապետք հայոց յոլովք  
 » զուղղափառութիւն դաւանեցին եւ ուսուցին .  
 » եւ զմոլորութիւնս զայնպիսիսն ՚ի բաց հերքե-  
 » ցին : . . Աւրեմն ապա ոչ կարեմք մեր իրաւա-  
 » բար գատապարտել զեկեղեցին Հայոց վասն ա-  
 » սացեալ սխալանաց . զի նորք ոչ ինքն իսկ ե-  
 » կեղեցին, այլ սակաւք ոմանք որք ՚ի նմա եղին  
 » սուտանուն վարդապետք՝ մոլորեցան, » ( եր .  
 3 . 4 ) : Ըսած եմք առաջուց որ Ալանոսի լա-  
 տիններէնը հայերէնին համաձայն չէ . ասոր ապա-  
 ցոյց մը թող ըլլայ այս խօսքիս լատիններէնը որ  
 այս տեղս կը թարգմանեմք : « Ինծի անձանօթ  
 » չէ որ անոր ( հայոց Եկեղեցւոյն ) մէջ եղան  
 » եւ կան վարդապետներ՝ որ այս սուտ վարդա-  
 » պետութիւնս խոստովանեցան եւ քարոզեցին ,  
 » եւ գրով ալ տարածելու մեծ ջանք ունեցան .  
 » ասոր համար զրկչին 1341 թուին Ննեղիկ-  
 » տոս յիս Հռովմայ հայրապետը թէ Հայ եւ թէ  
 » Աստին շատ վկայներէն այս բանս ստուգելով



« անոնց Լէոն Վ թագաւորին եւ պատրիարք  
 « քին ( կաթողիկոսին ) իրկեց վերոյիշեալ մտ-  
 « լորութիւններուն եւ ուրիշ շատերուն ցանկը  
 « պարունակող գրքոյկը . թէ ասոնց եւ թէ ու-  
 « րիշ հայ եպիսկոպոսներուն , այսինքն Սոյ եւ  
 « Տարսուի եւ Սուլդանիէի եւ սրբոյն թագե-  
 « ոսի վանքին եպիսկոպոսներուն հրամայելով  
 « որ այս մոլորութիւնները բնաջինջ ընելու մի-  
 « աբան աշխատին : Այսու ամենայնիւ շատ ա-  
 « ղէկ քննելով հասկըցած եմ որ հայոց շատ  
 « վարդապետներ եղած են ու կան , որ այդ  
 « մոլորութիւններէն բոլորովին հեռու են ,  
 « շու կրօն որ պապը այն ճժի : մոլորութիւն-  
 « ներուն հայոց մէջ գանուիլը բազմաթիւ հայ  
 « եւ լատին վկայներէ ստուգեց . — ա մոլորիտ  
 « ակողիպուս , դում արմէնիս , դում էցիամ լա-  
 « գինիս , չէրցիօր հաք տէ րէ ֆագգուս : — Բայց  
 « պատմութիւնը կը ցուցընէ որ պապը նոյն բանը  
 « անմիջապէս հայոց կաթողիկոսէն եւ թագաւորէն  
 « սառգել ուզեց : Ասիկայ բան մ'ըսել չէ . բայց  
 « այն կը ցուցընէ որ Աթանոսի հայերէնը դատ եւ  
 « լատիներէնը զատ գրքեր են , իրարու թարգմա-  
 « նութիւն չեն : Լատիներէնին մէջ գրած պատմա-  
 « կան տեղեկութիւնը հայերէնին մէջ մեր հոս  
 « օրինակած հայերէնէն անմիջապէս ետքը գրած է  
 « Աթանոս . բայց այնչալ լատիներէնէն բաւական  
 « տարբերութիւն ունի : Այս ալ անոր դարարո-  
 « վը այս տեղս դնեմք :

« Արոյ սակս գիտելի է , զի 'ի յամի ծնըն-

« դեանն Քրիստոսի 1341 , սուրբ հայրապետն  
 « Առովմայ Ռէնէդիքսոս պապն լուեալ 'ի բա-  
 « ղում վկայից՝ թէ շայքն ունէին զասացեալ  
 « մոլորութիւնսն , վաղվաղակի ետ գրել զնոսա  
 « 'ի գիրք մի , ( Լատիներէնին մէջ այս գիրքը  
 « արդէն գրուած ցուցուց . եւ չըսաւ թէ պապը  
 « գրել տուաւ ) . եւ առաքեաց զգիրքն առ թա-  
 « գաւորն շայոց Լէոն չորրորդ եւ առ կա-  
 « թողիկոսն . եւ ծրեաց առ նոսա եւ առ այլ  
 « բազում եպիսկոպոսունս շայոց զթուղթս .  
 « ինզորելով 'ի նոցանէ հերքել յեկեղեցոյն  
 « իւրեանց զսղալանս զայնպիսիս , , իսկ լատի-  
 « ներէնին վերջին կտորը՝ որով կը վկայէ թէ յիշ-  
 « եալ մոլորութիւնները չունեցող շատ վարդա-  
 « պետներ շայոց մէջ գանուիլը աղէկ հասկըցած  
 « է , հայերէնին մէջ չկայ . իսկ կէտագրեալ տե-  
 « ղէն վարի խօսքը լատիներէնին մէջ ալ կայ .  
 « թէպէտ անիկայ ալ տարբերութիւն ունի : Բայց  
 « մե'ք այսբանս բանի տեղ չգնելով՝ Աթանոսի  
 « վկայութեան շնորհակալ չըլլամք արդեօք , զոր  
 « հիմակն որքեքրութեանց հեղինակէն եւ անոր  
 « կարգակիցներէն գանել կուզէինք եւ չիքատնք :  
 « Ա'եր վերապատուելի հեղինակն այսպէս  
 « զրուցուածք մ'ունի . որ իր գիրքը մէկ նոր հա-  
 « կասութեան մը մէջ կը ձգէ : Պրքին մէջ հրա-  
 « տէր իւրոյ տետրակին մէկ խօսքին կը հաւանի ,  
 « որ ազգային լիակատար ժողովոյ մը մասց բա-  
 « ցաւորութիւնն է . բայց վանալով , չըլլայ թէ  
 « ասով լուսաւորչական շար ուղղափառ կարծը-

ուին , վրայ կը բերէ թէ՛ « այս ամէնը վերո-  
 ,, յիշեալ դաւանութեան խօսքերուն՝ եւ ոչ թէ  
 ,, խօսողներուն իմաստն է . դաւանութեան եւ ոչ  
 ,, թէ գաւանողներուն ,, ( եր . 366 ) : Գիրքը  
 յօրինած էր՝ Էջմիշնական Եկեղեցոյ դասաւանդական  
 ( եւ ոչ դաւանողներուն ) հոռովմեականէն ու-  
 նեցած հիմնական տարբերութեանց վրայ : Հոս  
 տարբերութիւնը ոչ թէ դաւանութեան խօսքե-  
 րուն՝ այլ նոյնը խօսողներուն մտքին վրայ կը  
 ձգէ . որով խօսողները կըլլան տարբեր . այն  
 ալ չէ թէ ուղղակի Հոռովմայ դաւանութենէն ,  
 այլ նոյն իսկ իրենց բացատրած դաւանութե-  
 նէն՝ , որ է Հայոց լուսաւորչական եկեղեցւոյ  
 դաւանութիւնը : Աւ հակասութիւնն այս է՝ որ  
 հոս դաւանութեանց համաձայնութիւն կը գրա-  
 նէ . բայց իբրեւ Էջմիշնական տարբերութիւն կը  
 բռնէ , խօսողներուն միտքը խօսածնուն համա-  
 ձայն չէր ըսելով : Բայց վերապատուելի հեղի-  
 նակն այս հակասութեանս մէջ ի՞յնալը հերիք  
 չսեպելով մարգարէութեան ալ ձեռք կը զարնէ ,  
 խօսողներուն մտքին վրայ գուշակութիւն ընե-  
 լով . որպէս թէ ժողով մը ամբողջ՝ իրենց մտ-  
 քէն անցածէն տարբեր բան խօսելով եւ գրե-  
 լով՝ կարգացողները եւ լսողները եւ մանաւանդ  
 թէ մէկ զմէկ խաբելու ելեր են : Ասանկ կար-  
 ծիք մը՝ որու համար կըլլայ նէ անոր պատիւն  
 աղարտելով մէկ առանձին մարդու մը համար ալ  
 չզրուցուիր . ուր մնաց՝ ազգային լիակատար ժո-  
 ղով մը բաղկացընող եկեղեցականաց համար :

Այսքանս ծանուցանելէն ետքը՝ Հայոց վրայ  
 ձգուած մոլորութիւնները քննող ուրիշ լուսին  
 հեղինակները տեսնենք :

Յակոբ Ա իլեօդ յիսուսեան կրօնաւոր . ու-  
 րուն վրայօր վերոյգրելոյն վրայ ունեցածնուս  
 չափ տեղեկութիւն չունիմք . այսքան միայն գի-  
 տեմք որ ազգաւ գաղղիացի էր . եւ հայերէն  
 լեզուին անհմուտ չէր . եւ լարիներէն հայերէն  
 քառարանէն զատ ըրտ տեղաբանաց միտութեան մ'ալ  
 շինեց հայերէն , եւ Հոռովմայ պել տուաւ : Ա-  
 սիկայ յիշեալ բառարանին վերջը Հայոց կրօ-  
 նական վիճակին վրայ տեղեկութիւն տալ ու-  
 զելով՝ կարծեցեալ մոլորութիւննին ալ համբե-  
 լու ձեռք կը զարնէ . եւ միայն 13 հասը կըը-  
 նայ ստոյգ գտնել : Այլանոսի գիրքը սպուած  
 1661 թուականէն մինչեւ Ա իլեօդին բառարա-  
 նին սպուած տարին՝ 1714 , 53 տարուան մէջ ,  
 Հայոց մոլորութեանց թիւը 30էն 13ի ինչած  
 կը գտնեմք : Բայց նոյն հեղինակը նոյն տարին  
 սպել տուած չորս տեղաբանաց միտութեան մէջ ա-  
 սոնց մէկն ալ կհիշեցընէ . որքէ Ասորոսօթին  
 մէջ Խաչատր ըսելնիս կարգաբացընէ որ առաջ  
 մոլորութիւն սեպած էր . ասով մոլորութեանց  
 համբանքը՝ այս հեղինակիս համբանովը 12 կը  
 մնայ :

Ժովէ կանոնիկոս քահանայ գաղղիացի , յու-  
 ղոսն կրօնից եւ սովորութեանց ուսման ուղեաց եւ ի-  
 տաւորութեանց անունով մեծ գիրք մը շինած է  
 գաղղիերէն , որ իտալերէնի թարգմանուած է .

և անոր ՚ի Ահեհեթիկ 1737 թուին յաւելուա-  
 ծով եւ որպէս թէ սրբագրութեամբ տպուա-  
 ծէն ոմանք սնտոի աշխատութեամբ հայերէնի ալ  
 թարգմանած ըլլալով՝ հեղինակը մեր ազգին մէջ  
 Յովէա Պատրի անուանով ճանչցուած է: Ըսիկայ  
 Հայոց մէջ 15 մոլորութիւն կը գտնէ. բայց  
 թէ որ ասոնց մէջէն քանի մի պառաւական եւ  
 քանի մի անփնաս բաները դուրս հանենք նէ՛  
 գրեթէ բան չմնար: Քանզի հիւանդի վրայ  
 սուրբ աւետարան կարդալ տալէն ետքը տաճիկ  
 կանչել եւ անոր ալ կարդալ տալը՝ որ ամէ-  
 նուն պարսաւելի դատուած պառաւական սովո-  
 բութիւն մ'է, հերետիկոսութիւն կը սեպէ:  
 Մանդական կանանց մինչեւ քառասուն օր ե-  
 կեղեցի չերթալը, մանկանց հաղորդութիւն տա-  
 լը, մեծ պահոց մէջ շարաթ եւ կիրակի օրերէն  
 դատ պատարագ չընելը ուրիշ հերետիկոսութիւն  
 երեւոյր են ասոր. եւ այս վերջնոյս համար կը  
 կարծէ թէ եւտիքական աղանդէ մնացած է.  
 Թեպէտ չեմք հասկընար թէ ասիկայ այն աղան-  
 դոյն հետն ինչ յալաբերութիւն ունի. եւ չը-  
 գիտեմք ալ թէ եւտիքականները որ օր պատարագ  
 կընէին կամ չէին ընել: Աւելի ծիծաղելիս այն  
 է որ կըսէ թէ՛ խոստովանութեան մէջ զրու-  
 ցուած մեծ մեղքերուն համար քահանայն բան  
 չըսեր. բայց թէ որ ըսէ թէ ծիսական քաշեցի՝  
 անոր երկար քարոզներ եւ խրատներ աւելն  
 ետքը ապաշխարութիւն ալ կը դնէ շարաթն  
 երեք օր պահք ըրանել մինչեւ վեց ամիս: Աւ-

ըիշ հերետիկոսութիւն մ'ալ՝ ասոր կարծեօք այն  
 է՝ որ սուրբ հաղորդութեան խառն ՚ի խուռն  
 կարգով կը մերձենան. եւ ղկնի հաղորդու-  
 թեան գոհացողական աղօթք մը չըրած կերթան:  
 Քաւարան չընդունուելն ալ մէկ հերետիկոսու-  
 թիւն մը կը սեպէ. բայց նոյն հետայն ասի-  
 կայ հերետիկոսութեանց կարգէն կը հանէ ը-  
 սելով որ Հայք ննջեցելոց հոգւոյն համար ա-  
 ղօթքներ ունին եւ սուրբ պատարագ կը մատու-  
 ցանեն. որով մաքրութեան տեղ մը ճանաչել-  
 նին կը խոստովանին: Աւրիշ հերետիկոսութիւն  
 մը կը դնէ արդարոց եւ մեղաւորաց անմիջապէս  
 ղկնի մահուան արժանապէս հատուցում ըլլա-  
 լը չը ճանչնալնին. եւ չմտածեր որ՝ յիշեալ  
 մաքրութեան տեղն ընդունելը՝ այս հատուցու-  
 մըս ըլլալ կենթագրէ. այսպիսի բաները Յովէա  
 Պատրին մոլորութիւն սեպելով իր ազիտութիւ-  
 նըն ու անխոհեմութիւնը մէկէն կը ցուցընէ:  
 Տգէտ է որ Հայոց մեծ պահոց միայն շարաթ  
 եւ կիրակի օրերը պատարագ մատուցանելը մո-  
 լորութիւն կը սեպէ: որ եկեղեցւոյ հին սովո-  
 բութիւն է, եւ լաւողիկեայ ժողովն ալ յատուկ  
 կանոնով պատուիրած է (կանոն 49. բար հոյնարգծ  
 իսլ): Ընխոհեմ է. որովհետեւ չմտածեր որ  
 իրմէն օրինակ աւնելով ուրիշները՝ լատին եկե-  
 ղեցւոյ մէջ նախնի կանոնաց անհամաձայն սո-  
 վորութիւնները կրնան մոլորութիւն սեպել.  
 Ինչպէս են մկրտութիւնը ընկղմամբ ընելուն  
 տեղը ( որ հին ասունը ամէն տեղ սովորութիւն

ըլլալէն զատ կանոններով ալ արգելուած էր  
 ուրիշ կերպ ընելը), սրկմամբ կամ ցօղմամբ  
 կընեն. սուրբ հաղորդութիւնը միայն մէկ տե-  
 սակէն կուտան. քահանային ձեռքը բընածը  
 եւ սրբագործածը ժողովրդեան չեն տար. եւ  
 ուրիշ ասանկ բաներ՝ որ լատին եկեղեցիք ամէն  
 տեղ այնպէս կընեն: Սենք մենէ չեմք ըսեր թէ  
 այսպէս բաներով լատին եկեղեցին հերետիկոս  
 եզեր է, երբ Յովէտ Պատրիկ պէս տգէտներն՝  
 ասոնցմէ շատ թեթեւ բաները նայոց մէջ տես-  
 նելով մոլորութիւն եւ հերետիկոսութիւն կան-  
 ուանեն: Ինչպէս որ լատին եկեղեցին պարա-  
 զայից նայելով եկեղեցւոյ կանոններուն մէջ  
 փոփոխութիւններ ընելը պատշաճ տեսեր է,  
 նայոց եկեղեցին ալ նոյն իշխանութիւնն իր  
 մէջ կըրնայ բանեցընել, ըստ որում եկեղեցի-  
 թէպէտ գործով բանեցընելը չտեսնուածի պէս  
 է: Իսկ այն բանն որ ասմիկները կընեն եւ ե-  
 կեղեցւոյ հովիւները կարգելուն, բնաւ երբէք  
 մոլորութեանց կարգը չեն կըրնար մանել.  
 ինչպէս են հիւանդի վրայ աւետարան կարգալ  
 տալէն ետքը տաճկի ալ կարգալ տալը. սուրբ  
 հաղորդութիւն ասնելու համար իրարու ետեւէ  
 կարգաւ երթալուն տեղը անկարգ եւ խառն ՚ի  
 թուան երթալը. եւ այն ո՞ր ազգի մէջ ասանկ եւ  
 աւելի ծանր զեղծութիւններ չկան. եւ ո՞ր ազգի ե-  
 կեղեցի ասոր համար հերետիկոս եւ մոլորեալ  
 ըսուեր է. քանի՞ որ յատուկ կանոնով այսպէս  
 ընելու պատուէր տուած չէ: Ուստի այսպիսի

մոլորութիւն կարծուածները մոլորութեանց  
 կարգէն դուրս հանելով կըրնանք ըսել թէ  
 Յովէտ Պատրիկ նայոց մէջ բնաւ մոլորու-  
 թիւն գտած չէ. վասն զի եւտիքականութեան  
 համար ալ՝ որուն մէջ ինկած կը կարծէ հայե-  
 ըը, կըսէ որ դաւանութիւննին շիտակ է, եւ  
 մոլորութիւննին դիւրաւ կը շիտակուի: Զեմք  
 գիտեր թէ շիրմի դաւանութեան մէջ ի՞նչ մոլորու-  
 թիւն կըլլայ դիւրաւ շիտակուելու:

Պետրոս Արարեոն՝ ազօթողաց կարգէն քա-  
 հանայ: նայերէն լիզուի հմուտ չէք. եւ քաջապա-  
 րտաբէն ազգից եւ արարողութեանց ասորք պարար-  
 քի գրքէն գիտեմք որ Վալանտի գիրքը կարգա-  
 ցած է. բայց անիկայ հայերն ինձմէ ադէկ գի-  
 տէ ըսելով ծառայաբար անոր խօսքին կապուած  
 ըլլալը՝ նայոց վրայ միայն ութը կամ ինն  
 մոլորութիւն գտած ըլլալովը կը ցուցընէ. եւ  
 ՚ի Քրիստոս մի բնութիւն ըսելուս վրայ՝ զոր  
 հինական արքեպիսկոպոսիտոս հեղինակն անգամ նայոց  
 մոլորութիւններուն կարգը դրած է, այս հե-  
 ղինակս այսպէս կը խօսի. « նայ վարդապետնե-  
 », ըր բնութեանց միութիւնը միայն անոնց ՚ի  
 », Յիսուս Քրիստոս ներքին միաւորութեանը  
 », համար կընդունին, զոր անշիտի կը դաւա-  
 », նին Եւտիքեսի դեմ. եւ իրօք ալ՝ երկու մի-  
 », սցեալ բնութեանց կը պատշաճի Եւ ըստ այսմ  
 », տեղի կուենայինք հայերը ամէն կերպիւ ուղ-  
 », դարաւ գտնելու մարդեղութեան խորհրդոյն  
 », վրայօք, թէ որ Քաղկեդոնի ժողովքն ընդու-

„ նել չուզելնուն վրայ յամառեալ չըլլային „  
 ( Զառ. Ժ. 107. 14 ) : Թէ որ այդ է նէ բան  
 մ'ըսել չէ. եւ այս խօսքը գրողը թէ որ այս  
 պատմական մասին մէջ գրածնիս եւ քննողական  
 մասին մէջ յատուկ յատկաւորով գրելիքնիս կար-  
 դար նէ՝ կ'ուսամք որ հայերն այս մասին ալ  
 պակասաւոր չէր սեպեր : Ըստ հեղինակիս՝ ու  
 նիմանս որքեքսեփեանց հեղինակին մէջ երեւելի  
 տարբերութիւն գտնուիլը գործոյս քննողական  
 մասին մէջ ընդարձակօրէն ցուցընելու տեղ ու-  
 նիմք :

Միբայել Լըբէէն գաղղիացի՝ բազմաճմուռ  
 մասենագիր . բայց հայերէն լեզուի անճմուռ .  
 որով չայոց ազգին վրայ ուղած տեղեկութիւն-  
 ները նոյն ազգին գրքերէն առնելու անկարող  
 ըլլալով ուրիշ ազգիւրներու գիմեր է . եւ որ-  
 կէց առած ըլլալն ալ ինք կիմացունէ Քրիստո-  
 սոստանս աբխազ մակագրեալ մեծ գրքին մէջ  
 ( Կարոյ . Լ. էջ. 1367 ) . « Յայները չայոց  
 „ հետ յաճախ կենակցութիւն ընելով անոց  
 „ միտքը եւ բարքը եւ ծէսերնին մեծ մտողու-  
 „ թեամբ եւ հետաքրքրութեամբ գիտեցին եւ  
 „ հայերը կաթուղիկէ եկեղեցիէն վեց կէտի  
 „ վրայ տարբերեալ գտան » : Հեղինակիս գի-  
 մած ազգիւրին պըտորութիւնը աղէկ կիմացուի  
 վերը գրածներէն : Հոս գիտելու արժանին աս  
 է՝ որ չայոց ազգը հերետիկոս ցուցընելու ա-  
 մէն տեղ մեծ ջանք ունեցող յայները միայն  
 վեց հասիկ մոլորութիւն կըրցեր են գտնել՝ ի-

րենց հղօր երեւակայութիւնն ալ 'ի գործ գը-  
 նելով , երբ ազգաւ չայ՝ եւ չայաստանեայց  
 եկեղեցւոյ մէջ ծնած եւ սնած , եւ նոյն եկե-  
 ղեցւոյ վարդապետներուն գրքերովը կրթուած ,  
 ըստ մեծի մասին վարդապետ , որով եւ մեր ե-  
 կեղեցւոյ բուն դաւանութեանը քաջաճմուռ  
 կարծուած անձինք , ունիգորները , հարիւր տա-  
 սըն եւ եօթն մոլորութիւն կը համրեն : Թէ որ  
 յոյներն ասոնց այս ատիճանի քաջութիւնն ի-  
 մանան՝ մեծ յարգութիւն կուտան . գուցէ 'Ներ-  
 սէս պաղոնն ալ սուրբերու կարգ դնեն 'Վիկոնէն  
 ալ վեր . որովհետեւ 'Ներսէս կրկնակնունք ըլ-  
 լալով իրենց աւելի մօտ է :

Գոմինիկոս Մանսի , Խաւիայի Լուքքա քա-  
 ղաքին արքեպիսկոպոսը՝ Լապպէի Յուլիոց հաստ-  
 ճան մեծ եւ բազմաճատոր գիրքը նորոգ քննու-  
 թեամբ եւ ծանօթութեամբ եւ յաւելուածնե-  
 րով տպելու առթիւ՝ չայոց դէմ եղած Ղ'ժի՝  
 ամբաստանութիւններն ալ քննեց . բայց որքան  
 որ հայերէն չէր գիտեր նէ՝ իր ըրած քննու-  
 թեանը համար բընած ճամբան Լըբէէնին բըռ-  
 նածէն օրինաւոր է . որովհետեւ տեղեկութիւ-  
 նը ամբաստանեալներէն կուզէ : Ըստ վ ալ սը-  
 խալ դատումէ ազատ եւ ապահով մնացած է :  
 Միտար կաթուղիկոսին ըրած ժողովքին կող-  
 մէն նոյն ամբաստանութեանց արուած պատաս-  
 խանն առաջն առաւ . եւ արգիւնքն այն եղաւ՝  
 ինչ որ կըսէ Յուլիոց հաստճան գրքին մէջ ( Կարոյ .  
 ԻՆ . եր . 1221 . տպ . վէնէտիկ . 1782 ) .

« ես բան մը չգտայ որ դանոնք ուղիղ հաւատա-  
 « քէն գոնէ քիչ մը խոտորած ցուցընէ : » Դոյն  
 գրքին մէկ ուլիշ տեղը՝ ուրիշ բազմահմուտ մա-  
 տենացիք մ'ալ իրեն ընկեր կառնու այս վկա-  
 յութեանս . կրսէ . « 2 . Մարդէնէ կը համա-  
 « թի թէ հայերուն այն պատասխաններուն մէջ  
 « ընտւ մէկ մոլորութիւն մը չերեւիր՝ որով  
 « այն ազգին վրայ հերետիկոսութեան աղտ մը  
 « իմացուի » ( տեք . եր . 1261 ) , Եւ ինքն Ման-  
 սի՝ 2-րդ տուած պատասխանը լման կարգացի  
 կրսէ :

Պիտի կարծէ ընթերցողը որ մէկ դիէն յու-  
 նաց եւ մէկ դիէն խորթացեալ հայ ունիդորաց՝  
 2-րդ դէմ հանած ամբաստանութիւննին անա-  
 չառ եւ անչահասէր աստուածաբաններուն քըն-  
 նութեան քուրայէն անցնելով ոչինչ ելաւ եւ  
 իբրեւ մուխ ցնդեցաւ նէ՝ ալ անկէց ետքը ը-  
 սելիք չէր մնար . եւ թէ որ մէկը դարձեալ բան  
 մ'ըսէր՝ իմաստուն մարդ մը լսած ասենը հին  
 բան կը ծախես ըսելով վրան կը խնդար ու  
 կանցնէր :

Բայց բանն այսպէս չեմք տեսներ : Արքան  
 որ եւրոպացի իմաստուն անձինք հայերը իրենց  
 վրայ դիզուած շեղջօհուտուած մոլորութիւննե-  
 րէն արդարացուցին , տակաւին դատուեցան այն-  
 պիսիներ , որ հին կարծեօք նախապաշարեալ՝ տա-  
 կաւին զ2-րդ եւտիքական հերետիկոս կը կար-  
 ծէին : Այսպիսիները սա աղէկութիւնն ունէին ,  
 որ իրենց արուած տեղեկութեանցը դիւրաւ կը

համոզուէին . եւ խօսքերնին ետ ասնելնին ալ  
 չէ թէ ամօթ՝ ալ պարծանք կը համարէին , ինչ-  
 պէս եւ է ճշմարտիւ . վասն զի զհայս հերետի-  
 կոս կարծելու վրայ յամասելէն շահ մը չու-  
 նէին . 2-րդ մէջ քարոզութեան պաշտօն մը  
 արուած չէր անոնց՝ որ մէկ հայ մը 2-րդ մի-  
 եկեղեցւոյն հնազանդեցընելնին՝ որ 2-րդ ե-  
 կեղեցին մոլորութեան մէջ է ըսելով կըրնան  
 յաջողցընել , մոլորութենէ եւ դժօխքէ հօգի  
 մը ազատածի պէս ցուցընելով 2-րդ միայ աթո-  
 ոյն առաջը յարգերնին աւելնայ : Եւ քանի  
 որ եւրոպացւոց մէջ հայերուն լեզուն սովվելու  
 փափաքողներուն թիւը շատցաւ , ( որ տակաւին  
 պէտք եղածին եւ փափաքածնուս չափը հա-  
 սած չէ ալ նէ քիչ ժամանակէն անօք ալ հաս-  
 նելուն յոյս կ'ոյ՝ սցմեան 2-րդ միայ հայրա-  
 պետ Պիոս Թիին՝ արեւելեան քրիստոնէից հա-  
 մար բրօքականտային ծիւղ մը աւելցունելով եւ  
 հրաման ընելով որ արեւելեան լեզուաց հը-  
 մուտ եկեղեցականք այն ծիւղը բաղկացընեն ) ,  
 եւ 2-րդ եկեղեցւոյ եկեղեցական պաշտամանց  
 եւ իմաստուն եւ սուրբ հայրապետաց եւ վար-  
 դապետաց գրքերը անոնց ծանօթացան եւ հա-  
 սարակաց գրատուններուն մէջ տեղի ունեցան ,  
 2-րդ աստանեայց եկեղեցւոյ վրան առաջուց ունե-  
 ցած ծուռ կարծիքնին ալ շիտուեցաւ : Բսածնիս  
 ստուգելու համար բուսկան է կարգալ Աովսէփ  
 Քարէլլէդդի իտալացի քահանային 2-րդ աստանե-  
 անունով շինած երեք հատոր գիրքը . նոյն հե-

գինակին՝ Պէրբասգէլի Եկեղեցոյն պարսեօնի տառապանքն թարգմանութեանը մէջ Հայաստան-հայց եկեղեցոյ վրայոք յաւելուածները եւ քննարանական ճառերը . եւ Լատուար Տիւրքի-կի՝ որ վարդու արձանագրաց ճիմարանին ան-գամ է . Հայաստանոց եկեղեցոյ պարսեօնի եւ եկեղեցոյն պաշտամոյց վրայ յորինած փոքրիկ գիր-քը . որուն քիչ ժամանակի մէջ երկու անգամ տպուիլը՝ դո՛ւնէ գաղղիացոց մէջ այն գրքին հա-յոց վրայ տուած գաղափարաց ծաւալելուն մեծ նշան մ'է : Եսոնց վրայ գաղղիացի եւ իտալացի գրագէտները երբ իմանան որ հայագրի վարդա-պետ մը դարձեալ նոյն ազգին վրայ Տին գաղա-փարներու համեմատ՝ եւ յունական պարսաւագիր ոգւով բաւական ստուար գիրք մը շարագրեր եւ հրատարակեր է , թ'նչ կրանն . մանաւանդ երբ իրենց անաչառ մատենագիրներուն հետ ասիկայ բաղդաանն :

Չեմք ուզեր առանց յիշատակելու անցնիլ աղբաւ հայ՝ եւ քննութեամբ եւ մատենագրա-կան ըստառովն իտալացի , եւ կրօնիւք հոսվ-մեական՝ Սեդրոսեան Յովհաննէս սեպուհը . ըստ իտալացի հնչման Ղօվաննի աէ Սէրբոս կոչեցեալ . որ երկու գիրք շինած ունի իր քննիկ հայոց ազգին վրայ , հմտութեամբ եւ աստուա-ծաբանական եւ պատմական անդնկութեամբ լի . երկուքն ալ Հոսովմոյու բրօքականտայի ժողո-վոյն ուղղուած . եւ իհատուայի ուսման վերա-նորոգչաց կողմէն՝ մէջն քնդդէմ ուղղափառ

սուրբ հաւատոյ բան չգտնուելուն վկայութիւն առած\* . մէկին մակագիրն է , Ղաա վիճաբանական քննարկան , ամանեան որբութեան հոգաբայ կախակի հո-յերուն վերաբերեալ , իրծմարտէի երկու պարսեօն-թեանց լրայ , բառածալ գիրքով տպեալ 'ի Վէ-նեակի յամին 1783 : Երկրորդը երեք հատոր է ութածալ , եւ մակագիրն է : Օսմանեան կայսերա-թեան հոգաբայ հայ ազգի կրօնէին եւ բարոյականին վերա-բերեալ ժամանակագրական յեշտապարսններու պարսեօն-համարարանիւն , տպեալ 'ի Վէնեակի յամին 1786 : Եւս հեղինակիս՝ որ ինչպէս կը կարծեմք՝ Վէ-նեակոյ այն ժամանակի մխիթարեան միաբանու-թեանն ալ բան հարցուցած պիտի ըլլայ . որով-հետեւ Մարինովիչ՝ հայ ազգին վերաբերեալ վարդապետական անդնկութիւններ տալու չափ հայերէն չէր գիտեր . միայն Սեդրոսեանին գը-րածներուն՝ լատին աստուածաբաններէն եւ ժո-ղովներէն վկայութիւն թելագրելով անոր կօգ-նէր . սա հանգամանքը գովիլի կը գտնեմք , որ առաջին գործին մէջ հրատարակած սխալը երկ-րորդին մէջ շխտած է . գործընտանի , վիճաբան-կան քննարկան հասին մէջ լեզուէ լեզու պաշտած

\*Աս գրքերու շինուելուն օգնած է Մարի-նովիչ յիտուսեան կրօնաւորը . Ընդդէմ դատախա-զութիւն ըրած է զակնինդի ( Պաղինեան ) հա-լ յազգի եպիսկոպոսն եւ ուրիշները . բայց Հոսովմ-ասոնց ըստն անկիմն գտնուուն համար ակամջ գը-րած չէ : ( Տէս վիճաբան վիճաբան անունով գորստա-ցարի Է՛՛՛ . էր . 66 ) :

սուտ համբաւէ մը խարտելով կարծեր էր որ Յովհան Իմաստասէր հայոց հայրապետը՝ որ Օձնեցի անունով կը ճանչցուի, ազգիս մէջ Քաղկեդոնի ժողովոյն դէմ հակառակութիւնը շատցընելու՝ եւ նոյն ժողովն ընդունող քրիստոնեայ ազգերէն իր ազգը ազատելու համար Մանազկերտ ժողով քրեր է. եւ քանի մի եկեղեցական ծէսեր եւ արարողութիւններ՝ որ մինչեւ անոր օրը հայք ալ յունաց պէս կընեն եղեր, փոխեր է: Երկրորդ գրքին մէջ, որ է Պարմական համառօտութիւնը, այս առաջին կարծիքը կը ջրէ. եւ կը հաստատէ որ հայոց եկեղեցւոյն յոյն եկեղեցիէն տարբեր արարողութիւնները հակառակութեան ոգւով մտած չեն, եւ Յովհան Իմաստասէրը չէ՛ ոչ զանոնք մտցընողը եւ ոչ Մանազկերտի ժողովը գումարողը:

Մինչեւ հոս յիշուած մատենագիրները, Մարգէնէ, Մանսի, Քարէլէկդղի Տիւրքիէ, եւ Յովհաննէս Սեղբոսեան, հայոց վրոյ ունիգորներուն եւ անոնց հետեւողներուն համբաւած ծուռ կարծիքը ջրելու շատ մեծ օգուտ բերին: Եյս կողմէս Մխիթարեան միաբանութեան Ալէնէտիկ մնացած ճիւղին աշխատութիւնն ալ չեմք կրնալ ուրանալ. որ թէպէտ իրենց ազգակից՝ եւ իրենց նման բայց իրենց ոգիէն օտար, հոովմէական եկեղեցականներէն ատեն ատեն հակառակութիւններ կրեցին, բայց մինչեւ մօտ ժամանակներս իրենց մատենագրութիւններովը հայոց ազգը եւրոպացւոց՝ եւ եւրոպացիները

հայոց ազգին ճանչցընելու ջանացին: Ասոնց վերայ համառօտ տեղեկութիւն մը տալ կարժէ:

Ասոնք Հայոց սուրբ հայրապետաց քանի մի գիրքերն՝ որոնցմով Հայաստանեայց եկեղեցւոյ բուն դաւանութիւնը կը հասկըցուէր, եւ օտարազգիները մեր ազգին վրայօք կրօնական մասին ճիշդ գաղափար մը կանուսին, եւրոպացիներուն ճանչցուցին անոնց ընտել եւ ծանօթ լիպուներուն թարգմանելով:

Վեգերեան Հ. Մկրտիչը՝ Յովհան Իմաստասէրին նախ եւ առաջ քնդդէ երեսօթականաց ճառը հմուտ եւ պատշաճաւոր ծանօթութիւններով լատիներէնի թարգմանեց եւ 1816 թուին տպեց: Սուրբ հայրապետիս վրայօք սուտ համբաւներ տարածուած էին, ինչպէս որ վերն բնիք. այս գիրքս այն համբաւներուն սուտ բլլալուն անհերքելի ապացոյց էր. բայց հայազգի հոովմէական կրօնաւորներու մէկ մասը՝ չգիտեմ թէ ազիտութեամբ չէր նէ ինչո՞ւ համար կրնար բլլալ, այն սուտ համբաւոյն իրենց ժողովրդեան մէջ հաստատուելուն իրենց քարոզութեամբը օգնող բլլալով՝ Եւրոպայի հոովմէական աստուածաբանից՝ մեր սուրբ հայրապետն ուղղափառ ճանչնալն իրենց ծանր եկաւ. եւ Ալիէնայի Մխիթարեան միաբանութեան առաջին արքահայրը Ըստուածատուր Բարիկեան, որ գուցէ Ալէնէտիոյ միաբանութեան մերժուած եւ Թրեստ առանձին վանք բանալու ստիպուած բլլալով (որ ետքը Ալիէննա փոխադրեցաւ),



քիչ մըն ալ Աննեակիկեաններուն դէմ սխա-  
 սըրտած էր, Տրորականտոյցի դպրատան աշակերտ  
 քօլէճցի անուանեալ կարգաւորաց հաճոյ բան  
 մը ընելու՝ եւ միանգամայն փոքրիկ վրէժխընդ-  
 րութիւն մ'ալ ընելու համար փոքր տետրակ մը  
 հրատարակեց. որով՝ Աննեակիկեաններուն  
 դէմ սուրբ Յովհաննէս Օճննցիին հերետիկոս ըլ-  
 լալուն վրայ կը պնդէր. եւ ինչպէս որ լսած  
 եմ՝ ընդդէմ երեսօթանոցի ճառին հեղինակն ա-  
 նկիայ ըլլալը կը ժխտէր: Ինչպէս որ լսած եմ  
 կը տեմ. վասն զի ՚. Գարիկեանին տետրակը թէ-  
 պէտապուած է, բայց հրատարակումը (ինչպատ-  
 ճառով ըլլալը չգիտեմ) խախտած է: Աոր  
 ապուած ժամանակները Միքայէլ Բէտեան ան-  
 ուռնի հայազգի բժիշկը բժշկութեան ուսմուն-  
 քը Աիեննա աւարտելով իր հայրենիքը դառնա-  
 յու ժամանակը Աիեննայի Միքիթարեանց վան-  
 քը հրաժարական ողջոյնը տալու համար գացած  
 ըլլալով այն նորատիպ տետրակէն մէկ հատ մ'  
 ընծայ կընդունի, զոր անոր քովը տեսայ՝ երե-  
 սուն եւ հինգ տարիէն աւելի կայ, բայց կար-  
 դալու անարժան դատելով աչքէ անցնելու  
 հոգ չըրի: Եւսպիսի մարդիկ սուրբ հայրապետին  
 համբաւն աղարտել ուղեւորով աւելի պայծառ-  
 ցոյցին. եւ հոսովմէական եկեղեցւոյ երեւելի  
 աստուածաբաններ, որոց մէկն էր Ծուրլա բաղ-  
 մահմուտ կարգինալը, եւ մէկը՝ Մաւրօ Վա-  
 բէլաբի, որ ետքը Գրիգոր Ժ.Օ. կոչմամբ  
 ՚. ոսովմայ հայրապետ եղաւ, սուրբ հայրապետին

ուղղափառութեանը վկայութիւն տուին իրենց  
 ստորագրութեամբը:

՚. Մկրտիչ Բագերեան՝ Յովհաննէս Իմաս-  
 տասերին ընդդէմ երեսօթանոցի ճառը լատինաց-  
 ւոց ծանօթացնելը հերիք չսկսեց. սրբոյն  
 զրչէն ելած եւ մինչեւ մեր ժամանակը հասած  
 մրքան ճառեր ունի նէ՛ եկեղեցական կանոննե-  
 րովը՝ մէկ տեղ, լատիններէն թարգմանեց եւ  
 տպագրութեամբ հրատարակեց: Սուրբ հայրա-  
 պետին անուան թշնամիները ասոր դէմ ալ ամ-  
 բաստանութիւն ըրին՝ ինչպէս որ կը յուսացուէր:  
 ՚. ոսովմայ գրոցքնութեան ժողովոյն յանձնուե-  
 ցաւ քննութիւնը. եւ վճիռ ելաւ որ այս մա-  
 տենագրութեանցս մէջ ընդդէմ ուղղափառ հա-  
 տոյ բան մը չկայ:

՚. Մկրտչին եղբայրը ՚. Յարութիւն  
 Բագերեան, սրբոյն 'Աերսեսի Լամբրոնացւոյ՝  
 ՚. ոսովմայի ժողովոյն մէջ ըրած հրաշալի ասե-  
 նաբանութեանը իտալերէնի թարգմանեց եւ ծա-  
 նօթութիւններով ապեց Աննեակիկ: Սրբոյն  
 'Աերսեսի Լամբրոնացւոյ ուղղափառութեանը  
 վրոյսօր այն ատենները բան ըսող չկար. եւ  
 յատկապէս ասեմաբանութեանը Աղէմէս Ատլանոս  
 իր գրքին մէջ գոված եւ անկէց վկայութիւն ալ  
 առած էր. ուստի ասոր աչազրքին Լարոպայի լե-  
 դուով հրատարակուելուն հակառակող չէղաւ:

Բետիքեան ՚. Գարիկէլ, ՚. ոսովմայ սրբոյ  
 բղիման վարդապետութիւնն ըստ մտաց (թէ եւ  
 ոչ ըստ բառից). հոսովմէականին համեմատ ըլ-

լալը առանձին ճառի մը մէջ ցուցուց մեր եկեղեցական գրոց եւ սուրբ հայրապետաց վկայութեամբը: Այս վարդապետութիւնս՝ բնութիւնս չորսն է՝ յիշատակ ըսելով մեր ազգին սովորական չըլլալուն համար առ հասարակ գայթակգութեան պատճառ կըլլար. հոյերէնը Հարաւանի քաղաքապետութեան վերջը տպելով ցուցուց որ ըստ դաւանութեան հայերն ալ յոյներն ալ լատին եկեղեցւոյ համեմատ են: Աոյն ճառն իտալերէնի թարգմանելով եւ առանձին տպելով ալ Աւրոպայի աստուածաբաններուն հակըցուց որ Հայք այն մասին հերետիկոս չեն. ինչպէս որ լատինահայ ուրիշները եւ անոնց հետեւողները եւ ասոնցմէ սովորելով ռազմաթիւ եւրոպացի մատենագիրք կարծած էին:

Հասերը կը համարուին թէ Հայաստանեայց եկեղեցին սրբոյն Աւետոսի օտաքելոյն վրայ մէկ առաւելութիւն մը չընծանչնար ուրիշ առաքելոց համեմատութեամբ, որպէս թէ նոյն առաքելը յետ աստիեաց (Վար. Կ. 3) եւ գլխաւոր առաքելալ ըսելը հոյոց եկեղեցւոյն սովորական լեզուն չըլլար: Այս կարծեացս հակաակ մեր եկեղեցական եւ վարդապետական գրոց մէջ որքան խօսքեր եւ վկայութիւններ կային նէ՛ Ստեփաննոս Ասիղեան վարդապետը ժողովելով լատիներէնի թարգմանեց. եւ հայ ընագրին հետ մէկ աեղ տպեց: Սիոնէ անուն գաղղիացի քահանայ մը այս վկայութիւններս՝ խորհրդական խոստովանութեան եւ վերջին օծման վրայօք հայոց

եկեղեցւոյն եւ վարդապետաց տուած վկայութիւններուն հետ մէկ տեղ գաղղիերէն լեզուի թարգմանած, եւ օղջէ քրիստոս մակագրեալ ամսօրեայ պարբերականին մէջ տպած է. (1846 յուլ. Եր. 343—364):

Անդհամրապէս հայոց հայրապետաց եւ վարդապետաց կրօնական վարդապետութեանց վրայ տեղեկութիւն տալու համար նոյն Ալեքեանիկի Մեթիթարեանք բազմահատոր գիրք մ'ալ լատին լեզուով շինած ըլլալին կը ծանուցանէ Տ. Սուքիաս Սոմալեան արայն՝ իրեն իտալերէն լեզուով յօրինած դատիք պատմութեան հոյ քրիստոսութեան գրքին մէջ. (Եր. 189). Անգլիանակին անունը չարք. այնքան միայն կը ծանուցանէ որ իրեն այս պատմութիւնս գրած ժամանակը տակաւին ձեռագիր էր. ետքը տպուած է կամ չէ, անգլեկութիւն չուրիմք, բայց չեմք յուսար. վասն զի կը տեսնեմք որ Ալեքեանիկի մեթիթարեանք հայոց եկեղեցւոյ ուղղափառութիւնը պաշտպանելուն համար կրած հակառակութիւններէն ձանձրացոր են. եւ հիմայ՝ բաւական տարիներէ ՚ի վեր, այդ գաղափարին ծառայող գիրք մը հրատարակած չուրին. երբեմն մեր նախնի վարդապետաց մէկ հաւաքման մը շարունակութիւնը կը հանեն օպիքրտ հոյակապ անունով. կամ Աւրոպական լեզուէ մը գիրք մը կ'թարգմանեն եւ կը հրատարակեն. իսկ բուն իրենց գրչէն՝ բանասանլծական կամ ուրիշ տեսակ գրքեր են ելածները, կրօնից վերաբեր-

եալ գրքեր հրատարակելէն դադարած կերելին .  
 Բեհտիքեան Հ . Գարբեիի մէկ աշխատու-  
 թիւնն ալ որ է հայոց խորհրդատեարին թարգ-  
 մանութիւնը , հոս ընդարձակօրէն ըսել չու-  
 ղեցինք . գործոյս բննորական մասին մէջ յատ-  
 կապես խօսելիք կուենեամք : Բա այժմ սա ը-  
 սեմք , որ այս թարգմանութիւնս՝ որ իտալերէն  
 էր , Բասթալ անուն դաղղիցիի քահանայ մը գող-  
 ղիւրէն լեզուի թարգմանեց իտալերէն թարգ-  
 մանութենէն աւելի հաւասարութեամբ : Եւ  
 տպուած է ասորոսածոյն պաշտօնացի քատարանին  
 տիտիօնէր որը ևս Երեւանի վերջը :

Յիշատակեալ թէ հայազգի եւ թէ Եւրո-  
 պայի մատենագիրներուն գրածները բաւակա-  
 նէն ալ աւելի էին Հայաստանեայց եկեղեցւոյն  
 վրայ հերեպիկոսութիւն եւ կաթուղիկէ եկե-  
 ղեցւոյ դաւանութենէն տարրեր դաւանութիւն  
 գտնուելուն ստուերն անգամ վերցընելու , եւ  
 այն գրուածներուն հմուտ եւրոպացի մը լսէր  
 թէ հայոց եկեղեցին մոլորած է՝ չէր կրնար հա-  
 ւատալ , ենթադրելով թէ ուղիղ դատում ու-  
 նեցած ըլլայ . մանաւանդ երբ զիտնար որ Հայք  
 երբեմն երբեմն թէ՛ ժողովրով եւ թէ՛ մասնա-  
 ւոր՝ բայց յարգութեան արժանի անձանց վը-  
 կայութեամբ՝ Հոռովմայ եկեղեցւոյն հաւատոյ  
 դաւանութիւնը ուղղափառ գտեր եւ յայտ-  
 նի խօսեր են : Պօղոս Բ . Կոստանդնուպոլսի  
 պատրիարքին օրը Կոստանդնուպոլսիս եղած ժո-  
 զովն՝ որուն ազգային լիակատար ժողով , որով

եւ Հայաստանեայց Եկեղեցւոյն անուանեալ  
 եկեղեցին ներկայացընող ըսուելուն բան մը չէր  
 պահեր՝ Սոսյ կաթուղիկոսն անձամբ եւ Եջ-  
 միածնի կաթուղիկոսին նուիրակը եւ բաղմա-  
 թիւ եպիսկոպոսներ եւ վարդապետներ եւ զիտ-  
 նական քահանայներ եւ վարժապետներ զըտնը-  
 ուելով , ազգային դաւանութեան տեարակ մը  
 հանեց Հոռուր սէրբ մակապրով . որուն ուղղա-  
 փառական ըլլալուն նոյն իսկ հոռովմեական հա-  
 յոց վարդապետները վկայեցին . եւ անոնցմէ ու-  
 մանք այս վկայութիւնս ալ չուզելով ազդե-  
 ցութիւնը կտարելու աշխատեցան ալ նե՛ . Եւ այնք  
 հերքելու եւ մոլորական ցուցնելու համար  
 գրիչը ձեռքն աւնող մը չեղաւ . եւ ուղղափա-  
 ռութեանը վկայողները չէ թէ լոկ երեսանց  
 ակնածութեան համար , այլ ներքին համոզմամբ  
 վկայելուն նշան , վեց հոգի հայոց եկեղեցւոյ  
 մէջ պաշտօն վարելու յանձնառու ըլլալով վե-  
 դար հագան եւ ասով չէ թէ Հոռովմայ եկե-  
 ղեցին ձգելով հայոց եկեղեցին մտած եղան .  
 այլ երկու եկեղեցեաց դաւանութեանը մէջ տար-  
 բերութիւն մը չգտան : Եւ Հոռովմայ եկեղեցիէն  
 դատուած չըլլալուն ապացոյցն ալ գործով տը-  
 ուին . վասն զի երբ Հոռովմայ աթոռոյն առաջը  
 նոր ունիգորներուն խօսքը յարգուեցաւ , եւ ա-  
 ռաջուց Հոռովմայ չիմացուցած եւ անոր հաճու-  
 թիւնը չտած Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ  
 պաշտօն վարելին եւ յիստուածոյինս անոր հա-  
 ղորդ ըլլալու յանձնառութիւննին յանցանք

սեպուելով դատապարտեցան նէ՛ սիրով այն դատապարտութեան պատիժը կրելու յանձնառու եղան . եւ այն վեցին մէկն ալ Հայաստանեայց եկեղեցւոյ հաղորդութեան մէջ չմնաց . բայց կըլըսենք ալ որ անոնց մէջէն գոնէ իրենց ընթացքն ըստ իմիք արգարացընելու համար հայոց եկեղեցւոյ ուղղափառութիւնը նոր յայտագրով մը Հոովմայ հայրապետին յայանք են , որով անտարակոյս եմք որ անիկայ ալ՝ որ առանց իր հրամանին եղած միաբանութիւնը դատապարտեց կատկածելով թէ Հայաստանեայց եկեղեցւոյ վերայ ձգուած մոլորութիւններուն մէջ ինկան , բանը հասկընալէն ետքը հրաման կուտար . եւ հիմայ այն ցածկալի միութիւնը եզած լինցած կըլլար . եւ այն ասեանուն Հոովմայ հայրապետը՝ Լէոն Երկ . եկեղեցւոյ մէջ յաւիտենական յիշատակոց արժանի մեծ բան մ'ըրած կըլլար . Ալէնեակոյ Սինթարեան միաբանութիւնը այս բարեպատեհ առիթը ձգեց . որ գուցէ մինչեւ հիմայ սրտին ցաւ եղած է :

Մասնաւոր վարդապետաց խօսածները մէկիկ մէկիկ մէջ բերելն ընթերցողներուն ալ մեզի ալ ձանձրութիւն մը կըլլայ . բաւական կը սեպենք որոյն Պետրոսի Լամբրոնացւոյ վկայութիւնը . անանկ անձի մը՝ զոր Հայաստանեայց եկեղեցին կը տօնէ , եւ Հոովմալ անոր սրբնաբանութիւնը եւ պարտաբի մեկնութիւնը որ խորհրդաբանութեանց գրքին հետ մէկ տեղ Ալէնեակոյ տպուեցաւ , քննութեան առնել տալով ուղղա-

փառութեան դէմբան չգտաւ մէջը եւ կը յարգէ : Մտիկայ Յովհաննէս անուն բարեկամի մը հետ եղած կամ ըլլալ ձեւացուցած մէկ տրամախօսութեան մը մէջ՝ որ սուրբ պարտաբի խորհրդաբանութեանց գրքին մէջ անցուցած է , վանքերը բարեկարգելու համար փասնկն ու Հոովմը եւ ասորին օրինակ բանել առաջարկելով՝ Յովհաննէս կրէ . « Բայց ասեմ որ ՚ի մեզ իմաստունքը » ըլլա՛ թէ նորա ՚ի հաւատոց թիրացան . եւ « ոչ է պարտ նախանձիլ ընդ սոսին » , « Իրուն Ս . Հայրը կը պատասխանէ . « Ես ասեմ զայդ » եւ ոչ բնաւ , թէ մեք միայն եմք Վրիստոսի « ժողովուրդ . եւ իմաստութեամբ քննեալ ոչ « գտար առ սոսին դոնեայ սակաւ ինչ այլափառութիւն . այլ են ճմարտապէս ուղղափառ » ( Պրն . պարտ . եր . 52 . տպ . Վէնէ . 1847 ) : Երբ մէկը՝ որ իր հաւատոյ դաւանութիւնն ալ զիտէ՝ ուրիշինն ալ , եւ միւսը ուղղափառ անուանած ատենը ինքն ալ իր դաւանութեանը վրայ հաստատ կը մնայ , անտարակուսելի է որ իր դաւանութիւնն ալ անոր ըստ ասեանայնի համաձայն կը ծանչնայ : Եւ երբ հայն իր ժողովներովը եւ հայրապետներովը եւ մատենադիրներովը կը վկայէ թէ Հոովմայ եկեղեցին ուղղափառ է , վկայած կըլլայ միանգամայն այն թէ իր եկեղեցւոյն եւ անոր դաւանութեանցը մէջ տարբերութիւն չկայ . կայ ալ նէ՛ լոկ ըստ ձայնին եւ ըստ բառից է . հիմապէս չէ՛ . ասանկ որ չըլլայ նէ՛ հայն իրխօսքովը զինքը դատապարտած կըլ-

ըայ իբրեւ հերթիկոս • վասն զի ուղղափառու-  
կան դաւանութիւնը՝ որ է Ճմարտահաւատքը՝  
մեկէն աւելի չկրնար ըլլալ, անկէց տարբեր  
գաւանութիւնը հերթիկոսութիւն կըլլայ • բայց  
ասանկ խօսողը հերթիկոս կոչուելէն աւելի՝  
յիմար եւ խնդր կոչուելու արժանի է :

ԳԼՈՒԽ Զ.

Եկեղեցւոյ հաւատքը ո՛ր տեղաց կը հասկըցուի :

Վրոյս պատմական մասը լըմընցունելէն  
ետքը՝ եւ քննողական մասին սկսելէն առաջ՝  
իբրեւ ըսելիքնեքնուս նախապատաստութիւն  
խօսելու բաներ ունիք, որոնք թէ կիճական  
դաբերութեանց զիրքը եւ թէ մեր իրաւախօսու-  
թիւնը հասկընալու համար քաւական մեծ կա-  
րեւորութիւն ունին • եւ ասոնց մէկն է այն  
քննել թէ եկեղեցւոյ մը հաւատքը որկէց կըր-  
նանք սորիկ :

Նկեղեցի ըսելը, ( ուրիշ մասնաւոր նշա-  
նակութիւնը մեր նպատակէն դուրս ըլլալուն  
համար մեկզի ձգելով, ) հաւատացելոց միու-  
թիւն ըսել է • որոց ամէնք մի եւ նոյն հաւատ-  
քը կդաւանին : Եւ ի՞նչ է այն հաւատքը : Ար  
բանին վրայ որ ամէնքը կը միախանին, եւ հա-  
ւատոյ հիմնադիր Յիսուսի Քրիստոսի եւ սուրբ  
առաքելոյ ատենէն մինչեւ հիմայ անընդհա-

կը շարունակէ այն է : Եւ ասկէց կը ծագէ  
վերջոյրեալ խնդրոյն լուծումը :

Ար ազգին կամ ընդհանուր եկեղեցին բաղ-  
կացընող մասնաւոր եկեղեցւոյ մը հաւատքը քն-  
նութեան պիտի առնուի նէ անոր վարդապետա-  
կան՝ եւ մասնաւոր եկեղեցական պաշտամանց  
հին դրբերը նայելու է • եւ ետքի եւ նոր Ժա-  
մանակի մատենագիրներուն ըսածն անոնցմէ ա-  
ւելի արժանահաւատ՝ եւ նոյն եկեղեցւոյն  
գաւանութեանը թարգման սեպելու չէ :

Նկեղեցին յաշորութիւն մ' է • որուն օ-  
րինաւորութիւնը գտնելու համար միշտ նա-  
խորդը կը բընտրուի մինչեւ առաջին հիմնադ-  
րին Յիսուսի Քրիստոսի հասնի՝ որ իրեն նախորդ  
չկըրնար ունենալ : Ընշուշտ այն հին մատե-  
նագրաց քարոզած հաւատքը ընդհանուր քրիս-  
տոնէից հաւատոյն հետ նոյն պիտի գըտնուի •  
ապա թէ ոչ՝ այն իբրեւ հին գտնել կարծա-  
ծըդ պէտք եղած հնութիւնը ունեցած չըլլար •  
ուստի անկէց ալ հինը գըտնել պէտք կըլլայ •  
Եւ թէ որ այն գտածդ նոյն ազգին մէջ քրիս-  
տոնէութիւնն առաջին անգամ մտցընող Վու-  
սաւորիչն է նէ որովհետեւ առ այժմ այնպէս  
պիտի ենթադրիմք որ այն քարոզած հաւատքն  
իր խելքին ծնունդը չէր, ուրիշներէ սորված  
էր, հարկ կըլլայ հետազօտել թէ այն մար-  
գը ո՛ր ազգին եւ որ եկեղեցւոյ մէջ կրօնական  
վարժութիւն աւեր է • եւ անոր նախորդնե-  
րն այն տեղաց բընտրուելով թէ որ անընդ-

Հաս յաջորդութեամբ մինչև տեսան մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ առաքելոց ժամանակը հասնինք այն եկեղեցին առաքելական ընդհանուր եկեղեցւոյ բաղկացուցիչ մասանց մէկն է . Բայց թէ որ այնպէս նախորդէ նախորդ եւ վարպետե վարպետ երթալով այն հաւատքին իրբեւ առաջին ուսուցիչ մէկ մարդ մը գտնես, զոր օրինակ Ըրիսոը կամ Սարգիսը, եւ անկէջ անդին անցնելու ճամբաները գոց գտնես, կամ մինչև առաքելոց ժամանակը հասնելով՝ այն վարդապետութիւնն ընողը առաքելական դասէն դուրս մէկը գտնես, զոր օրինակ Սիմոն մոգը կամ Հիմենոսը եւ Փիղեդոսը, կը հասկընաս որ անոր դաւանածը եկեղեցւոյ հաւատքը չէ . որ առաքելական պիտի ըլլայ չէ թէ միայն ժամանակի յաջորդութեամբ, այլ ուսմամբ ալ . եւ այն դաւանութիւնն ունեցող անձանց միութիւնն ու գումարումը՝ ընդհանրական եկեղեցւոյ մասն չբաղկացնեն : Թէ որ յաջորդութիւնը մինչև առաքելոց ժամանակը հասած գտնուեցաւ, եւ նոր ժամանակի մատենադիրներուն մէջէն ալ՝ անոր դաւանութեանը համաձայն գաար նէ՛ կըրնաս ըսել, եկեղեցական ծիսից եւ արարողութեանց կարգերու թեանը չնայելով, թէ այն ազգն ուղղափառ է . Իւ անոր ուղղափառութեանը ընտել երբէք աղա չբերեր ուրիշ մատենագիրներուն հակառակ խօսքը . միայն անիկայ կը ցուցընէ որ այն հակառակաբոս մատենագիրները որքան շատ ալ

ըլլաս, թէ եւ նոյն եկեղեցւոյ մէջ գերագոյն պաշտօն եւ աստիճան ունեցած ըլլան, եկեղեցւոյ վարդապետութենէն խտորած են : Իւ ասոր մեր ազգային եկեղեցական պատմութենէն օրինակ կըրնամք ցուցընել թոնդրակեցւոց աղանդը, որ մանիքեցիներուն, այսինքն՝ երկու Լսաուած կայ ըսող հերետիկոսներուն կը հետեւէր : Լսյա աղանդոյս մէջ բաւական բազմութիւն կար . եւ ոչ միայն հարուստ եւ օգնուական մարդիկ . ոչ միայն իշխանաւորներ, այլ եւ եպիսկոպոս մ'ալ կար, Լորբայ Յակոբոս անուն եպիսկոպոսը . եւ այս աղանդոյս հայոց ազգին մէջ զօրանալը եւ տարածելը այն ժամանակն եղաւ՝ երբ յունաց հետ կրօնական վէճերը ստասկացած էին . Փրկչին տասներորդ դարուն մէջ . բայց ոչ մէկ մատենագիր մը՝ եւ ոչ իսկ յոյները որ թշնամական ոգւով լցեալ կուզէին որ հայերը հերետիկոսական մոլորութեանց մէջ ինկած ցուցընեն, Լայաւասանեայց եկեղեցին մանիքեցւոց աղանդոյն մէջ ինկու չըսին . վասն զի նոյն աղանդոյն մէջ ինկողները մատենաւոր մարդիկ էին, որ եկեղեցւոյ դաւանութիւնը պարունակող Լսաուածային պաշտամանց գրքերէն որ հայոց եկեղեցեաց մէջ գործ կածուէր՝ կէտ մը անգամ չկըրցան փոխել :

Կըրնայ ըլլալ որ տարբերութիւն մը գրանուի, զլիսաւորապէս նոյն ընդհանուր եկեղեցւոյ անդամ եղող օտար ազգաց՝ եւ հայոց եկեղեցւոյն դաւանութեանը մէջ, բայց այն

ասարմբութիւնն ալ բառի մը կամ քերականա-  
 կան գրուցուածքի մը վրայ կայանայ, որ ամէն  
 ազգ իր լեզուին յատուկ եւ սեպհական ոճո-  
 վը բացատրելով՝ ուրիշ ազգաց լեզուովը բա-  
 ցատրածէն տարբեր երևի. եւ այս է զլսոյս  
 սկիզբը իրբեւ պատրաստութիւն խօսելիք ցու-  
 ցուցածնուս մէկ ուրիշ կէտը: Այս դէպքիս  
 մէջ՝ ասարմբեր կրեցած դաւանութիւնն ունե-  
 ցող ազգին ընդարձակ բացատրութեամբ գըր-  
 ուած վարդապետական գրքերէն հետազո-  
 տելու է այն դաւանութեան իմաստը, եւ այն  
 նայելու չէ որ այն ազգը այսպիսի ասարմբու-  
 թիւնը հիմն թանկելով՝ ուրիշ կերպ բացատրող-  
 ները եւ իրեն չհամաձայնողներն օտարահաւատ  
 եւ հերետիկոս կանուանէ. վասն զի իրարու միտք  
 չհասկընալով՝ եւ դաւանութիւննին մի եւ նոյնն  
 ըլլալով՝ երկու այլալեզու ազգաց իրար հե-  
 րեախկոս անուանելը չըլլուած բան չէ. եւ  
 եկեղեցական պատմութիւնը ասոր օրինակներ  
 ալ կը ցուցընէ:

Չորրորդ դարուն մէջ՝ յունարէն էքսուրալի-  
 բառին վրայ առաջ յունաց իրարու մէջ՝ եւ ետ-  
 քը յունաց եւ լատինացուոց մէջ բաւական ծա-  
 նրը վէճ ելաւ. մինչեւ անգամ երկու վիճոյ  
 կողմերը իրարու հերետիկոս կը կոչէին: Այս  
 յունական բառս՝ երկու բառէ բաղկացած է էքս-  
 տալը — եւ արալիս, որ արիճի բայէն ելլելով՝  
 կեցոան կամ կենալ ըսել է. ուստի լատիներէն  
 ստալ — նշտի — եւ արանցիս — կենալ աս բառե-

րէն բարդեալ ստալարալիս բառն իրբեւ ասոր թարգ-  
 մանութիւն գործածեցին. եւ հայերէն լեզուի  
 մէջ թէպէտ յունական բառն ըստ փիլիսոփայա-  
 թեան իմաստից հասկըցընելու համար քոչացութիւն  
 բառը կար, սակայն անմը աստուածաբանական  
 իմաստիցը համար այս բառը քաւական չստեղ-  
 լով՝ էնի — տալը — եւ կոչութիւն — կենալ — բա-  
 ռերէն բարդեալ եկեղեցալիս նոր բառը հնա-  
 րեցին, որ յունականին լոկ նիւթական հետե-  
 ւողութիւն մ'էր: Այս բառս Ս. Երրորդութեան  
 խորհուրդը բացատրելու համար գործածուեցաւ.  
 եւ վէճը՝ նոյն գործածութեան պատճառովն  
 եղաւ: Այսն զի ոմանք էքսուրալիս ըսելով անչ կը  
 հասկընային. եւ կըսէին որ 'ի Ս. Երրորդութեան  
 երեք էքսուրալիս կայ: Միւսները այս բառով էո-  
 թիւն եւ քոչութիւն հասկընալով՝ յարրորդութեան  
 մէկ էքսուրալիս կը դաւանէին, Երկու կողման  
 ըսածն ալ ճշմարիտ եւ ուղղափառական էր. բայց  
 երկու կողմն ալ՝ ինքը նոյն բառին ինչ նշանա-  
 կութիւն կուտար նէ հակառակորդին բերնէն լը-  
 տածն ալ նոյն նշանակութեամբ կը հասկընար.  
 ուստի այն որ անչ կը հասկընար՝ 'ի Ս. Երրոր-  
 դութեան մէկ էքսուրալիս կայ ըսողին համար կար-  
 ծիր կընէր թէ անձանց զանազանութիւնը կու-  
 բանայ Կաթէլաղանդապետին պէս. ուստի անի-  
 կայ սարելեան կանուանէր: Նոյն բառն էոթիւն  
 եւ քոչութիւն ըսել հասկըցողները 'ի Ս. Երրոր-  
 դութեան երեք էքսուրալիս կայ ըսողներուն խօս-  
 քէն կը հետեւցընէին որ էութեամբ եւ կոչո՛

Թեամբ իրարմէ զանազանեալ երեք հաս զաս զաս աստուածներ կան ըսել կուզեն . ուստի Յովհաննէս Աբուսնաճիոս անուն ասորի փիլիսոսփային հնարած եռաստուածեան աղանդոյն հետեւող կը կարծէին : Ասոր պէս արիշ լաներ ալ կան , որ մէկ բառի մը գործածութեանը վերայ հիմնելով եւ անիկայ գործածողին միաբը չհետազօտելով եւ չհասկընալով՝ հերեւիկոսի անուամբ կը զրպարտեն : Քրիստոս մէջ այսպիսի ուրիշ օրինակ ցուցուցած էմք եւ քանի որ առաջ երթամք նէ կը ցուցունեմք :

Ինչ որ հետազօտելով մտաց տարածայնութիւն ալ անանուի նէ՝ նոյն հետայն վճուել պէտք չէ թէ այն տարածայնութիւնը հերեւիկոսութիւն է . այլ երկու բան կայ ընելու այսպիսի վճիռ մը տալէն առաջ : Պատի այն քննել պէտք է թէ այն բառին կամ զրուցուածքին ընդհանուր եկեղեցւոյ դաւանութենէն տարբեր իմաստ տուող մարդը խօսած նիւթոյն հըմուտ է արդեօք , եւ հանգարտ ոգւով եւ ստանց կրից կը խօսի : Ալ երկրորդ , եւ առաւելագէս . այն ազգը՝ որուն այնպէս ասորեք խօսող մարդն անգամ գանձած է , ժողով մը ըրած եւ վճիռ մը տուած է՝ ոյն տարածայն վարդապետութեան չհամաձայնող նախկին հայերը սխալած սեպելու , եւ եկեղեցական պաշտամանց դիւբը փոխելու եւ վարդապետական՝ եւ այն բացատրութեանը հակառակ գրքերը մոլորեալ սեպելու : Քանի որ այլ երկրորդս եղած չըլ-

լայ՝ այն տարածայն բացատրութիւն տուող մարդը եւ անոր հետեւողները որան բազմութիւ ըլլան ալ նէ բովանդակ ազգին ներկայացուցիչը սեպելով՝ այն ազգը ըստ որում ընդհանուր եկեղեցւոյ մասն՝ մոլորեալ սեպել չըլլար . ապա թէ ոչ , ինչ իրաւամբ որ մասնաւոր մարդիկ ազգի ներկայացուցիչ սեպելով՝ այն ազգը մոլորեալ սեպուի նէ , նոյն իրաւամբ՝ ընդհանուր եկեղեցին բաղկացընող այլ եւ այլ ազգաց վրայ մոլորութիւններ ձգելով եւ շատցընելով այսպիսի դուրսեմքը՝ ընդհանուր եւ կեղեցին մոլորեալ կըրնայ սեպուիլ . այս երկու բան մէջ տարբերութիւն մը չեմք նշմարեր . սակայն այս վերջինս նոյն իսկ բողոքականաց ըսածն է . որ ասով՝ զիրենք եկեղեցւոյ հնազանդելու եւ հետեւելու պարտականութենէն ազատ ըրած են : Աւելի ողջամիտ՝ եւ արգարութեան համաձայն է ըսելը թէ այն ծուր բացատրութիւն տուողը եւ անոր հետեւողները մոլորեալ են . եւ իրենց եկեղեցւոյն վարդապետութեանն անհամաձայն կգըտուին . եւ ասանկները կտթուղիկոս անգամ ըլլան նէ ասոնց ըսածը բոլոր ազգին եկեղեցւոյն վրայ չըկըրնար ձգուիլ . ինչպէս որ չորրորդ գարուն մէջ Մակեդոնի՝ եւ հիւզերորդ գարուն մէջ Պետտոի մոլորութիւնները յունական ուղղափառ եկեղեցւոյն վրայ չձգուեցան . թէ եւ ասոնք երկուքն ալ յունական եկեղեցւոյ գըտուին :



Եւ միա զիր որ չըսի թէ այն տարածայն վարդապետութիւնը ժողովով հաստատեն . այլ՝ թէ անոր անհամաձայն՝ յայց առաջուց ՚ի վեր ազդին մէջ ընդունուած եկեղեցական եւ վարդապետական դրբերը ժողովական վճռով փոխեն կամ հերքեն . Սուրբ վարդապետութիւն մը կը ընայ ժողովքէ մը առժամանակեայ կերպով հաստատուիլ՝ հզօր ազդեցութեան մը տակ ի յնալով , կամ ժողովականներուն մէջ այն նիւթոյն հմուտ մարդիկ չգըտնուելով կամ սակաւաթիւ ըլլալով . կը ընան ուրիշ պատճառներ ալ ըլլալ . եւ իրօք ալ այսպէս բաներ եղած կան . Աւստի այսպիսի վճիռները՝ ազգային եկեղեցւոյ դաւանութեանը՝ կաթուղիկէ եկեղեցւոյ դաւանութեանէն տարբեր ըլլալու նշան չեն . Այս պարագայիս՝ որ այսպէս բաներու դատողութեան մէջ մեծ կարեւորութիւն ունի աղէկ մը մտադիր չէ եղած մեր վերապատուելի հեղինակը . որ յոռոպարանութեան մէջ ( եր . ԵԼ . ) կըսէ թէ էջմիածնական եկեղեցին այս օրոքան օրս Հոռովմէն հեռացած է . Բայց հեռաց դո՛ւ եկեղեցին չէ . վասն զի եկեղեցին ո՛չ հաւատոյ հանդանակին , ո՛չ աղօթից եւ ո՛չ արարողութեանց մէջ նոր փոփոխութիւնն ընդունած չէ . հիւերէն բան մը փոխած եւ մերժած չէ . ի՞նչ որ հեռացող կան , որքան բարձր աստիճան եւ որքան բազմաթիւ մարդիկ ըլլան , եկեղեցի չըլլալէն զատ իրեց եկեղեցիէն հեռացած կըլլան ուղղակի , եւ անով կը հեռանան յուշակոմէն ալ Հոռովմէն

կանէն ալ՝ Ըսողիէն ալ՝ Խըբաթիէն ալ . ու այլն : Այսու ամենայնիւ ուր դանելու է այս օրոքան օրս աւելի հեռացող անձինք , ուր ինքը իր ըսածին հակառակ հաւատարեաց նկատմամբ աւելի մօտութիւն մը նշմարած է : Իր ըսածըն օրինակեմք . « Հայաստանեայց Էջմիածնական » եկեղեցին ատենօք Քրիստոսութիւն , Քրիստոսութիւն , Քրիստոսութիւն Վրիտանոսի ըսած է . կաթուղիկէ եկեղեցին Երէն-բնութիւն , Երէն-կամբ , երէն-դործողութիւն կուզէ : Հայաստանեայց Էջմիածնական եկեղեցին ատենօք կախորժէր , եւ դեռ մէկ մասը կախորժի ըսելու թէ Հոռովմէն սուրբ Քիլիսիոս ( այսինքն ՚ի Հօրէ ) կելլէ , կաթուղիկէ եկեղեցին կուզէ՝ որ ըստի . Հոռովմէն սուրբ Երէն-մէն ալ ( այսինքն ՚ի Հօրէ ) եւ յԱրզուոյ ) կելլէ : Հայաստանեայց եկեղեցին աւելի կախորժէր Քիլիսիոսական , Քիլիսիոսական , ( այսինքն՝ հոգւոյ ու մարմնոյ միանգամայն ) սորվեցունել , կաթուղիկէ եւ եկեղեցին Երէն-դատաստան Երէն-հատուցում ( նախ՝ հոգւոյ անանձինն , ետքը՝ հոգւոյ ու մարմնոց միանգամայն ) կը վարդապետէ . ( եր . 98 ) : Ի՞նչպէս միաբանեմք յառաջաբանութեան մէջի այսօրոքան օրս բանն ու այս անդամ կրկին կր ին՝ զրուցուած արեւոյ բառը , ի՞նչ որ արեւոյ աստիկ էր նէ՛ այսօրոքան օրս չէ՛ . թէ որ այսօրոքան օրս այդպէս է նէ՛ ատենօք չէր : Ինքն վերապատուելի հեղինակն երկու ըսածն ալ վկայութիւններով կը ընայ հաստատուել , զի-

տեմք . վասն զի մի եւ նոյն բանն ըսող մար-  
դիկ արհեստ ալ կգանուէին՝ այսօրոտն օրս ալ .  
բայց ասոնց եւ ոչ մէկը ոչ եկեղեցի կը կազ-  
մէր՝ եւ ոչ եկեղեցւոյ ներկայացուցիչ էր :  
Ներինակին հակասութիւնն անոր վրայ է՝ որ  
Նայաստանեայց Աջմիածնական անուանած ե-  
կեղեցին իբրեւ մէկ անհաս մը բըռնելով  
նոյն մէկ հատին վրայ կը ձգէ այսպիսի բանե-  
րը : Մասնաւոր մարդոց կարծիքը եւ մոլորու-  
թիւնը ասեն ասեն զօրանալուն օրինակները  
եկեղեցական պատմութեան մէջ չտեսնուած բա-  
նեք չեն , բայց ասոնցմով՝ այն զօրաւոր մար-  
դոց մոլորութիւն քարոզած եկեղեցին անով  
մոլորեալ չըլլար :

Երբ Աւտիքէսի կուսակիցները զօրանալով  
Աֆեսոսի մէջ՝ եւ արիոսականները մեծին Աոս-  
տանդիանոսի անարժան յաջորդ Աոստանդ կայ-  
սեր օրը Տիւրոս եւ Անտիոք եւ Սիրմիա եւ ու-  
րիշ տեղեր ժողովներ բրին , եւ առաջինք Աւտի-  
քէսը՝ եւ ետքիններն Արիոսը ուղղափառ հրա-  
տարակիցին նէ՝ ս՛վ կըրցաւ եւ մինչեւ հիմայ ո՛վ  
կըրնայ ըսել թէ յունաց կամ արեւելեան ե-  
կեղեցին մոլորեցաւ , եւ եւտիքական կամ արի-  
ոսական եղաւ : Ալ թէ որ ճշմարիտ են թագրենք՝  
թէ Ալեքսիոս հայրապետը , ըսել է Նոովմայ  
եկեղեցւոյ գլուխը՝ արիոսական դաւանութեան  
թղթին ստորագրած ըլլայ\* , իրաւունք մը կըր-

\* Ալեքսիոսի արիոսական դաւանութեան ստո-

նայ ըլլալ արդեօք ասկէց հետեւցընելու թէ  
Նոովմայ եկեղեցին արիոսական եղաւ : Անկիլիքան  
եկեղեցին Ներնիկոս ութերորդ թագաւորին օ-  
րովը բողոքական եւ հերետիկոս չեղաւ , թէ  
եւ թագաւորը եւ ազգին մէջ ըստ կրօնակա-  
նին ամենէն գերագոյն պատիւ ունեցող նախա-  
գահ արքեպիսկոպոսը եւ շատ եպիսկոպոսներ  
եւ քահանայներ եւ շատ աշխարհական անձինք  
նոյն ազանդն ընդունեցին . ասիկայ հերետի-  
կոսութեան մէջ իյնալու սկզբնաւորութիւն  
մ'էր . բայց թէ որ բանն այս վիճակին մէջ մնար  
նէ՝ չէր կըրնար ըսուիլ թէ անկիլիքան եկեղեցին  
իրօք մոլորութեան մէջ ինկաւ : Այլ երբ Նեն-  
րիկոսի յաջորդ Ագուարդ թագաւորն ազգային  
եկեղեցւոյն մինչեւ այն ժամանակն ընդունած  
Աստուածային պաշտամանց գիրքը բողոքական-  
ներուն մոլար վարդապետութեանը համեմատ  
փոփոխեց , հինը վերցուց եւ այն նորն ընդու-  
նել առաւ , միայն այն ատենը անկիլիքան ե-  
կեղեցին բողոքական եղաւ : Բայց ասոր մէջ ալ  
զանազանելու կէտ մը կայ : Երբեմն կըլլայ որ  
մէկ եկեղեցւոյ անդամներէն ոմանք՝ ուրիշ ազ-  
գի եւ լեզուի եկեղեցւոյ մը հետեւողութեամբ՝  
իրենց Աստուածային պաշտամանց հին գրքերը  
կը փոխեն . եւ այն փոխուածն իրենց մասնա-

րագրած ըլլալը պատճառն ծանր դժուարութիւն-  
ներու տակ ինկած ըլլալով հաւանական չէ : Բայց  
ասոր վրայ խօսելու տեղը եկեղեցական պատմութեան է :

գոր գործածութեանը համար կը հրառարակեն .  
 եւ այս փոփոխութեան ենթակայ եղած բանե-  
 րըն ալ հաւատոյ մոլորութիւն չեն պարու-  
 նակելը , այլ միայն գրուցուածքի արքերութեան  
 վրայ հիմնեալ են . ր' ինչպէս վերն ըսինք՝  
 հաւատոյ մոլորութիւն մը չկացուցաներ ինք-  
 նին , եւ այսպէս է Հոգովեական հայոց՝ Հա-  
 յատանեայց եկեղեցոյ Աստուածային պաշտա-  
 մանց մէջ ըրած փոփոխութիւնն ինչ . Ասանկ ը-  
 նողնեքք արով հետեւ ամսն են , որ ասով ազ-  
 գային եկեղեցիէն առանց կրօնական ծանր պատ-  
 ճառի մը հարուած կըլլան , եւ ըրած փոփոխու-  
 թիւննին՝ զատ մնալնուն մէկ մշտնջենաորու-  
 թիւն մը կըլլայ . ուստի այնպիսիները իրենց  
 զատուած եկեղեցեոյն նկատմամբ հեղինակ կամ  
 հեղինակող կըսուին : Յաւնականէն հայ լեզուի  
 առնուած հեղինակութեան ալ ըստ բուն նշանա-  
 կութեան հեղինակ ըսել է . բայց սովորութիւնն  
 այնպէս կը պահանջէ որ հեղինակութեան ըսելով հա-  
 յատոյ վարդապետութեան կողմէն րնգհանոր  
 եկեղեցիէն հարուած կը նշանակէ , եւ ՚ի հաստատ  
 մոլորեալ ըսել կըլլայ . հեղինակող ըսելը՝ հա-  
 յատոյ չվերաբերած բաները պատճառելով եւ  
 անոնց կարեւորութիւն տալով զատուողները  
 կընշանակէ :

Մասնաւոր մարդիկ որքան իմաստուն եւ  
 երկիւղած ըլլան , եւ կրօնական իրաց մէջ քա-  
 ջովարժ գտնուին , ժամանակ կըլլայ որ գիշ-  
 ներնեն խօսք մը կամ բառ մը կը փոխէի , որ

հերետիկոսութիւն կըբուրէ , եւ թէ որ հասուն  
 քննութեան տակ ձգուի նէ արդալալալը քիչ  
 մը դժուար կըլլայ . եւ ախիայ ալ՝ լոկ գրուց-  
 ուածքի նայելով եւ խօսողին անձնական հաս-  
 զամանքը չդիտելով անիկայ հերետիկոսէ ըսելն  
 անիրաւութիւն ըլլալուն ապացոյց մ'է : Այս  
 բաժներնու հետարքրական օրինակ մ'ունիմք  
 մեր տեսութեանց առարկայ ըրած գրքերիս ,  
 հիմնական հարցերունց գիրքը : Ասոր մէջ սա  
 խօսքը գրուած կըգտնեմք . ,, ինչ որ Արոր-  
 ,, դութեան մէջ երեք , մարդեղութեան մէջ  
 ,, մէկ է . եւ ինչ որ մարդեղութեան մէջ ե-  
 ,, րեք , Արորդութեան մէջ մէկ է : Արորդու-  
 ,, թեան մէջ երեք անձ եւ մէկ գոյացութիւն .  
 ,, մարդեղութեան մէջ մի անձ՝ եւ երեք գոյա-  
 ,, ցութիւն , այսինքն Աստուածութիւն՝ Հոգի  
 ,, եւ մարմին , : ( եր . 3 . 4 ) : Գիտնիք որ ճըշ-  
 մարիտ եւ ուղղափառական մըտքով կըրնայ մէկ-  
 նուիլ ասիկայ . բայց գրուցուածքը խըրթնու-  
 թիւն ունի . եւ պարզապէս կը հասկըցուի՝ որ  
 ամենասուրբ Արորդութեան երեք անձինքը ՚ի  
 մարդեղութեան մէկ անձն եղած են , այնպէս՝  
 որ Հոգի եւ Արդի եւ սուրբ Հոգի՝ ըստ Աս-  
 տուածութեան երեք անձն են , որ ըսա որում  
 Աստուած՝ իրարու հետ շիտթել , եւ Հայր Ար-  
 դի կամ Հոգի սուրբ , եւ Արդին կամ Հոգին  
 սուրբ Հայր են ըսել չըլլար . սակայն ըսա ո-  
 սում մարդ մտածելով՝ Հոգի եւ Արդի եւ Հո-  
 գին սուրբ մէկ են . եւ ասկէց սա՝ կը հետե-

ի՛ որ Արդին Եստուծոյ չարչարեցաւ եւ խա-  
 չեցաւ եւ մեռաւ նէ՛ Հայր եւ Հոգին սուրբ  
 ալ անոր հետ չարչարեցան եւ խաչեցան եւ մե-  
 ռան. որ է եւ տիրակալութենէն եւ սարէլա-  
 կանութենէն խաանուրդ հայրաւորը ըսուած  
 անձունի աշանդը : Աւրիշ բան է ըսելը թէ  
 յԱրորդութենէն միշտ մէկ անձը կատարեալ  
 մարդ որ եղաւ եւ Հոգի եւ մտք եւ մարմին  
 առաւ նէ՛ որ մարդկային անձը կրկացուցանեն  
 հասարակ մարդոց վրայ : յԱրդին Եստուծոյ ՚ի  
 մարդեղութեան դատ անձ չկացուցին . եւ Ար-  
 դին Եստուծոյ մարդանալով երկու անձ եղած  
 չեղաւ : Ետևից ճիշտ ուղղափառական հակադրու-  
 թեան ձեռով զարդարուած եւ գեղեցկացած զրու-  
 ցուածք մը չէ՛ ալ նէ՛ ասկէն անհնար է որ մո-  
 լորութիւն մը ելլէ : Բայց ուրիշ բան է ըսե-  
 լը, թէ է՛ն որ յԱրորդութեան երեք, ՚ի մար-  
 դեղութեան մէկ է : Մասն զի յԱրորդութե-  
 նէն ինչ է երեքը . անձինքը . սյօխնքն Հայր  
 եւ Արդի եւ Հոգի . ուրեմն ՚ի մարդեղութեան  
 մէկ եղածն ալ ասոնք ըլլալու են :

Վկատել արժան է՛ որ ութերորդ դարուն  
 վերջերը , Գոլեստնի արքեպիսկոպոս Ելիպան-  
 դոսին գեմ, որ Փռանքֆորդի ժողովքէն դատա-  
 պարաուած էր իր հերետիկոսութիւններուն հա-  
 մար, սուրբն Պաւլինոս Եքուիլէայի պատրիար-  
 քը գիրք մը յօրինեց՝ սրբալոյս Բաղաւորութեան  
 — սուրբ Ելիպոս — մակագրով . եւ կիմանամք որ  
 յիշեալ արքեպիսկոպոսը գրած էր թէ Յիսուսի

Վրիստոսի անձը երեք բանէ կը բաղկանայ .  
 որ են Բան , հոգի եւ մարմին : Եւսեական  
 Կարթեզուսիանց վերապատուելի հերդինակը ճիշտ  
 այն հերետիկոսին պէս կըսէ . « մարդեղութեան  
 ,, մէջ մի անձ եւ երեք գոյացութիւն . ( սյօխն-  
 ,, քնն Եստուածութիւն , հոգի եւ մարմին ) ,, :  
 Եւստինի է որ ասոր վարքն իմացիցի մէջ Ես-  
 տուածութեան ըսածը՝ Ելիպանդոսի բան ըսածն  
 է . ասոր գեմ սուրբն Պաւլինոս կըսէ . մարդոյս  
 վրայ մարմինն ու հոգին մէկ գոյութիւն կը-  
 բաղկացընեն . եւ այս ասանկ չըլլայ նէ՛ ՚ի Յի-  
 սուսի Վրիստոս գոյութիւններուն համբանքը մի-  
 չեւ վեցը հանելու կըլլայ . որով հետեւ ինչպէ՛ս  
 որ ամէն փիլիսոփայները կը վիճայն , մարդոյս  
 մարմինը չորս տարերքէ բաղկացած է . որ են  
 հող , ջուր , օդ , հուր : ( աս Սքլէսորի . Բազիլի  
 Կարթեզուսիան հարց . հարոյր Գ . էջ 504 . որ .  
 Միւնք ) : Կտեսնես որ հայոց սուրբ եկեղեցւոյ  
 մէջ մոլորութիւն բընտրուած ժամանակը մեր  
 իմաստուն քննիչը որ անով մայր եկեղեցւոյն բե-  
 րանը սեպուած է , դատապարտեալ հերետիկո-  
 սի մը խօսք իբրեւ ուղղափառական կընդունի ,  
 եւ իւրացընելով կը գրէ : [ Խօսքին պարզ իմաց-  
 ուածքը՝ ըստ բառից անգամ այս է . եւ ուրիշ  
 մեկնութիւն արուի նէ , մէկ խօսք մը խօսողին  
 որպիսութիւնը եւ անձնական եւ մտաւորական  
 հանգամանքին շնայելով լըսողին քաջբըշուկ  
 կերելի :

Բնածններէս կը հասկըցուի որ այս խօսքը

գրող հեղինակին հաւատոյն ուղղափառութեանը վրայ կասկած չուենիմ, մաշաւանդ որ ինչպէս որ հաստատուն եւ աներկբայելի կերպով լսած եմ եւ գիտեմ, որ երկար ժամանակ հայազգի հռովմէական հմուտ անձանց քննութեան տակը մնաց, եւ անոնց սրբագրելովը եւ հաւանութիւն տալովը տպուեցաւ: Այսու ամենայնիւ կըրնայ բըծախնդիր մարդ մը այս խօսքը մասը պրլլել: Եւ միայն խօսողը հերետիկոս անուանելը բաւական չտեսելով՝ եւ լսելով ալ որ այս գրքիս համար Հռովմայ եկեղեցւոյն թերան է ըսող կայ, բոլոր Հռովմայ եկեղեցին բամբասել, եւ այսպէս ընելով՝ գրքին հեղինակին ըրածէն չառ տարբեր բան մ'ըրած չէր ըլլար: որ քանի մի հայ մասեանագրաց ողջմտութեամբ կամ անզգոյշ պարզմտութեամբ խօսած ՚իս ձեռք առնելով՝ բոլոր հայոց եկեղեցւոյն վրայ կըձգէ: Այս ըսածովս լեցուած է բոլոր գիրքը: Բայց անոնց մէջէն մէկ հատը հոս համառօտ՝ եւ ըսածիս պատշաճեցընելով ցուցընեմ, բուն պատասխանն իր կարգին պահելով:

1858 թուին՝ հոգեւոր ժողովոյն հաւանութեամբ ՚ի պէտս գպրոցաց տպուած գրիտանէականին մէջ կանոնական սուրբ գրոց կարգէն Սիրաբայ գիրքը դուրս մնալը յիշելով՝ այնպէս կըցուցընէ որ հայոց եկեղեցին զոր ինքն Լընթընի կանուանէ, այն գիրքը իրեւ Աստուածաշունչ չընդունիր: Ասով առ առաւելն, թէ որ մոռցուած է ըսել չէր ուզեր նէ, քրիս-

տանէականին հեղինակին եւ անոր հաւանութիւն տուողներուն համար կըրնար ըսել միայն՝ թէ Սիրաբայ գիրքն իրեւ սուրբ գիրք չեն ճանչնար: Այս եւ գրքին հեղինակին վերոյիշեալ խօսքին մէջ օս տարբերութիւնը կայ՝ որ յիշեալ քրիստոնէականին մէջ Սիրաբայ գիրքը չտեսնելը մոռացմամբ ալ կըրնայ ըլլալ, եւ իրօք ալ այսպէս ըլլալն ապացոյցով կը հաստատեմք իր սեղը: Իսկ վերապատուելի հեղինակին՝ ՚ի նչ որ Արորդութեան մէջ երեք՝ մարգեղուսութեան մէջ մէկ, Ե ըսելը մոռացմամբ ըսուած չկըրնար ըլլալ:

Իբրեւ ետքի ըսելիքներուս պատրաստութիւն երրորդ ըսելիքս ալ այս է, որ մէկ ազգի կամ մասնաւոր եկեղեցւոյ մը ուղղափառ կամ հերետիկոս ըլլալը՝ հերետիկոսաց դէմ դուժարեալ ժողովքներէն մէկը կամ մէկ քանին ընդունելէն կամ չընդունելէն կախում չունի: Արդնայ ըլլալ որ ազգի մը մէջ ուղղափառական ժողովք մը վրայօք սուտ համաւաներ տարածուած ըլլան՝ որպէս թէ այն ժողովը հերետիկոսութիւն մը հաստատեր է. այն հերետիկոսութեան հետեւողներն ալ նոյն ժողովոյն համարայն բանը հաստատեն. ուղղափառ մը չկըրնար այն ժողովք ընդունիլ՝ քանի որ ուղղափառական ըլլալը ըստուգած չէ: Ուրիշ պատճառներ ալ կըլլայ չընդունելու: Մեր ազգին՝ Քաղկեդոնի ժողովքը չընդունելն այս կարգէս է. եւ որովհետեւ հիմնական պարբերութեանց վերապատուելի հեղինակ-

կըն ասոր վրայ ալ խօսած է , մենք ալ անոր պատասխանելու կարգն եկած ատենը քիչ մ'ընդարձակ կը խօսիմք :

Պատրաստութեան համար ընելիքներնուս մէկ կէտն ալ այն էր՝ որ մասնաւոր քրիստոնեայ ազգեր իրենց յատուկ եկեղեցական արարողութիւններ եւ սովորութիւններ կուենենան՝ որով ազգ ազգէ եւ եկեղեցի եկեղեցիէ կը արարեալին . ասոնք բանի տեղ դնելու չէ՛ : Այս գլուխըս բաւական երկընցաւ . այս նիւթս ալ ներկայ դրոյս նկատմամբ մասնաւոր կարեւորութիւն ունենալով՝ առանձին գլուխ մը կընեմք :

ԳԼՈՒԽ Է .

Արօնական ազգային ծէսեր :

Եկեղեցոյ միութիւնը հաւատալեաց մէկ յօդուածն ըլլալը՝ առաքելական հանդանակէն եւ նիխակն եւ Աստանդնուպօլսի եւ յատկապէս մեր սուրբ Լուսաւորչին մեզի արանդած Հաւատամբէն զիսեմք : Այս միութիւնը հաւատքի միութեան կապուած է . ուստի ո՛վ որ առաքելներուն քարոզած եւ գրաւոր կամ անգիր արանդութեամբ մեզի հասած ճշմարտութեանց կը հաւատայ՝ նոյն եկեղեցոյ անդամ է . եւ այս անդամոց համագումարումն է որ

զեկեղեցին կը կազմէ : Ասոր առանձին վկայութիւն չուզեր՝ ամէն անուամբ արան ասոր վրայ միաբանելուն համար . արտու ամենայնիւ մենք կարեւոր կըսեպեմք մէկ հստովմեական անուամբ արարելու խօսք մէջ բերել : Ֆէլլէր , իմաստասիրական հրահանգ տրիստոնեական հասարակութեան ճիշտութիւնը — դրքին մէջ ( գր . ա . համար 431 ) , կըսէ . « մէկ եպիսկոպոս մ' ալ ուզուի , դախառ եկեղեցոյ մէջ օրինաւոր եպիսկոպոս » , չճանչցուիր , թէ որ հայորդութիւն չունենայ » , եւ միացեալ չըլլայ Պետրոսի աթոռոյն հետ , « ինչպէս որ կըսէ սուրբն Էրոնիմոս . եւ այն » , չըլլայ՝ աստիճաններէն եւ նոյն խի աստիճաններէն » , անուրասած վարդապետութիւնը եւ հասարակ դասանելով : Արդոյն Պետրոսի աթոռոյն հետ հաղորդակցութիւն ունենալը երկու կերպով կիմացուի՝ թէ որ քովը բացատրութիւն չըլլայ : Մէկն է ժամանակ ժամանակ անոր նամակ խորհելով եւ անկէջ նամակ ընդունելով . եւ միւսը՝ հաւատոյ դաւանութեան անոր ձայնակից ըլլալով : Ֆէլլէր միայն այս երկրորդս նշանակած է հոս . ըսել է որ ընդհանրապէս կարեւորութիւնն ասոր վրայ կը ճանաչէ : Եւ յիրաւի վասն զի առաջին տեսակ հաղորդակցութիւնը կամ թղթակցութիւնը խախտող շատ պատճառներ կըրնան ըլլալ . եւ մէկ մը հաւատոյ միութիւնը հասկըցուելէն ետքը յաճախ թղթակցելու պէտք միայն անոնք կուենենան՝ որ ըստ եկեղեցական վարչութեան ալ ստովմայ եկե-

ղեցւոյ տակն են . եւ այն ժամանակը Հոռով-  
մայ հայրապետը չէ թէ իբրեւ գերագոյն գը-  
լախ եկեղեցւոյ՝ ինչպէս կըսեն հոռովմէականք .  
այլ միայն իբրեւ ծայրագոյն պատրիարք եւ կա-  
թողիկոս լատին եկեղեցւոյ կը մտածուի . եւ  
ի մասին եկեղեցական կառավարութեան անոր  
տակը չեղողները անոր հետ յաճախ թղթակ-  
ցելու եւ անոր խորհուրդ հարցընելու պար-  
տականութիւն չունին : Աւստի կը մնայ նոյն  
լատին եկեղեցւոյ հետ ՚ի հաւատոս միութիւնը .  
եւ մեր ալ ներկայ գրութեանս նպատակն այն է՝  
որ ցուցընեմք ընդդէմ հիմնական տարբերութեանց  
հեղինակին՝ թէ արդէն այս միութիւնս կայ :

Հոռովմայ համառօտ մը սա ծանուցանեմք՝ որ ե-  
կեղեցւոյ նախնի ժամանակները՝ պատրիարքական  
աթոռ մը նոր անցնող պատրիարքը, ինչպէս է-  
ին Հոռովմայ Աղէքսանդրիոյ եւ Մետոբայ եւ  
Պատանդուպօլիսի եւ Արուսազեմի հայրապետ-  
ները՝ իրենց դաւանութիւնն իրարու կը խըրկէ-  
ին, եւ իրարմէ անոր պատասխան՝ շնորհաւո-  
րութեան թուղթ կը ղուռնէին : Բայց մասնաւոր  
վիճակաց արք եպիսկոպոսները միայն իրենց վը-  
րայ անմիջական իշխանութիւն ունեցող պատրի-  
արքին կամ արք եպիսկոպոսին կը գրէին : Ասոր  
օրինակներ կան եկեղեցական պատմութեան մէջ .  
բայց հոյոց հայրապետներուն եւ կաթողիկոս-  
ներուն պատմութեանց մէջ՝ այսպիսի թղթակ-  
ցութեան սովորութիւն ալ չեմք տեսներ մի-  
շեւ խաչակրաց փոքր Հայաստան մտած ժամա-

նակը . այն տեսնուան համար ալ մտքերնիս չը-  
գար որ մէկ հայոց հայրապետ մը իր աթոռը  
նոր նստած ժամանակը իբրեւ ՚ի պարտաւորու-  
թենէ եւ առանց ուզուելու իր դաւանութիւ-  
նը Հոռովմայ կամ ուրիշ մեծ աթոռոյ հայրապետ-  
ներուն խրկէ : Բնական հարեանցի մը այսպէս  
յիշելէն ետքը դամք մեր ըսելիքներուն :

Հաւատոյ միութեան նկատմամբ ազգաց դա-  
նազանութիւն չկայ . հրեայ, հեթանոս, հուժ,  
դուժ, սկիւթայի, ամէնն ալ մէկ են ՚ի Քրիստոս՝  
կրտէ անարեալ (Պօղոս . գ . 11) . վասն զի ամէն-  
քը մէկ հաւատք խոստովանելով եւ մէկ միջո-  
րութիւն ընդունելով մէկ մարդ եղած են ըստ  
Բառուժոյ :

Հոռովմայ եկեղեցւոյ համար երբ կաթողի-  
կէ կըսեն՝ այնպէս հասկընալու չէ որ լատին  
լեզուով Աստուածային պաշտամունք կատարե-  
լով եւ բաղարջով պատարագելով եւ ուրիշ ա-  
սոնց նման բաներով կաթողիկէ է : Ասոնք ա-  
նիկայ՝ առանց կաթողիկէ եկեղեցւոյ մասն ըլլա-  
լէն զրկելու կը լինեն մասնաւոր եկեղեցի մը .  
Հոռովմէական իմաստուն մ՝ ըսած էր . Աբլլիքան  
եկեղեցին՝ որ հոռովմէականին գաւառական մէկ  
աարքերութիւնն է, կաթողիկէ եկեղեցի ան-  
ուանելը, բալորակ ձեւը չօրս կողմ եւ չօրս  
անկիւն ունի ըսելու պէս է . իր մէջը հա-  
կատութիւն կը պարունակէ : Ասոր պէս երբ Հոռով-  
մայ եկեղեցին թէ դաւանութեամբ թէ ծեսով  
ընդհանուր եկեղեցի է, եւ ասոնց մէկովն ան-

զամ անկէց զատուողն ընդհանուր եկեղեցիէն զատուած է ըսելը՝ նոյն իսկ բառերուն մէջ հաստատութիւն կ'պարունակէ. ընդհանուր բառը՝ որ բոլոր փեղերք եւ ամէն ազգիւր մէջ պիտի պարունակէ, մէկ տեղական սահմանի մէջ ամփոփելով մասնաորիցն ետքը դարձեալ ընդհանուր անուանել կ'ըլլայ: Հռովմայ եկեղեցին՝ ընդհանուր եկեղեցւոյ մէկ գլխաւոր եւ մեծագոյն մասն է, եւ ՚ի հաւատս եւ ՚ի դաւանութեան որ ազգաց համաձայն գտնուի նէ անոնց հետ մէկ տեղ աննելով բոլոր մէկ կրկազմութիւն եւ անիկայ կ'ըլլայ ընդհանուր եւ կաթուղիկէ եկեղեցի: Եւ այս մտքով հայոց եկեղեցին ալ՝ յունացն ալ՝ ուրիշ քրիստոնեայ ազգացն ալ՝ ուրոց դաւանութիւնն ասոնց համաձայն է, կըրնան ըսուիլ ամէնը մէկէն՝ ընդհանուր եկեղեցի, բառը իրեն յատուկ նշանակութեամբն աննելով. եւ դարձեալ ամէն մէկն ալ զատ զամբնդհանուր կըսուի. մէկ մասին անունը բոլորին վրայ գննելով: Եւ այս մտքովս միայն ճշմարիտ է այն խօսքը թէ՛ « արտաքոյ Հռովմայ եկեղեցւոյ ոչ գոյ փրկութիւն » . եւ նոյն մտքով դարձեալ ճշմարիտ կ'ըլլայ ըսելը. « արտաքոյ հայոց կամ յունաց եկեղեցւոյ ոչ գոյ փրկութիւն » . վասն զի փրկութիւնը հաւատով պիտի ըլլայ. եւ հաւատքը մէկ ըլլալով՝ այս զըրուցուածքը ըսել կ'ըլլայ. « արտաքոյ եկեղեցւոյ ոչ գոյ փրկութիւն » . որ անուրանալի ճշմարտութիւն մ'է: Եւ որովհետեւ Հռովմայ եւ

Հայոց եւ յունաց եկեղեցիները զատաբար յիշելը՝ այլ եւ այլ ծէսեր եւ արարողութիւններ ունենալէն է, եւ ասոնց մէջ միակերպութիւն չըբընարուելի իբրեւ փրկութեան միջոց, ուստի « արտաքոյ Հռովմայ եկեղեցւոյ ոչ գոյ փրկութիւն », ըսելը՝ այսպէս զատական նշանակութեամբ աննելով, սուտ խօսք է. բաղաբը հացով չպատարագողը եւ ուրիշ ծէսերու կողմէն Հռովմայ չհամաձայնողը փրկութեան չհասնիր ըսել կ'ըլլայ. զոր երբէք Հռովմ ըսած չունիլ լատին աստուածաբանները հաւատոյ միութեան հետ ծիսից զանազանութիւնը՝ Յովսէփ գեղեցիկին ծաղկեայ պատմութեանին կ'ընմանցընեն. որուն վրայի գոյներուն եւ ծաղիկներուն զանազանութիւնը պատմութեանին մէկ հատիկ ըլլալուն վնաս չունի: (Սուրբն Բեռնարդոս. Ժողովարէր, էր. 524. գոյ. Սապիյեթն. Կոթմար. Կարմ. էլիւ. Կոր. Եր. 213. գոյ. Փրիւշ, 1858): Եւ որքոք մենք ալ մեր ծէսերուն հռովմեականէն տարբեր ըլլալը պատճառ բռննելով մեզ իբրեւ ՚ի կիսական դասանութեան հաւատոյ բամբասողները դժոխոյ դատապարտողները չեմք կըրնար Յովսէփայ եղբայրներուն նմանցընել, որ անոր պատմութեանն իրենց հագածին նման չըլլալուն համար անիկայ գուրը նետեցին:

Եւ որովհետեւ ինչպէս որ ըսինք, ընդհանուր միութիւնը միոյն հաւատոյ դաւանութեան վրայ է, եւ ոչ իւրաբանչիւր ազգաց յատ



տուկ եղան ձեւերուն վրայ, ազգային եկեղեցիները սկզբնապիսիք եւ ոչ ապօրինաւոր կընէ: Եւկերուն ըստ Ժամանակին եւ ըստ ազգաց փոփոխելի ըլլալը եւ խօք ալ ասնն ասնն փոխուելին՝ եկեղեցական պատմութեանց եւ մատենագրութեանց մեր առաջը դրած անհերքելի ճշմարտութիւններուն մէկն է: Էին ասեւը՝ նոր մկրտեալներուն թերունք մեզր եւ կարագ կրքէին: Հիմա այնպէս ընող եկեղեցի եւ ազգ չկայ: Էպիսկոպոստոսնայր ամեն օր հաղորդութիւն կառնէին. եւ որովհետեւ երկու տեսակէն ալ կը հաղորդուէին՝ եւ հաղորդողները ձով ըլլալու էին, առտուանց կանստ մէկին թերնէն զինչոյ հոտ գալը անոր քրիստոնեայ եւ սուրբ խորհրդոյն հաղորդեալ ըլլալուն նշան ընուելով՝ հեթանոսաց ձեռքն ինչալու վաճանդէն ազատելու համար միայն մէկ տեսակէն ալ սահմանուեցաւ: Եւս բանս եւրքերը մաշխեցիք, որ իրենց աղանդոյն սորվեցուցածին պէս՝ զինին չար աստուծոյ ստեղծածը սեպեալով չէին դրոճածեր, ուղղափառաց հետ խառնուելու դիւրին միջոց մը դասն, որով ուղղափառ պարզամիտներն ալ կրնային իրենց մոլորութեան որոգայթը ձգել: Աստի եկեղեցոյ հովիւք դարձեալ երկու տեսակէն տալու նախաձեռն սովորութիւնը նորոգեցին. մինչեւ ելան հեթանոսներ՝ որ Տեառն մերոյ՝ սուրբ խորհրդոյն մէջ խօք ներկայ գտնուած մարմնոյն կենդանի ըլլալն ու բանալուն ապացոյց եկեղեցոյ սովորու-

թիւնը կրքընէին, որ այս սուրբ խորհրդոյն երկու տեսակէն ալ զատ զատ կուտար: Այդպիսով զաւանտութիւնը անարատ պահելու համար Էպիսկոպոստոսնայր եկեղեցին ասնն մը գործածած սովորութիւնը դարձեալ ձեռք առաւ. սուրբ հաղորդութիւնը մէկ տեսակէն տալու սկսաւ: Եւ այց նոր որ վերջոյն ժողովոյն մոլորութիւնը չկար այն տեղերուն ալ պատուէր չըրաւ որ հարկաւ մէկ տեսակէն հաղորդեն: Եւսնք մի եւ նոյն եկեղեցոյ մէջ եղած փոփոխութիւններէն անուած երկու օրինակներն են:

Եւսնիսնոյն իսկ Էպիսկոպոստոսնայր զգործածածն է: Բրիտանեայններէն միշտ հաւատոյ միութիւն կպահար զէ. արեւելեան քրիստոնէից հետ յարաբերութիւն ունեցող քարոզիչներուն ալ յատուկ պատուէր ըրած է որ ձեւերուն չըրալին: Եւսնք ասնք թալ գիտցող իմաստունի հետ ըլլալով ապացոյց չուզեր ալ նէ: Ընթերցողաց համար քանի մի հոտ դնեմք:

Արեւելեան ժողովոյն հայրապետը 1669  
 ապրիլի 2 թուականով ստիճիւր տուած է. «Է-  
 11 հաստատելի հայերն ի խաղաղութեան պահելու  
 11 համար եւ ուրիշ ծանր պատճառներու համար  
 11 որոքականապի ժողովոյն խորհրդակցութեամբ  
 11 վճռուեցաւ որ աշխարհական անձանց հրաման  
 11 չկայ լափն ձեռն անցնելու, ինչ պատճառով  
 11 որ ըլլայ. այլ ասոր համար սուրբ աթոռին  
 11 յատուկ հրաման անելու է: Եւսնը կղերին  
 11 ալ արգիլեալ է. թէ կրօնաւոր ըլլան թէ ոչ»

11 Աւստի ամէն արքեպիսկոպոսներու եւ եպիսկո-  
 11 պոսներու եւ հռովմէական վարդապետանոցայ  
 11 պաշտօնատէրերուն յատկապէս արգելեալ է  
 11 ծիսախոթութեան հրաման տալու իշխանու-  
 11 թիւնք : Ատին արքեպիսկոպոս եւ եպիսկո-  
 11 պոսներու եւ եկեղեցական վերին եւ ստորին  
 11 աստիճանաւորներու ալ հրաման չկայ հայերը  
 11 լատին ծէսի ընդունելու , թէ եւ հայ եպիս-  
 11 կոպոսներն այնպէս հրամայեն . եւ հակառակն  
 11 ընելու մէկը յանդգնինէ՛ ըրածը ոչինչ  
 11 սեպուի :

Աւրբանուս Բ . հայրապետն ալ 1624 յու-  
 լիսի 7 թուականով ասոր յար եւ նման վճիռ  
 մը տուած էր Առեթեններուն համար . որ յու-  
 նաց ծէսերը պահող հռովմէական ուսուցիչ :

Ըտոնցմէ աւելի բացայայտ խօսքերով ( թէ  
 որ աւելի բացայայտը կըրնայ ըլլալնէ ) , վճիռ  
 տուած է բորթականաւորի ժողովը , եւ հաստա-  
 տած է կղէմէս ԺԼ . 1762 յունվարի 30 թը-  
 ուականով : Ա՛ ճւոյն պատճէնն է այս . « Ըտե-  
 11 նադպիր . . . Գ . կարողոս ( ) դոստինոս Գրապ-  
 11 րօնիէն մեկի հաղորդուած տեղեկութեան հա-  
 11 մեմա՛ սուրբ ժողովս հրամայեց որ բոլոր ա-  
 11 ուքեւական քարոզչութեանց նախագահներուն  
 11 ամենուն ընդհանուր եւ ամէն մէկին առանձին  
 11 պատուէր խրկուի , որ ինչ եւ իցէ պատճառով  
 11 չհամարձակին արեւելեան ազգի անհասի մը  
 11 տնօրինում շնորհելու , որով կարող ըլլայ իր  
 11 ազգային յատուկ ծէսերէն կարգադրուած եւ

11 սուրբ աթոռէն հաւնուած պահքը կամ աղօթք-  
 11 ները նոյնութեամբ չպահելու : Կարձեալ նոյն  
 11 սուրբ ժողովը վճռեց՝ որ արեւելեան ուղղա-  
 11 փառները իրենց յատուկ ծէսերն ու սովորու-  
 11 թիւնները չձգեն . որոց՝ ինչպէս վերն ըսուե-  
 11 ցաւ , սուրբ աթոռն հաւանութիւն տուած  
 11 է :

Այս նիւթոյս վրայ աւելի բազմաթիւ վը-  
 ճիռներ ունեցողը՝ Բենեդիկտոս ԺԴ . հայրա-  
 պետն է : Յուսական եկեղեցւոյ ծէսերովը վար-  
 ուող Մէսինայի հռովմէական յոյներուն հա-  
 մար կըսէ թէ ոչ արք եպիսկոպոսն եւ ոչ պատ-  
 րիարք՝ անոնց ծէսերուն հակառակ բան մ՛ ընե-  
 լու իշխանութիւն չունին . ասորուց հռովմէ-  
 ական պատրիարքին Լնտիոքայ կըզրէ . « պէտք  
 11 է յունական եկեղեցւոյ հին հրահանգներն  
 11 ամբողջ պահել . եւ քահանաներուն պատուի-  
 11 րել՝ որ անոնցմէ չխտորին : » 1755 թուին  
 հանած եւ արեւելք գտնուող միսիոնարներուն  
 ուղղած շրջաբերակարին մէջ կըսէ . « թէ որ  
 11 յոյն մը կամ արեւելեան ուրիշ ազգէ մէկը՝  
 11 որ հռովմէական չէ , կաթոլիկիկ եկեղեցւոյ  
 11 հետ միանալ ուզէ նէ՛ քարոզչին երբէք նե-  
 11 րեալ չէ որ զանիկայ իր ազգային ծէսը թող-  
 11 լոյ ստիպէ : » Այս խօսքը յատկապէս անոնց  
 համար է , որ ընդհանուր եկեղեցիէն տարբեր  
 դաւանութիւնով մը , այսինքն հերետիկոսու-  
 թեամբ գատուած են . ապա թէ ոչ՝ թէ որ մի-  
 նակ եկեղեցական արարողութեամբ գատուած

են նէ ի՞ չ հաւի կայ միանալու երբ ծէսը եւ  
 արարողութիւնը փոխելու հրաման չարուիր . կամ  
 ի՞նչպէս հնար կըլլայ իր եկեղեցական արարու-  
 ղութիւնը պահել , եւ միանգամայն լոկ արա-  
 րողութեամբ ընդհանուր եկեղեցւոյ հետ միա-  
 նալ՝ որ արարողութեան կողմանէ ընդհանրու-  
 թիւն ալ չունենար , որովհետեւ մասնաւոր ըլ-  
 լալն արարողութեանց տարբերութիւնէն կը ծա-  
 գի ինչպէս ըսինք : Յշններն որովհետեւ առաջ  
 Հռովմայեցւոց հետ միացած էին եւ փոտ պատ-  
 րիարքին օրովը սկսած լաժանուժը Միքայէլ  
 Վիլուլարիոս պատրիարքին օրը լրացաւ , անոնց-  
 մէ կպահանջուէր որ իրենց վրայ Հռովմայ հայ-  
 րապետին իրաւասութիւն ունենալը ձանձնային :  
 Ետք կարօտ չէին հայերն իրենց եկեղեցւոյն  
 ինքնօրինութեանը համար , որուն վրայ քննու-  
 պահան մասին մէջ կխօսուինք . բայց Հռովմայ  
 այնպէս հասկըցընող եղաւ որ հայերը Հռովմայ  
 չեն հնազանդիր նէ հերետիկոս ըլլալուն հա-  
 մար է : ուստի հայոց աղգէն ալ նոյն հնազան-  
 դութիւնը կպահանջուէր : Եւս ըսածիս հաս-  
 տատութիւն մ'ի յետագայ պատմութիւնը , զոր  
 առաջուց յիշուած հովհաննէս Սեղբոսեանին  
 վճռաբանական քննարկման ծախն թարգմանելով հոս  
 կըղրնեմք : « Բնենդիկաոս Եր . Հռովմայ  
 « հայրապետը՝ լոկ մոլորութեամբ գործոյ , եւ  
 « այնքան բազմութիւ յոյն եւ լատին մատենա-  
 « գիրներուն անտարակուսելիի պէս տուած վը-  
 « կայութիւններէն խաբուելով ճարտարն բա-

« ոով սկսած շրջաբերական կոնդակին մէջ սա  
 « խօսքերս գրած էր . — Բնենդիկաոս Եր .  
 « ծայրագոյն քահանայապետէն դատապարտուած  
 « մոլորութիւններուն՝ զորս հայոց մէջ գտեր  
 « էին , յիսուն եւ ութերորդն ( առ Ռայնալ-  
 « տեայ . յամս 1341 համար 66 ) այն կը-  
 « սեպուի որ կպնդեն եղեր թէ աղոց փրկու-  
 « թեան՝ եւ անոնց մատակարարուած մկրտու-  
 « թեան վաւերականութեանը համար դրոշմի  
 « խորհուրդէն զատ անոնց հաղորդութիւն ալ  
 « տալու է կըսեն \* . — Արքը երբ խմացաւ  
 « որ հայոց մէջ այս մոլորութեանս հետքն ալ  
 « չկայ , հրաման քրաւ որ երբ նոյն կոնդակը  
 « Հռովմ հայերէն տպուի՝ այդ խօսքը մէջէն  
 « վերնայ » : ( էր . 194 ) Արքան բաներու մէջ  
 « Հռովմայ հայրապետները եւ աստուածաբան  
 « վարդապետները ճշգրտեմք քրքոյ խաբուած  
 « են յունաց եւ խորդացեալ հայ ունիգորաց՝  
 « եւ անոնցմէ սորվելով նոյն խօսքերը կրկնող  
 « բուն լատին մատենագրաց ըսածներէն : Կըսուի  
 « թէ ամէնն ալ խաբուած եւ սուա կարծիքի մէջ

\* Հայը նոր մկրտելոց հաղորդութիւն ալ կու-  
 տան , բայց առանց հաղորդութիւն տալու եղած  
 մկրտութիւնը անվաւեր է ըսող չկայ , ամենքն ալ  
 գիտեն որ ասոնք երկուքն ալ զատ զատ խորհուրդ  
 են . եւ վաւերական ընելու համար երկու կամ ե-  
 րէք խորհուրդ իրար խառնելու հարկ չկայ :

եղած ըլլալին իմանալով՝ Ռենեդիկտոս Երկին  
պէս՝ իրենց սխալը ետ առնէին :

Մատթայան բառով սկսուած շրջաբերականին՝  
զոր հոս Անդրասեանը կը յիշէ, պատճառը հե-  
տեւեալն եղաւ : Պատրիարքարդիչը բարոյական-  
տայի հարցոց թէ հայերն եւ ասորիները լատին  
եկեղեցւոյ մէջ աստուածային պաշտօնը ի՞նչ ծէ-  
սով եւ արարողութեամբ կատարեն : եւ եթէ՝  
քարոզիչները կրնան արդեօք անոնց պահք օրե-  
քը ձուկ ուտելու հրաման տալ : Բարոյականտա  
տաօթին հարցմանը պատասխան տուաւ թէ նոր  
բան ընել պէտք չէ : այսինքն՝ անկէց առաջ  
Սատուածային պաշտօնն ի՞նչ լեզուով կրնէին  
նէ՛ նոյն լեզուով եւ նոյն ծէսով եւ արարողու-  
թեամբ կատարեն : որով՝ Հռովմէական հայոց  
գործածութեանը համար ունիգործներուն օրէն  
լատին ժամերգութեանց եւ պաշտամանց գրե-  
թու հայերէն թարգմանութեան գործադրու-  
թիւնը արգիլուեցաւ : Արկարդ հարցմանը պա-  
տասխան տրուեցաւ թէ քարոզիչներն այդպէս  
բաներու իշխանութիւն չունին : Ռենեդիկտոս  
Երկին . ալ այս վճիռը հաստատեց՝ 1755 յու-  
լիսի 2 թուականով՝ մատթայան բառով սկսուած  
շրջաբերականովը : Սօր վերջին հատուածին մէջ  
սա՛ խօսքս գրուած է . « չէ թէ միայն խնդիր-  
ներուն պատասխանելու համար, այլ եւ ամէ-  
նուն աղէկ մը հասկըցընելու համար թէ սուրբ  
աթոռը որքան սիրով կընդունի արեւելեան  
ուղղափառները, հրաման կուտայ այն հին ծէ-

սերն ամբողջ պահել՝ որ ուղղափառ հաւատոյ  
եւ եկեղեցական պարկեշտութեան չեն հակա-  
նակիր . վասն զի կաթուղիկէ միութեան եկող  
արեւելցիներէն չէ թէ ինչ ծէսերը ձգել » :  
հերետիկոսութենէն հեռանալ, եւ նոյնը ու-  
րանալ կը պահանջէ . մեծապէս ցանկալով որ այլ  
եւ այլ ազգերը (աղբային անփնաս տարբերու-  
թիւնները) չաւրուին, այլ մնան : Աւ որ-  
պէս զի երկար խօսքերնիս քիչով լմընցընմք,  
կուզեմք որ ամէնն ալ ուղղափառ ըլլան, այլ  
ոչ լատին : « Նոյն հոնդակին մէջ արեւելեան  
աղբաց խորհրդատետրերու վրայ խոսելով կը-  
սէ : « Մեծ, եւ ըստ խիբ շաիէն աւելի մը-  
տադրութիւն եղած է՝ յունական ծիսին բնաւ  
մէկ կերպով մը չգպչելու, այլ անձեռնամերձ  
եւ անթիբ ըր թողլու : »

Թողովներուն մէջէն բաւական կըսեցեմք  
Փլորենտեան ժողովոյն հետեւեալ խօսքը . « կը-  
սահմանեմք որ տեառն մերոյ Ռիսուսի Քրիստո-  
սի մարմինը ճշմարտապէս ցորենոյ հացին մէջ  
կը պարուծակի, թէ բաղօքը ըլլայ եւ թէ՛ խը-  
մորեալ . եւ քահանայնիրն ալ ասոնց որովն որ  
ըլլայ կըրնան սրբադործել, ամէն մէկն իր ա-  
րեւմտեան կամ արեւելեան եկեղեցւոյն ա-  
րարողութեանը համեմատ » : Թողովոյն այս  
զրուցուածքին մէջ՝ մեր նախընթաց գլխոյն մէջ  
մէկ ըսածը հաստատելու բան մը կայ . եւ այս  
է որ ըսինք հոն թէ երբեմն զրուցուածքի մը  
տակէ հերետիկոսական իմաստ մը կըրնայ ելլել .

այն ատենը խօսքին տուած իմաստը նայելու  
 չէ, թէ եւ ըստ բառից այն իմաստը ճիշտ ըլ-  
 լայ՝ այլ ըսողին անձնական հանգամանացը եւ  
 պարագայիցը նայելու՝ եւ ուղղափառութիւնը  
 կամ չարափառութիւնն անոր վրայ գատելու է։  
 Առթեր աղանդապետն՝ ՚ի սուրբ հաղորդութեան  
 Տեառն մերոյ մարմնոյ եւ արեան ճշմարիտ ներ-  
 կայութիւնը չէր կըրնար ուրանալ։ Տեառն մե-  
 րոյ խօսքերը շատ յայտնի էին, սակայն մէկդի-  
 են ալ իր զգայարանացը վկայութիւնը այս հա-  
 ւատոյս հետ միաբանելու կերպը չէր գիտեր։  
 Հացին ամէն որպիսութիւնները տէրունական  
 մարմնոյն վրայ կը տեսնէր. եւ չէր կըրնար խելք  
 ընել որ այն որպիսութիւններն ամէնն ալ պա-  
 տասհանրք են, որ իրենց սովորական ենթակայ  
 եղող գոյացութեանն կըրնան զատուիլ եւ ու-  
 բիշ գոյացութեան մը վրայ ըլլալ։ Աւստի կար-  
 ծեց թէ հացին գոյացութիւնը նոյն մնալով՝  
 Վրիստոսի տեսան մերոյ սուրբ մարմինն անոր  
 մէջ կ'պարունակի։ Հացին գոյացութիւնը չփոխ-  
 ուի՞ր՝ այլ կը մնայ, եւ Վրիստոսի մարմինն ա-  
 նոր հետ կը միանայ. որով գոյափոխութեան  
 վարդապետութիւնը կը տկարանար, եւ այս իրեն  
 մասնաւորանձոռնի գաղափարը նշանակելու հա-  
 մար էր քանակն ու բազմութեանը հնարեց. որ ճիշտ եւ բա-  
 ւական թարգմանութեամբ ներհասցանքն կը  
 թարգմանուի. այ ի՞նքն՝ հացին մէջն ըլլալ՝  
 Վրիստոսեան ժողովոյն ըսելն ալ թէ "Օր-  
 ոսուսի Վրիստոսի մարմինը ճշմարտապէս ցո-

որենոյ հացին մէջ կը պարունակի,, պարզ  
 տեսութեամբ Առթերի ըսածին պէս միտք մը  
 կուտայ\*. բայց այն նկատելու է որ այս ժողո-  
 վըս գումարուած ատենը Առթերի անտեղի եւ  
 նորալուր վարդապետութիւնը հնարուած չըլլա-  
 լուն համար ժողովոյն ըսածը ուղղափառական  
 մօք կը հասկըցուէր. ապէն ծուռ միտք ել-  
 լելէն կասկածելով զգուշանալու պատճառ մը  
 չկար։ Առթերէն եւ ուրիշ բողոքականներէն  
 ետքը աստուածաբաններն սկսան խօսքերուն  
 զգուշանալ, եւ ընդդէմս հասցի — սաս-  
 օքէ՛նէ քո՛նիս — Վրիստոսի ճշմարիտ մարմինը  
 կայ ըսել, որ այնպիսի ծուռ մեկնութեան տե-  
 ղի չտար. սակայն Վրիստոսեան ժողովն ալ՝ տա-  
 կէն մտորական իմաստ ելլելու խօսք խօսելուն  
 համար պարսաւող չեղաւ. միշտ լատին եկեղեց-  
 ւոյ տիեզերական ժողովներուն մէկն է։

Առանձնաբան կարգի աստուածաբաններէն  
 Սագրամնոս անուն հեղինակը իններորդ դարուն  
 մէջ վճռաբար ըսած է. «եկեղեցիներուն սո-  
 վորութիւնները միշտ իրարմէ տարբեր են,  
 ,, եւ երբէք չեն կըրնար միօրինակ ըլլալ,,  
 Աւ ըսածին վկայութիւն կառնու սրբոյն () գոս-  
 տինոսի առ Վսղուլանոս գրուած նամակէն։

\* Ժողովոյս գործոց լատին բնագիրը քովերնիս  
 չունիմք. բ՛րած խօսքերնիս գաղղիերէն թարգմա-  
 նութեան մ'առած ենք։

կարմեղական կրօնաւորաց մեծաւորներէն  
 մէկը՝ Թովմաս անունը արեւելք քարոզչութեան  
 համար գայող իր կարգի կրօնաւորներուն տը-  
 ուած հրահանգներուն մէջ ասալ կըսէ. « արեւ-  
 ,, ւելեան քրիստոնեայներուն հոգիները շահել  
 ,, ուզողներուն պէտք է նախ եւ առջ այն ազ-  
 ,, գին բնութեան եւ կենցաղով արելոյ կերպին  
 ,, համաձայնիլ, եւ հոգեոյ յաւիտենական փր-  
 ,, կութեան վրաս չքերոզ բաներուն զիջանիլ » :  
 Եւ քիչ մը ետքը կըսէ. « կրօնաւորներուն  
 ,, պէտք չէ որ արեւելեան քրիստոնեայներուն  
 ,, ծէսերն ու արարողութիւններն անտրգեն,  
 ,, այլ իրենցիկին պէս գովելի ցուցնեն խօս-  
 ,, քով եւ գործով » : Եւ ըսածներուն հակառակն  
 ընելով ի՞նչ արդիւնք գոյնալը ութիւններուն  
 վրայ կըցուցնէ՝ որ հոռովեական ոուս էին,  
 ըսոյց յունաց եկեղեցւոյ ծէսերն ու արարողու-  
 թիւնները չձգած չէին. « եւ լատին քարոզիչ-  
 ,, ներն իրրեւ օտար եւ իրենց թըշնամի կը  
 ,, տեսնէին » :

Ղոճինիկեան կարգէն Թովմաս Վգուինա-  
 ցին կայ. որ իր ժամանակէն մինչեւ հիմայ աս-  
 տուածարանութեան վարժապետ մը սեպուած  
 է. ամէն աստուածաբան անոր գրքերը կամ կը-  
 բօսմանդակեն կամ կընդարձակեն կամ կըմեկ-  
 նեն : Եւ կըպատմեն թէ Տէրն մեր անոր երե-  
 ւելով՝ իրեն համար շատ աղէկ գրելուն վկայի-  
 է. ուստի լատին աստուածաբաններն ասոր գը-  
 րածներուն մէջ իրենց մըտացը հակառակ բան մը

գտնեն նէ դիմախօսելու չհամարձակելով՝ մեկ-  
 նութիւններով իրենց կողմը քաշելու կաշխատին :  
 Եսիկայ՝ Բաղնիստիւնի Երոտանայի Բաղնիստի  
 քին մէջ կըսէ. « ինչպէս որ լատին եկեղեցիէն  
 ,, քահանայ մը խմորեալ հացով պատարագէ նէ  
 ,, կըմեղանչէ, նմանապէս յոյն քահանայ մ'ալ  
 ,, բաղարջով պատարագէ նէ կըմեղանչէ՝ իրրեւ իր  
 ,, եկեղեցւոյն ծէսը խանգարող » : Պլորենտեան  
 ժողովը՝ որ ասոր մահուանէն 165 տարի ետ-  
 քը գումարեցաւ, այսխօսքս իր վճիռներուն մէջն  
 անցուց եւ հա՛վմէակաւն եկեղեցւոյ հաստատ  
 վարդապետութիւն եղաւ : Եւ ինչ ծէսերուն հա-  
 մար ալ նոյնը կըհասկընամք :

Յսկոր Ասոր, որ յունաց եւթօլոյծօն — Բաղնի-  
 ստի — ըսուած Եստուածային պաշտամանց  
 Գիրքը լատիներէնի թարգմանեց եւ սպեց Բա-  
 ռիկ 1647 թուին, յառաջաբանութեանը մէջ  
 կըսէ. « եկեղեցիները թէ արեւելք թէ արեւ-  
 ,, մուտք՝ մէկ են : Եմենայնի արարիչ մէկ Ես-  
 ,, տուած մը միայն կըպաշտեն. իրարմէ միայն  
 ,, պաշտաման արտաքին ձեւով կըտարբերին : Եւ-  
 ,, ո կու եկեղեցիներուն մէջ ալ խոստովանեալ հա-  
 ,, ռատքին առարկայն միայն ամենաբարին եւ ամե-  
 ,, նամեծն Եստուած է : Երբեւելեան կամ արեւ-  
 ,, մըտեան հաւատացիոյ մը հարցուր թէ ինչի  
 ,, կըյուսայ եւ ինչի կըբախտաքի, պատասխան պի-  
 ,, տի տայ որ իր ակնկալութեան առարկայն է եր-  
 ,, ջանկութիւնը, որուն համար ծնած եւ մեծ-  
 ,, ցած՝ եւ մի եւ նոյն խորհրդոյ հաղուդ ըլլալով

,, կատարելութեան հասած է : Աթէ ըստ արտին-  
 ,, գերք յոյն եւ լատին եկեղեցւոյ կաթնուին  
 ,, նէ՛ գոյն եղանակաւ իրարմէ տարբեր ըլլալն  
 ,, ի՛նչո՛ւ զարմանք պիտի բերէ : Արհաւրէն մէջ  
 ,, ալ բաւերուն միտքը մի եւ նոյն աստուածա-  
 ,, յին պաշտօն կը յայանէ . զանազանութիւնը  
 ,, միայն բազից վրայ է : Աւրեմն յոյն իր եկե-  
 ,, ղեցոյն մէջ իր սովորութիւնները թող պահէ :  
 ,, լատինն ալ իրեններէն թող չհեռանայ : , յոյն  
 հեղինակը նոյն յառաջարանութեան մէջ թա-  
 թոնիոսէն առնելով ( Արեւից . Գրեթիթ . յաճ .  
 51 . համար . 58 ) կըսէ թէ նոյն իսկ Պօղոս  
 առարեալն երեք քարոզութիւն ըրած այլ եւ այլ  
 եկեղեցիներու մէջ այլ եւ այլ ծէս աւանդեց :

Պաւլոսները 1860 ին գեկա . 24 ին Աստ-  
 անալուպօլսի հոռվմէական հայոց նախագահ  
 Զատուեան Տ . Անտոն արքեպիսկոպոսին գրե-  
 ցին . « վստահ եմք՝ որ Զատվմայ սուրբաթոռոյն  
 ,, հետ միտքանած ասաննիս՝ մեր աստուածային  
 ,, պաշտամանց գրքերը եւ ծէսերը եւ արարողու-  
 ,, թիւնները եւ կրօնական սովորութիւնները՝ որ  
 ,, սուրբ հայրերէն սահմանուած եւ բարեպաշ-  
 ,, տութեամբ պահուած են , բնաւ չեն փոխուիր :  
 ,, ինչպէս որ Փլորենտեան ժողովը սահմանեց ,,  
 ,, Աստագահ արքեպիսկոպոսէն սն պատասխանը  
 կառնեն . « ձեր աստուածային պաշտամունքը  
 ,, եւ ծէսերը եւ կրօնական սովորութիւնները եւ  
 ,, արարողութիւնները որ սուրբ հայրերէն սահ-  
 ,, մանուած եւ մինչեւ մեր օրերը պահուած են ,

,, չէ թէ միայն անփոփոխ պիտի մնան , այլ եւ  
 ,, պիտի յարգուին , եւ նոր հաստատութիւն ալ  
 ,, պիտի գտնեն ,, : Այս նամակները կը գրա-  
 նուին Էրեստոսարասան Պաւլոս մակագրով 1861  
 թուին Փարիզ տղուած գրքին մէջ :

Չեմք կըրնար այս խօսքէն անդին անցնիլ  
 առանց մեր արտին կըսկիծը յայտնելու . որ  
 հայոց Խաչրատորքը եւ Տաշրոցը եւ ուրիշ ե-  
 կեղեցական գրքերը ըստ ըրողին այլափոխեալ  
 գործածած միջոցին նախագահ արքաղանը պուլ-  
 ղարներուն այդ արտօնութիւնը տալ կըխոսա-  
 նայ՝ որ եկեղեցական գրքերուն ոչ միայն չը-  
 դըպիւն , այլ եւ նոր հաստատութիւն գտնել  
 տայ : Անոր Աստուածային պաշտամանց գրքերը  
 պուլղարներունէն ի՛նչ տարբերութիւն ունին՝  
 որ երկուքն ալ յունականէն առնուած են . եւ  
 ինչո՛ւ համար մէկը կըփոփոխէ իւրեւ հերետի-  
 կոսական , եւ միւսը կընդունի իւրեւ օտար  
 հայրերէն սահմանած եւ ուղղափառական : Չկըր-  
 նար ըսել թէ ինքը այնպէս գտաւ եւ այնպէս  
 կերթայ . վասն զի գեղձմունքմը շիտկելը՝ իրեն  
 գերագոյն հովուապետութեան աստիճանին պար-  
 տականութիւնն է : Այս խորհրդածութիւնս  
 հոռվմէական հայազգի ժողովրդեան շատերուն  
 ալ միտքըն եկաւ եւ զայնթակեցան : Ար յիշեմք  
 այն ժամանակէն քանի մի պարզամիտ բայց խելացի  
 հոռվմէականներէ լսածնիս , որ կըսէին . թէ որ  
 այն արարողութիւններուն տարբերութենէն  
 հերետիկոսութիւն չծագիր նէ՛ հայոց եկեղեցին

ինչ յանցածք ունի . Արշիշեմբ Պալատիայի սուրբ Քրիչի եկեղեցին նոր շինուած՝ եւ Հաստանեայց եկեղեցիներու կերպով շիտուած տանը կաթոյիկ ժողովրդեան ուրիշ կերպ մէկ գայթակղութիւնը վարագոյր քործածելուն վերջ . զոր ոմանք՝ իրենք եկեղեցի չունեցած՝ եւ պատարագ տեսնելու համար լատինի եկեղեցիները երթալու սորված ըլլալով որ վարագոյր չունին , վարագոյրը թատրոնական վարագոյրներու նմանցընելու վարժուած էին . եւ կարգաւորին ալ մինչեւ այն ատենը զիրենք չէր խրատեր որ եկեղեցական արարողութեանց վերաբերեալ բաներն այսպէս անպատահ շմանութեամբ ծաղրելն առանց մեղաց չըլլար : Երբ որ եկեղեցի շինեցին նէ՛ որովհետեւ հայոց եւ ոչ լատինաց եկեղեցի պիտի շինէին , հարկ էր Հաստանեայց եկեղեցիներուն նմանցընելու համար վարագոյր ալ կատել . եւ այս մասին՝ ժողովրդեան գայթակղութեանը ակամջ չգրին , եւ խոհամութեամբ ալ անոնք լռեցուցին : Արող էին եւ միշտ կարող են՝ վերոյիշեալ պայտերուն եւ աստուածաբաններուն եւ ժողովներուն վճիռները ձեռք առնելով շիտկել եւ սրբապրել եւ ըստ ամենայնի հին կերպին վերածել եկեղեցական պաշտամանց եւ արարողութեանց եւ հրահանգաց գրքերը՝ զորս ունիւորները խանգարեցին . եւ անոնց յաջորդներն անով կը վարուին . եւ մի եւ նոյն ազգի երկու բաժիններու մէջ աեղը միջնորդ ըրած են :

Արեւելեան քրիստոնեայ ազգաց մասնաւոր ծէսերու եւ արարողութեանցը եւ սովորութեանցը չղպելու համար Հոովմէն այսբան եւ սոսպիտի վճիռներ կ'աւ ըլլալով ալ հոովմեական հայ կարգաւորներուն ստոր մտիկ չընելը եւ իրենց գիտցածին երթալը կը ցուցնէ թէ ժրբան հաւատարիմ հպատակ են Հոովմայ արթոյն : Ա՛րը պատմեցինք թէ Տննեղիկատս Ս՛ր . ին Պարայի քարագիշներուն բրած պատուէրը որ այն կողմի բնակիչներուն՝ թէ ստորի ըլլան եւ թէ հայ՝ պահք օրերը ձուկ ուտելու հրաման չտան : Եւ մեր ընթերցողը կը յիշեն որ մինչեւ հիմայ պահք օրը ձուկ ուտելը հոովմեականք իրեւ իրենց յատուկ շշան բրոնած են , ասիկայ ամենուն աչքին առաջը կեցած օրինակ մ'է :

Ասիկայ հերիք չսեպելով՝ արեւելեան եկեղեցեաց ծէսերը լիոխելու ալ ձեռք զարկին բայց ասոր համար հարկ սեպեցին Հոովմէն հըրաման առնելու : Բորախանտայի ժողովոյն գըրեցին 1865 թուին . եւ նոյն ժողովն ալ այս բանը դիւրացընելով խնդիր ընողները հաջեցընելու ձեռք զարկաւ : Ասիկայ կը պատմէ Ս՛ր գաղիական օրագիրը նոյն տարւոյ օգոստոս 14 թերթին մէջ , եւ կըսէ . “ սրբուհին , կատարինէ Պոլոնիացին ըսած է՝ որ հերձուածն ” այն ատենը որոշ կերպով կը յաղթուի՝ երբ ” լատին ծէսը գորութեամբ կը սահմանուի արեւուելը : Ս՛ր ընդ Հոովմէն եկած գրերէն կըսը-




, վիմք , որ Նորդականաայի ժողովը ժամանակէ  
 ,, մը 'ի վեր կը պարապի , արեւելցի' եւ յանուա-  
 ,, նէ հայազգի եպիսկոպոսներուն ինդրովը՝ որ  
 ,, գրեթէ միշտ այս անցքը իրենց ազդին մի-  
 ,, ութեան պայման մը կը դնեն , արեւելեան  
 ,, ծէսէն լատինականին անցնիլը գիւրացընե-  
 ,, լու : 1853 թուին Վէնէտիկ իտալերէն  
 տեսքով մը հրատարակուեցաւ , որուն մակա-  
 գիրն է այս . Ս'ի ինքեանն սուրբ Վաչարա մակ-  
 գրեւ իրեն դեմ Վէնէտիկ ինքեանն ինչ որ ստու-  
 ժուեցանքն բողոքը : Ասոր մէջ հանդուցեալ շիւ-  
 րօ արքեպիսկոպոսին մէկ ծանուցագիրը կայ ,  
 որուն մէջ կըսէ . " բրօքականաայի գործակալ-  
 ,, ներէն մէկ քանին" պաշարուած են 'ի նպատա-  
 ,, հայ նախագահին , եւ ընդդէմ կրօնաւորաց  
 ,, եւ յատկապէս Ս'ի ինքեանն անոր հակա-  
 ,, սակ ընելու առաջարկութիւններուն , , ( եր  
 75 ) : Եւ Վէնէտիկ նոյն պարսաւագրորին  
 դէմ հայերէն տպուած գրքէն ալ գիտեմք որ  
 նախագահ արքեպիսկոպոսին կամքը հայոց եկե-  
 ղեցւոյ ծէսերը խախտելու եւ լատին ծէսերը աւել  
 է իր իշխանութեան տակն եղած եկեղեցեաց  
 մէջ , թէ եւ Հոռովայ երեւելի գիտնականնե-  
 րը եւ աստիճանաւոր անձինք ասոր դէմ էին :  
 Մենք այս լուրերն առնուած ժամանակէն 'ի  
 վեր կը գուշակէինք թէ ջանքը պարապ պիտի  
 ելլէ , որովհետեւ մեզի այնպէս կիրուէր որ  
 Հոռովայ եկեղեցին 'ի սկզբանէ հետէ հաստա-  
 տուն բըռնած եւ գործադրած սկզբունքն աւ-

րելով արեւելեան եւ արեւմտեան եկեղեցեաց  
 մէջ նոր շփոթ եւ գծաութիւն չպատճառեր :  
 Վաչարա կուսիւններնու չսխալած ըլլալուն մէկ  
 նշանն էր այն՝ որ վերջիշեալ 1853 թուակա-  
 նէն մինչեւ 1855 , այդ բանին մէկ արդիւնքը  
 չերեւեցաւ : Աւելի հաստատութիւն գտնելու  
 վրայ է այս մօտ ժամանակներս . թէ որ ստոյգ  
 է լրսածնիս՝ որ նախագահ արքեպիսկոպոսը Վի-  
 ճբանանու կաթողիկոս ըլլալէն ետքը զիտաւո-  
 րութիւն ունեցեր է իր վարդապետներուն վե-  
 ղար հազցընելու . որով Հայաստանեայց եկե-  
 ղեցւոյ ծէսերն ու սովորութիւնները լատինա-  
 կանի փոխելուն տեղը՝ մէկ սովորութիւն մ'ալ  
 առաջուց մնացածին վրայ աւելցընելու կամք ու-  
 նեցեր է : Այսպիսի կամաց փոփոխութիւն մը  
 գուշակել կուտայ՝ որ Հայաստանեայց եկեղեց-  
 ւոյ ծէսերն ու սովորութիւնները հաստատուն  
 պահելու յատուկ հրաման եղած է իրեն՝ Հոռմ  
 գըտնուած ժամանակը . գուցէ Վիլիկիոյ կա-  
 թողիկոսութիւնն ալ այն պայմանով առած ըլ-  
 լայ : Արիւսաբերմը որ այսպիսի բաները մինակ  
 զգեստուց եւ արտաքին ձեւերու վրայ չկայա-  
 նայ . կաթողիկ ժողովորդեան մտքին մէջ ունի-  
 դորներուն ժամանակէն մնացած նախապաշարու-  
 մը՝ որով ազգին մեծագոյն մասը հերետիկոս  
 կանուանեն՝ վերցուի : Բայց ասոր շատ յոյս  
 չունիմք , քանի՛ որ եկեղեցիական բողոք-  
 արարներ կ'ելլէ մէջերին :

Մանաւանդ երբ կըտեսնեմք որ արեւելք

պարտող լատին միսիօնարները՝ որոց պաշտօնն  
է եւ պիտի ըլլայ Հոռոմայ աթոռոյն լճիւնե-  
րը յարգել աալը, տակաւին հոռոմեական ե-  
կեղեցին մանող հայոց կպատահին որ կաթու-  
ղիկէ սուրբ հաւատոյ միութեան հետեւին ւ լա-  
տինական արարողութեամբ եւ ծիսով ւ, եւ ա-  
սոր համար ալ յատուկ գիր մը գրեն բրօքական-  
տայի ժողովրին՝ ինչպէս սր Արքու Վասգել-  
լի՝ Մարկիանուսոյսի արքեպիսկոպոս եւ Մեր-  
տինու քարագիչ 1867 յուլիսի 26 թուականով՝  
Այտորոս անուն հայ վարդապետի մը կը գրէ՝ որ  
Հոռոմայ եկեղեցւոյն հետ միանալ ուզած էր։  
Զգիտեմք թէ բրօքականտայի ժողովը վերջի-  
շեալ հայրսպետներուն եւ վարդապետներուն ը-  
սածն աչքին առաջն ունենալով կը ընեն մի որ  
հայ հոռոմեականները լատին ծիսով եւ արա-  
րողութեամբ վարուին, եւ չը՞հասկընար սր-  
գեօք որ ազգին դայթակող'ցուցիչ բան մըն է  
ասիկայ։



2013

4607

605

609

<< Ազգային գրադարան



NL0031966

4607

